

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ**

**ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒ. Մ., ՍԱՐԳՍՅԱՆ Վ. Ա.,  
ՍՈՒՎԱՐՅԱՆ Ա. Ս.**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

**МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ  
ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ**

**METHODOLOGICAL PROBLEMS OF  
PUBLIC MANAGMENT**

**ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2019**

ՀՏԴ 338:351

ԳՄԴ 65.05+67.401

Ս 960

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի  
որոշմամբ և ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստի-  
տուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Պատ. խմբագիր՝ տ.գ.դ., պրոֆ. Ա. Թավադյան  
Գրախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ. Ա. Խառատյան,  
տ.գ.դ., պրոֆ. Ա. Սալնազարյան:

Ս 960      Յու. Մ. Սուվարյան, Վ. Ա. Սարգսյան, Ա. Ս. Սուվարյան. Հան-  
րային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրներ/- Եր.:  
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 239 էջ:

Գրքում դիտարկվել են տնտեսական զարգացման և քաղաքական  
ինստիտուտների փոխառնչությունները, ՀՀ տնտեսական ռազմավարու-  
թյան հնարավոր գերակայությունները, ՀՆԱ-ի շարժընթացի վրա գիտա-  
կրթական համակարգի ազդեցության գնահատման մեթոդաբանությունը:  
Առաջարկվել են հանրային կառավարման արդյունավետության և տնտե-  
սական ու սոցիալական զարգացման վրա նրա ներգործության գնահատ-  
ման և օպտիմալացման մեթոդաբանական լուծումներ:

Առանձնակի կարևորվել են հայ մտածողների աշխատություննե-  
րում հանրային կառավարման վերաբերյալ արդիական հնչեղություն  
ունեցող գաղափարները, հին և միջնադարյան Հայաստանում հանրային  
կառավարման ու սահմանադրականության առանձնահատկությունները  
և պատմության դասերը:

ISBN 978-5-8080-1399-5

© Սուվարյան Յու. Մ., 2019

© Սարգսյան Վ. Ա., 2019

© Սուվարյան Ա. Ս., 2019

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	9
-------------------	---

### Գլուխ 1.

#### Տնտեսության հանրային կառավարման հիմնախնդիրներ

1.1. Տնտեսական զարգացումը և քաղաքական ինստիտուտները.....	12
1.2. Տնտեսական զարգացման որակական բնութա- գրիչները և գերակայությունները.....	28
1.3. ՀՀ համախառն ներքին արդյունքի ծավալի և աճի տեմպի վրա գիտության ու կրթության ազդե- ցության գնահատումը.....	50
1.4. Նորամուծական ներուժի գնահատման մեթոդա- բանությունը.....	68

### Գլուխ 2.

#### Հանրային կառավարման արդյունավետության գնահատման հիմնախնդիրներ

2.1. Հանրային կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը.....	93
2.2. Տնտեսական ու սոցիալական զարգացման վրա հանրային կառավարման ազդեցության գնահատման մեթոդաբանությունը.....	121

### Գլուխ 3.

#### Հանրային կառավարման հիմունքները հայ մտածողների աշխատություններում

3.1. Հին և միջնադարյան Հայաստանում սահմանա- դրականության և հանրային կառավարման մա- սին: Պատմության դասերը.....	149
3.2. Մարդու և առաջնորդի կերպարը Ն. Շնորհալու «Թուղթ ընդհանրականում».....	172
3.3. Միքայել Նալբանդյանը հանրային կառավարման հիմնախնդիրների մասին.....	189
Ամփոփում.....	205
Резюме.....	215
Summary.....	223
Օգտագործված գրականություն.....	230

## СОДЕРЖАНИЕ

Введение.....	9
---------------	---

### Глава 1.

#### Проблемы общественного управления экономикой

1.1. Экономическое развитие и политические инсти- туты.....	12
1.2. Качественные характеристики и приоритеты экономического развития.....	28
1.3. Оценка влияния науки и образования на объем и динамику роста валового внутреннего продукта в РА.....	50
1.4. Методология оценки инновационного потенциала.....	68

### Глава2.

#### Проблемы оценки эффективности общественного управления

2.1. Методология оценки эффективности обществен- ного управления.....	93
2.2. Методология оценки влияния общественного управления на экономическое и социальное раз- витие.....	121

**Глава3.**  
**Основы общественного управления в трудах**  
**армянских мыслителей**

3.1. О конституционности и общественном управлении в древней и средневековой Армении. Уроки истории.....	149
3.2. Образы человека и лидера в произведении Нерсеса Шнорали “Соборное послание”.....	172
3.3. М. Налбандян о проблемах общественного управ- ления.....	189
Резюме (на армянском языке).....	205
Резюме.....	215
Summary.....	223
Использованная литература.....	230

## CONTENT

Introduction.....	9
-------------------	---

### **Chapter 1.**

#### **Problems of public management of economy**

1.1. Economic development and political institutions.....	12
1.2. Qualitative characteristics and priorities of economic development.....	28
1.3. Estimating the Impact of science and education on Gross Domestic Product in RA and growth rate.....	50
1.4. Methodology for innovation potential assessment.....	68

### **Chapter 2.**

#### **Problems of evaluating public administration effectiveness**

2.1. Methodology for evaluation of public administration effectiveness .....	93
2.2. Methodology for public administration impact assessment on economic and social development.....	121

### **Chapter 3.**

#### **Fundamentals of Public Management in the works of Armenian thinkers**

3.1. About constitutionalism and public governance in ancient and medieval Armenia: lessons from history.....	149
3.2. The image of man and leader in "General Paper" by N.Shnorhali.....	172
3.3. M. Nalbandyan about public administration problem ...	189
Summary (in arm).....	205
Summary (in rus.).....	215
Summary (in eng).....	223
Literature.....	230



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ ճշմարտություն է՝ հասարակական-քաղաքական ամուր համակարգը և գիտելիքի վրա հիմնված տնտեսությունն են այն հիմնական գործոնները, որոնք ապահովում են յուրաքանչյուր երկրի միջազգային ու մրցակցային բարձր հեղինակությունը, ռազմավարական հզորությունը և ժողովրդի պատշաճ բարեկեցությունը: Պարզվում է, որ այդ երկու գործոնների լիարժեք ապահովման գործում վիթխարի է հանրային կառավարման նշանակությունը, քանի որ այն ընդգրկում է հասարակական-տնտեսական կյանքի բոլոր ոլորտները՝ կրթությունից մինչև տնտեսություն, երկրի ներքին և արտաքին քաղաքականություն, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացում ու զարգացում, պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգեր: Անշուշտ, հանրային կառավարման մարմինները սուբյեկտներ են, հանրային ոլորտները և կազմակերպությունները՝ օբյեկտներ, սակայն դրանց միջև փոխառնչությունները և փոխազդեցությունները շատ դինամիկ են ու հարափոփոխ: Օրինակ, քաղաքացիական հասարակության ինստիտուտները՝ քաղաքական կուսակցությունները, մամուլի միջոցները, ժողովրդավարական եղանակներով ներագրում, անգամ ձևավորում են իշխանության մարմինները, վերջիններս էլ իրենց որոշումներով պայմանավորում են այդ ինստիտուտների գործունեության հնարավորությունները և շրջանակները: Հատկապես նոր հանրային կառավարման պայմաններում էական է ազդեցությունը մակրո և միկրոմակարդակներում վարվող տնտեսական քաղաքականության վրա:

Հաշվի առնելով հանրային կառավարման ընդգծված և աճող նշանակությունը հասարակական-տնտեսական զարգացման ասպարեզում՝ սույն հետազոտության մեջ հատկապես կարևորվել են մեթոդաբանական բնույթի հարցերը, մասնավորապես կառավարման արդյունավետության, սոցիալ-տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատման և օպտիմալացման համեմատաբար քիչ ուսումնասիրված ու չլուծված հիմնախնդիրները: Համախառն ներքին արդյունքի ծավալի և աճի տեմպի վրա գիտության ու կրթության ազդեցության և նորամուծական ներուժի գնահատման մեթոդաբանական հիմնախնդիրները, որոնք նույնպես ըստ պատշաճի դիտարկվել են, ունեն էական գիտագործնական նշանակություն:

Առանձնակի կարևորվել են քաղաքական ինստիտուտների և տնտեսական զարգացման փոխառնչությունները, վերջինիս որակական բնութագրիչները և գերակայությունները:

Ուշագրավ է, որ հայ մտավոր մշակույթում մշտապես անդրադարձել են հանրային կառավարման հիմնախնդիրներին, որոշ լուծումներ գործադրել հին և միջնադարյան Հայաստանի պետական ու տարածքային կառավարման համակարգերում: Այդ առումով ուշագրավ գաղափարներ և ուսանելի փորձ կամ պատմության դասեր կան, որոնք այսօր էլ արդիական են, և հարկ է հաշվի առնել պետականաշինության խնդիրները լուծելու գործընթացներում: Ելնելով ժողովրդավարության, ազգերի ինքնորոշման իրավունքի և տնտեսական զարգացման վերաբերյալ հարցադրումների արդիականությունից ու կարևորությունից՝ մենագրությունում տեղադրվել է «Մ. Նալբանդյանը հանրային կառավարման հիմ-

նախնդիրների մասին» ուսումնասիրությունը, թեև այն ներառվել էր նաև 2013 թ. լույս ընծայված «Հանրային կառավարման տեսություն և պատմություն» աշխատությունում:

Առաջնորդմանը՝ իբրև հանրային կառավարման կարևոր հիմնախնդրի, նվիրված է «Մարդու և առաջնորդի կերպարը՝ Ն. Շնորհալու «Թուղթ ընդհանրականում» հատվածը: Չափազանց հետաքրքիր են Ն. Շնորհալու՝ առաջնորդների վարքագծի վերաբերյալ սերունդներին ավանդած պատվիրանները, որոնք XX դարում ստեղծված առաջնորդման գանազան տեսություններում կարևորվում են իբրև արդյունավետ առաջնորդման էական չափանիշներ:

Այսպիսով, առանձին ուսումնասիրությունների արդյունքներով հրապարակված հոդվածների միավորմամբ ընդհանրացվում են հանրային կառավարման մեթոդաբանական արդի հիմնախնդիրները՝ իբրև մի ամբողջություն:

Աշխատության ներածությունը, 1.1, 1.2, 3.1 հատվածները և ամփոփումը շարադրել է տ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյանը, 1.3, 1.4 հատվածները և երկրորդ գլուխը՝ Յու. Մ. Սուվարյանը և տ.գ.դ., պրոֆ. Վ. Սարգսյանը, 3.2, 3.3 հատվածները՝ Յու. Մ. Սուվարյանը և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ս. Սուվարյանը:

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում Ալինա Մելքունյանին՝ գրքի տեքստի հրատարակության նախապատրաստման և մատենագիտական սիրահոծար աշխատանքի համար:

## ԳԼՈՒԽ 1.

### ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

#### 1.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

#### Ներածություն

Տնտեսական զարգացումը պայմանավորող գործոնները բազմաբնույթ են ու մեծաթիվ, սակայն քննական վերլուծություններում պակաս չափով է կարևորվել դրանցից կարևորագույնը՝ քաղաքական ինստիտուտների նշանակությունը:

Ուսումնասիրության շարժառիթը Դ. Աճեմօղլուի և Ջ. Ռոբինսոնի հեղինակած «Ինչու են որոշ երկրներ հարուստ, իսկ մյուսները՝ աղքատ»<sup>1</sup> աշխատությունն է: Այն հարուստ է աշխարհի տարբեր երկրների վերաբերյալ փաստական նյութերով ու հետաքրքիր ընդհանրացումներով, որոնք գերազանցապես վերաբերում են տնտեսական զարգացման և քաղաքական ինստիտուտների փոխառնչություններին: Հիմնավորվում է այն առանցքային գաղափարը, որ քանի դեռ քաղաքական ինստիտուտները գերակտիվ են, չի կարող ապահովվել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ, որովհետև նրանք կենտրոնացնում են իշխանությունը էլիտայի

---

<sup>1</sup> St' u Аджемоглу Д., Робинсон Дм. А. Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., изд.-во АСТ, 2016, 693 էջ:

ձեռքում, ձևավորում համապատասխան տնտեսական ինստիտուտներ, որոնք իրագործում են իշխող էլիտային ձեռնընտրու տնտեսական քաղաքականություն<sup>2</sup>:

Հեղինակներն արդի աշխարհի որոշ երկրների տնտեսական ու քաղաքական կործանման դեմ պայքարի դեղատոմսը համարում են գերակտիվ քաղաքական ինստիտուտների վերափոխումը ներառականի (инклюзивные)<sup>3</sup>: Ներառական են համարվում այն քաղաքական ինստիտուտները, որոնց միաժամանակ բնորոշ են և՛ բազմակարծությունը, և՛ կենտրոնացվածությունը<sup>4</sup>: Նման ինստիտուտները, ըստ հեղինակների, իշխանությունը վերապահում են անձանց լայն շրջանակի և կանխում գերակտիվ տնտեսական ինստիտուտների ստեղծումը՝ իրենց գործունեության վերը նշված բացասական դրսևորումներով: Անշուշտ, դիտարկվող համատեքստում իբրև սուբյեկտներ են ավտորիտար և ժողովրդավարական երկրները, որոնցից առաջիններում իշխող է մեկ հզոր քաղաքական ինստիտուտ կամ էլիտա<sup>\*</sup>: Սակայն, վերը նշված դրույթները, մեր համոզմամբ, լրացուցիչ մեկնաբանության կարիք ունեն՝ հաշվի առնելով տարբեր երկրներում քաղաքացիական հասարակության և քաղաքակրթական զարգացման աստիճանը, ստեղծված օրենսդրական դաշտը, մանավանդ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության փոխհարաբերությունների և զսպումների կառուցակարգերի մակարդակը, առկա ռեսուրսներն ու պետական կառավար-

---

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 114:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 533:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 114:

<sup>\*</sup> Այս հիմնախնդիրներին անդրադարձ է կատարվում նաև գրքի 2.2 հատվածում:

ման և ազգային ավանդույթները, կրթության, գիտության, տնտեսության զարգացման աստիճանը և ինտեգրման միտումները:

### **Արդյո՞ք որոշիչ է քաղաքական ինստիտուտների դերը տնտեսական զարգացման համար**

Հայտնի է, որ տնտեսությունը մարդը ստեղծել է իրեն կենսամիջոցներով և անվտանգային առարկաներով ապահովելու համար, իսկ այնուհետև՝ ավելցուկը վաճառելու, ավելի ուշ՝ արտադրված ապրանքները իրացնելու և շահույթ ստանալու նպատակով, իսկ պետության ձևավորմանը զուգընթաց կայացել է յուրաքանչյուր երկրի տնտեսությունը: Այս ամենը կատարվել է առանց ժամանակակից քաղաքական ինստիտուտների համալիրի, որոնք ձևավորվել են քաղաքացիական հասարակության սկզբնավորման ու կայացման (18-19-րդ դարեր) և այնուհետև զարգացման (20-րդ դար) արդյունքում: Այստեղ հարկ է ընդգծել մի կարևոր բացառություն, այն, որ պետությունը՝ իբրև քաղաքական ինստիտուտ, ստեղծվել է մարդկային քաղաքակրթության կազմավորմանը զուգընթաց, սակայն հիմնականում կրել է ժառանգական միապետության բնույթ, և, անշուշտ, այն ներառական չէր: Իսկ մինչ այդ համալիրի կայացումը 1776 թ. իր հանրահայտ «Ժողովուրդների հարստության պատճառների և բնույթի մասին հետազոտություններ» աշխատության մեջ Ադամ Սմիթը հռչակել է «անտեսանելի ձեռքի» սկզբունքը՝ հիմք դնելով լիբերալ տնտեսագիտական ուսմունքին, որտեղ տնտեսական զարգացման օբյեկտիվ շարժառիթներ են պահանջարկը, որին հետևում է առաջարկը, և, անշուշտ, բաղձալի շահույթը:

Ի դեպ, մինչև Ա. Սմիթի գաղափարի հանրահռչակումը, այսօր էլ, ապագայում նույնպես դրանք անփոփոխ են:

Առաջադրված հարցը լուսաբանելու համար կարևոր է հիշել պետության ստեղծման և նրա գործառույթների որոշ դրվագներ, մանավանդ այն գլխավոր քաղաքական ինստիտուտն է:

Հայտնի են պետության անհրաժեշտության ու ծագման աստվածաբանական (Թ. Աքվինացի), բնական, իրավական, դաշինքային (Ջ. Լոկ, Ժ. Ժ. Ռուսո, Պ. Հոլբաքս) մեկնաբանություններ<sup>5</sup>:

Պետության անհրաժեշտության և ծագման բնական-իրավական և դաշինքային տեսության կողմնակիցներն այդ ինստիտուտի անհրաժեշտությունը բացատրում են նրանով, որ մարդիկ կնքում են հասարակական դաշինք, որով սահմանվում են բոլորի համար ընդհանուր կանոններ ու պայմաններ, պաշտպանվում են անձը և նրա սեփականությունը, միաժամանակ նախատեսվում են ընդհանուր կանոնները խախտելու համար պատասխանատվության եղանակներ: Ուշագրավ է, որ Թ. Հոբսը գտնում էր, որ մարդն իր էությանը չար էակ է, այդ պատճառով մարդկանց միջև ծավալվում է անվերջ պայքար «Բոլորի դեմ բոլորի պատերազմ» սեփականության, ազդեցության ոլորտների համար, ինչը կանխելու նպատակով էլ ստեղծվել է պետությունը: Նա պետության բացարձակ իշխանությունը դիտում էր որպես խաղաղության երաշխիք և բնական իրավունքների իրագործման միջոց:

Հայտնի է նաև պետության ծագման օլիգարխիական տեսությունը, ըստ որի մարդիկ տարբերվում են մտավոր և

---

<sup>5</sup> См' u Теория государства и права, М. Зерцало. М, 2001, էջ 51-98, Чиркин В. Е., Государственное управление, М. Юрист, 2001, էջ 23, 24:

ֆիզիկական կարողություններով, սեփականության չափերով, ուստի բնական անհավասարության հետևանքով տեղի է ունենում մարդկանց որոշակի աստիճանակարգում, առաջանում է էլիտար խավ, որը ղեկավարում է ամբողջ հասարակությունը: Այդպես ձևավորվել է օլիգարխիայի իշխանությունը՝ որպես պետական իշխանություն: Վերջին մեկնաբանությանը համահունչ ձևավորվել են միապետությունները կամ ազնվականական պետությունները, որոնք մեծ մասամբ, ըստ քաղաքական ռեժիմի, որակվել են բռնակալական: Ի դեպ, ժամանակակից քաղաքագիտության մեջ քաղաքական ինստիտուտների ծագումը բացատրվում է նույն գործոններով, որոնք կարևորել է Թ. Հոբսը: Նա քաղաքական ինստիտուտներ համարում էր պետական իշխանության մարմինները և այն կազմակերպություններն ու կառույցները, որոնց գործունեությունը թույլատրվում էր պետության կողմից<sup>6</sup>: Քաղաքական ինստիտուտների բազում բնորոշումներից առավել ընդհանրականը և ճշգրիտը, մեր կարծիքով, բերվում է ստորև. քաղաքական ինստիտուտները մարդկանց խմբերի միջև ձևայնացված համաձայնություններն են, որոնց վարքը կարգավորվում է հստակ սահմանված կանոններով և որոշումների ընդունման գործընթացով, ինչն ապահովվում է առանձին անհատի կամ նրանց խմբի լիազորություններով, այսինքն՝ ձևականորեն օժտված իշխանությամբ<sup>7</sup>: Ի լրումն Թ. Հոբսի տեսության, ներկայումս քաղաքական ինստիտուտներ են պետությունը, նրա գործունեության հետ առնչվող կառույցները, ինչպես նաև ոչ պետական կազմավորումները՝ կու-

---

<sup>6</sup> Տե՛ս Политология, М., изд-во Проспект, 2005, էջ 235:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 238:



սակցությունները, ընդհանուր շահերի հիմունքներով ստեղծված խմբերը, սոցիալական շարժումները: Իսկ կուսակցությունների կազմավորման սկիզբ ընդունված է համարել XVII-XVIII դարերը, երբ ձևավորվեցին այդպիսի քաղաքական կառույցներ Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում<sup>8</sup>: Այնուհետև քաղաքացիական հասարակության կայացմանը զուգընթաց ձևավորվել են ժամանակակից ժողովրդավարական-իրավական պետությունները: Մասնավորապես Մեծ Բրիտանիան 18-րդ դարի սկզբից սահմանադրական միապետությունից դարձել է պառլամենտական միապետություն, որտեղ բարձրագույն գործադիր իշխանությունը փաստորեն պատկանում է կառավարությանը, իսկ այն կազմված է ընտրություններում հաղթանակ տարած կուսակցության անդամներից: Ֆրանսիայում միապետության փոխարեն առաջին անգամ հանրապետություն է հռչակվել 1792 թ., հինգերորդ անգամ՝ 1958 թ., ԱՄՆ-ում ստեղծվել է ֆեդերալ հանրապետություն 1787 թ.: Բիհարկե, միապետությունների ժամանակաշրջանում, հատկապես եվրոպական երկրներում, տեղի է ունեցել տնտեսական զարգացում, սակայն արդյունաբերական երեք հեղափոխությունները՝ մեքենայացում, ստանդարտացում, հոսքային գծերի ստեղծում, իրագործվել են 19-20-րդ դարերում Անգլիայում և ԱՄՆ-ում, չորրորդ հեղափոխությունը նույնպես սկզբնավորվել է ԱՄՆ-ում: Նշված հեղափոխությունները, որոնք էականորեն նպաստել են աշխարհում տնտեսական և սոցիալական առաջընթացին, առաջին հերթին գիտակրթական համակարգի զարգացման, նաև՝ քաղաքակրթական միջինից բարձր մակարդակի արդյունք էին,

---

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 265, 266:

միաժամանակ տնտեսական ծավալվող մրցակցությունը ստեղծում էր նորամուծական արագ վերելքի անհրաժեշտություն, ինչի շնորհիվ գիտության, բարձր որակավորման մասնագետների հանդեպ պահանջարկը արագ թափով աճում էր: Այդ միտումները շարունակվեցին 20-րդ դարի ընթացքում, դրանք բնորոշ են նաև 21-րդ դարին:

Բերենք այս դրույթը հաստատող որոշ տեղեկություններ համաշխարհային գիտության զարգացման պատմությունից, որոնց աղբյուրը «100 խոշոր գիտական հայտնագործություններ» կոլեկտիվ աշխատությունն է<sup>9</sup>: Սույն հետազոտության տրամաբանությամբ առաջնայինը գիտության և հասարակական-տնտեսական կյանքում վիթխարի նշանակություն ունեցած հայտնագործությունների բովանդակության լուսաբանումը չէ, այլ այն, թե որտեղ և երբ են դրանք կատարվել: Ստորև բերվող աղյուսակում նշված խոշոր հայտնագործությունները կատարվել են քաղաքակրթական համապատասխան մակարդակ ունեցող երկրներում թե՛ հին, թե՛ միջնադարյան և թե՛ ժամանակակից աշխարհում:

Տնտեսական և գիտատեխնիկական մրցակցության մեջ հաղթում էր և է մարդկային քաղաքակրթության գանձարանում ավելի շատ ավանդ ներդրած երկիրը: Տնտեսական զարգացումը, բացի վերը նշվածից, անշուշտ, ենթադրում է նաև հանքահումքային ռեսուրսներ, բնակլիմայական նպաստավոր պայմաններ, ապրանքների և ծառայությունների վաճառքի շուկաներ: Դրանով էր պայմանավորված հզորացող

---

<sup>9</sup> Տե՛ս «100 великих научных открытий». Харьков, 2018, 188 էջ:

**Աղյուսակ**

**Մարդկային քաղաքակրթության որոշ ուղենիշային  
հայտնագործություններ**

№	Հայտնագործությունը	Երկիրը	Տարեթիվը	Հեղինակը (ները)
1.	2	3	4	5
	Պղինձ, բրոնզ	Հին Հունաստան	Մ.թ.ա. III հազ.	
2.	Երկաթ	Եգիպտոս, Շումեր	Մ.թ.ա. II հազ.	
3.	Պյութագորի թեորեմը	Հին Հունաստան	Մ.թ.ա. VI- V դդ.	Պյութագոր
4.	Հիդրոստատիկայի հիմնական օրենքները	ա) Հին Հու- նաստան բ) Ֆրանսիա	Մ.թ.ա. 287- 212 թթ. 17-րդ դար	Արքիմեդ Բ. Պասկալ
5.	Էլեկտրականություն	ա) Հին Հունաստան բ) ԱՄՆ	Մ.թ.ա. VII դար 18-րդ դար	Ֆ. Միլետոսկի, Բ. Ֆրանկ- լին, Ռ. Միսմեր
6.	Շարժման օրենքները	Անգլիա	1667 թ.	Ի. Նյուտոն
7.	Տիեզերական ձգողության օրենքը	Անգլիա	1666 թ.	Ի. Նյուտոն
8.	Նյութի կառուցվածքի մոլեկուլյար տեսությունը	Իտալիա	1814 թ.	Ա. Ավոգադրո
9.	Քիմիական էլեմենտ- ների պարբերական օրենքը	Ռուսաստան	1869 թ.	Դ. Մենդելեև
10.	Ռենտգենյան ճառագայթում	Գերմանիա	1896 թ.	Վ. Գ. Ռենտգեն
11.	Քվանտային տեսություն	Գերմանիա	1896 թ.	Մ. Պլանկ
12.	Հարաբերականության ընդհանուր և հատուկ տեսություն	Գերմանիա, ԱՄՆ	1915-1916 թթ.	Ա. Էյնշտեյն
13.	Ինսուլին	Կանադա, Տորոնտոյի համալսարան	1921-1923 թթ.	Բանտինգ, Մակլենդ
14.	Պենիցիլին	Անգլիա	1928-1941 թթ.	Ա. Ֆլեմինգ, Է. Չեյն, Ու. Ֆլորի

երկրների մրցավազքը 18-19-րդ դարերում նոր տարածաշրջաններ, հատկապես ռեսուրսաշատ, գրավելու, ազդեցության գոտիներն ընդլայնելու համար: Նույնպիսի պայքար ծավալվել է 20-րդ դարում, այն շարունակվում է նաև 21-րդ դարում, սակայն ազդեցության ոլորտներ ձեռք բերելու ուժային ձևերը լրացվում են «փափուկ ուժի» ներգործության եղանակներով: Ընդհանրացնելով այս հատվածը՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական ինստիտուտները, թեև կարևոր, սակայն միակ գործոնը չեն տնտեսական զարգացում ապահովելու համար: Մանավանդ, ինչպես ապացուցում է պատմությունը, ժողովրդավարությունը հաղթում է առավել քաղաքակիրթ երկրներում: Հիշենք Մ. Նալբանդյանի հանճարեղ դիտարկումը, որ միայն ներքին ազատությամբ օժտված քաղաքացիները կարող են ձևավորել ժողովրդավարական իշխանություն, եթե անհատի մեջ չկա «բռնության և անօրեննության տարրը»<sup>10</sup>:

Ի թիվս նշված գործոնների՝ հարկ է կարևորել նաև անհատների դերը պատմության մեջ. մի օրինակ միայն՝ սինգապուրյան հրաշքի հեղինակը այդ երկրի երկարամյա ղեկավար Լի Կուան Յուն է, որը ստեղծել է կառավարման արդյունավետ համակարգ և հրաշալի ավանդույթներ: «Պատմությունը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ սովորական և բարեմիտ հաշվարկները կարող են փոխվել գերարտասովոր և կարկառուն անհատների կողմից», - գրել է Հ. Քիսինջերը Իս.

---

<sup>10</sup> Տե՛ս *Նալբանդյան Մ.*, Երկեր, Ե., 1985, էջ 472-474: Մ Նալբանդյանի ազատության և ժողովրդավարության հայեցակարգը հանգամանորեն լուսաբանված է գրքի 3.3 հատվածում:

Կ. Յուի գրքի առաջաբանում<sup>11</sup>: Նման անհատները, բարեբախտաբար, եզակի չեն:

Զմոռանանք նաև, որ անգամ ինկյուզիվ քաղաքական ինստիտուտների պարագայում չի բացառվում էլիտար խավի միջամտությունը քաղաքական ու տնտեսական գործընթացներին, մանավանդ որ եկամուտների անհավասարաչափ բաշխումը համաշխարհային երևույթ է, այն բնորոշ է նաև բազմաթիվ զարգացած երկրների, անգամ ԱՄՆ-ին<sup>12</sup>:

Հարկ է նաև հիշել, որ քաղաքական ինստիտուտները, լինելով հասարակական գիտակցության զարգացման արդյունք՝ ածանցյալ, թեև բազիսային չեն, սակայն, անշուշտ, հանրային կառավարման լծակներով ներագդում են երկրի զարգացման ընթացքի բոլոր դրսևորումների, այդ թվում՝ քաղաքակրթական գործոնի վրա:

Միաժամանակ օբյեկտիվորեն տեղի ունեցող ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացը հանգեցնում է հանրային կառավարման զարգացման առնվազն երկու հետևյալ ուղղություններով.

- էլեկտրոնային կառավարման սկզբունքների համատարած գործադրում, թվային տնտեսության գերակայության միտումների հաստատում,
- մասնակցային կառավարման արմատավորում հանրության գիտակրթական մակարդակի բարձրացման շնորհիվ՝ սահմանափակելով էլիտայի մանևրելու հնարավորությունները: Ի դեպ, մասնակցային կառա-

---

<sup>11</sup> **Յու. Լի Կուան**, Երրորդից առաջին աշխարհ: Մինգապուրի 1965-2000 թթ. պատմությունը, Ե., 2016, էջ 9:

<sup>12</sup> St u Стиглиц Дж. Нечестная экономика, в ж. “В мире науки”, №1-2, 2019, էջ 35-91:

վարումը միայն խմբային կամ կոլեգիալ կառավարումը չէ, լայն առումով այն ընդգրկում է հանրային որոշումների ընդունման ամբողջ ներկայակեր՝ հանրաքվեները, համապետական և տեղական կառավարման մարմինների ազատ ընտրությունները, ընդդիմությանը վերապահվող սահմանադրական իրավասությունները, խոսքի և մամուլի ազատությունը:

Իհարկե, հանրային կառավարման և գիտատեխնիկական առաջընթացի կապը երկկողմանի է, կառավարման համակարգը, հատկապես տրամադրվող ֆինանսական ռեսուրսները, գիտնականի դիրքը հասարակական կյանքում կարող են խթանել գիտակրթական համակարգի զարգացումը: Որոշ երկրներ աղքատ են, ոչ պատշաճ չափով զարգացած, որովհետև անհրաժեշտ չափով ռեսուրսներ չեն հատկացվում գիտակրթական համակարգի զարգացմանը, քանի որ տնտեսության թույլ զարգացման արդյունքում չկան այդ ռեսուրսները: Բարձր զարգացած երկրներն ունեն դրանք, տրամադրվում են գիտության և կրթության վերելքին, ինչի արդյունքում ապահովվում է տեխնոլոգիական վերընթաց զարգացումը: Գիտության արդյունքները նման երկրներում պահանջարկված են, իսկ թույլ զարգացած երկրներում, որտեղ գերակշռում են տեխնոլոգիաների աճի հանդեպ ոչ զգալուն ճյուղերը՝ սննդի արտադրություն, հանքահումքային արդյունաբերություն և այլն, գիտության նվաճումներն ակտիվ պահանջարկ չունեն:

Թույլ զարգացած երկրները հայտնվում են կախարդական շրջանում. գիտատեխնիկական զարգացման համար չկան ռեսուրսներ, իսկ առանց տեխնոլոգիաների և բարձր

որակավորման կադրերի տնտեսության մեջ բեկում չի ապահովվում: Այս շղթան ճեղքած որոշ երկրներ դարձել են զարգացող, անգամ զարգացած (Մինգապուր, Հարավային Կորեա և այլն): Ուստի աղքատության հաղթահարման բանալին գիտատեխնիկական առաջադիմությունն է, կրթության զարգացումը, ինչի արդյունքում բարձրանում է բնակչության քաղաքակրթական մակարդակը, աճում են քաղաքական ինստիտուտները, դառնում ինկլյուզիվ, տիրապետող է դառնում մասնակցային կառավարումը: Այսպիսով, երկրի աղքատության հաղթահարման ելակետը գիտակրթական համակարգի և տեխնոլոգիական անընդհատ առաջընթացն է:

### **Տնտեսական զարգացման տրամաբանությունը. ինչպես հաղթահարել աղքատությունը**

Այս հատվածում հարկ չկա անդրադառնալու դասագրքային ճշմարտություններին՝ մարդկային ռեսուրսների, կապիտալի անհրաժեշտությանը, դրանց ապահովմանը: Այստեղ կկարևորվեն արդի ժամանակաշրջանում տնտեսական զարգացման համար խիստ արդիական տեխնոլոգիական զարգացման խնդիրը և հանրային կառավարման կատարելագործումը, ընդ որում երկրորդը, ինչպես նշվել է, առաջինի համար էական նախադրյալ է:

Ներկայումս աշխարհում տիրապետող նոր հանրային կառավարման համատեքստում միախառնված են ավանդական սկզբունքները և գործարար կառավարման բաղադրիչները. այս առումով կարևորվում են ռազմավարական կառավարումը, գործադիր իշխանության ձգտումը՝ լինելու նախա-

ձեռնողական և խթանիչ միջավայր ստեղծող՝ միտված տեխնոլոգիական զարգացման ապահովմանը:

Ռազմավարական կառավարումը հնարավորություն է երկրի ներքին ու արտաքին միջավայրերի հանգամանալից վերլուծության ու գնահատման արդյունքում, հատկապես հաշվի առնելով ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները, այսինքն՝ մանրակրկիտ SWOT վերլուծության հիման վրա որոշելու տեսլականը մինչև 10 տարվա կտրվածքով, այդպիսով ունենալու երկրի տնտեսական, սոցիալական, անվտանգային զարգացման հեռանկարային ծրագիր՝ հիմնավորված անհրաժեշտ ռեսուրսներով:

Մի անգամ էլ շեշտենք, որ ռազմավարության առանցքը գիտակրթական համակարգի և տեխնոլոգիական զարգացման ապահովումն է, քանի որ, ինչպես վերը նշվեց, դրանք, մանավանդ արհեստական ինտելեկտի և ռոբոտացման դարաշրջանում աղքատության հաղթահարման, երրորդ աշխարհից առաջինը փոխադրվելու կարևորագույն գործոններն են:

Ծրագրի մշակումից հետո անհրաժեշտ է սահմանել դրա իրագործման և մոնիթորինգի գործիքակազմը: Այս առումով գոյություն ունեն բոլոր երկրների համար ստանդարտ խաղի կանոններ, մասնավորապես օրենսդրորեն կարգավորվող հարկաբյուջետային, դրամավարկային, գործարարության խթանման, նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորման, մաքսային և այլ քաղաքականությունների մշակման ու իրագործման, որոնք, սակայն, բավարար չեն տնտեսական զարգացում ապահովելու համար: Հիմնավոր ու խթանիչ օրենսդրական բազան չափազանց կարևոր է, բայց ոչ պակաս էական է նաև գործադիր իշխանության նախաձեռնո-



դականությունը՝ սահմանելու հեռանկարային և իրավիճակային կարևորագույն խնդիրներ և ձգտել լուծելու դրանք: Իսկ այդ խնդիրները յուրաքանչյուր երկրում յուրօրինակ են՝ պայմանավորված հանքահումքային, բնակլիմայական, մարդկային առկա ռեսուրսներով, ազգային ավանդույթներով, աշխարհաքաղաքական միջավայրով: Ուստի յուրաքանչյուր երկրի գլխավոր խնդիրն է գտնել աշխատանքի միջազգային բաժանման համակարգում իր հարաբերական, սակայն մրցունակ առավելությունը, այն դարձնել տնտեսական քաղաքակրթության առանցք և դրա շուրջ կառուցել ողջ սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման փոխկապակցված գերակայությունները, որոնց ամբողջությունը՝ լուծման ենթակա խնդիրների համալիրով, կկազմի տնտեսական ու սոցիալական զարգացման ռազմավարության որոշակիացված բովանդակությունը: Հայաստանի Հանրապետության համար այն խիստ ընդհանրացված սխեմատիկ տեսքով կարող է ներկայացվել հետևյալ գծանկարով (գծանկար 1):

Բերված գծանկարում յուրաքանչյուր բաղադրիչ՝ քառակուսու ներսում, թե դրսում, ունի կարևոր սիներգիկ նշանակություն ամբողջ համակարգի վերընթաց զարգացման համար, ուստի դրանց նախագծումը և գործարկումը հանրային կառավարման առումով չափազանց էական հիմնախնդիրներ են:



Ակնհայտորեն նշված հիմնախնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է քաղաքական ինստիտուտների հասունության աստիճանով, որը, ինչպես վերը լուսաբանվել է, քաղաքակրթական զարգացման արդյունք է, բայց նաև հետադարձ կապի սկզբունքով ներագրում է հանրային առաջընթացի բազային բաղադրիչների վրա: Իսկ հանրային կառավարումը, բացի գիտություն լինելուց, նաև արվեստ է, կառավարիչը՝ իբրև քաղաքական ինստիտուտի ներկայացուցիչ, տիրապետելով գիտելիքների որոշակի պաշարի, պետք է ունենա համապատասխան ներուժ՝ արագ հաշվի առնելու տնտեսական ու քաղաքական միջավայրի ստեղծած հնարավորությունները, իր կազմակերպության ունեցած հարաբերական առավելությունները և ընդունի հաջողության տանող կառավարչական որոշումներ: Դրանք վերաբերում են թե՛ ընտրությանը, թե՛ դրա իրագործման գործիքակազմի սահմանմանը:

Կարելի է պնդել, որ աշխարհում չկա երկիր, որը բացարձակապես զուրկ լինի ռեսուրսներից, բնակչությունը՝ ճակատագրով դատապարտված աղքատության, իսկ տնտեսական զարգացման ցածր մակարդակը և բնակչության աղքատությունը հետևանք են հավաքական կամ միջին քաղաքակրթական ոչ պատշաճ մակարդակի ու դրանով պայմանավորված քաղաքական ինստիտուտների անհրաժեշտ չափով հասունության, ինչը հնարավորություն չի ընձեռում արդյունավետ իրագործել հանրային կառավարումը:

## 1.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

### Ներածություն

Արդի հարափոփոխ աշխարհում տնտեսական, սոցիալական և անգամ քաղաքական զարգացումների հիմքը գիտատեխնիկական առաջադիմությունն է, ինչը պայմանավորում է նոր տեխնոլոգիաների ստեղծումը, երկրների մրցունակությունը միջազգային շուկայում, դիրքը քաղաքական հարթակներում, բնակչության կենսամակարդակը և սոցիալական պաշտպանվածությունը: Այս առումով յուրաքանչյուր երկիր երաշխավորված ապագա կարող է ունենալ, եթե կարևորում է զարգացման ռազմավարական ծրագիրը, որի միջուկը գիտության և կրթության, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի հիմքի վրա տնտեսության տեխնոլոգիական անընդհատ զարգացման ապահովումն է: Ահա թե ինչու տնտեսական աճի համար հարկ է կարևորել դրա որակական բաղադրիչները, որոնք գտնվում են գլխավորապես տնտեսություն–գիտություն–կրթություն փոխառնություններում, ինչն ապացուցվում է մարդկային քաղաքակրթության վերընթաց զարգացման դարավոր պատմությամբ: Իսկ որակական բաղադրիչները բովանդակում են քանակական զարգացման թե՛ խթանները, թե՛ արգելակները:

---

\* Առաջին անգամ հրատարակվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» (2019, թ. 2) հանդեսում:

## 1. Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները

Հայտնի ճշմարտություն է՝ բարձր որակը առաջընթացի էական նախադրյալն է:

Գործնականում ընդունված է տնտեսական զարգացման ընթացքը բնութագրել քանակական ցուցանիշներով, որոնցից են մակրոմակարդակում համախառն ներքին արդյունքի ծավալը և աճի տեմպերը: Չսսեմացնելով դրանց կարևորությունը՝ ստորև կդիտարկվեն ոչ պակաս կարևոր որակական բնութագրիչները, որոնցից է տնտեսական զարգացման բնույթը: Եթե տնտեսական առաջընթացի քանակական ցուցանիշը աճի տեմպերն է, ապա որակական առումով այն կարող է լինել.

- էքստենսիվ՝ նոր ռեսուրսների ներգրավմամբ,
- ինտենսիվ՝ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ\*,

---

\* Արտադրության ինտենսիվացման աստիճանը կարող է հաշվարկվել արտադրանքի և ամբողջական աշխատանքի ծախսերի հավելաճի համադրմամբ հետևյալ բանաձևով.

$$\beta = \frac{\Delta H - \Delta F}{\Delta H} \cdot 100,$$

որտեղ  $\beta$  –  $\beta$  ամբողջական աշխատանքի արտադրողականության տեսակարար կշիռն է արտադրության հավելաճում, այսինքն՝ արտադրության ինտենսիվացման աստիճանը,

$\Delta H$ -ը արտադրության ծավալի հավելաճն է,

$\Delta F$  –  $\Delta F$  ամբողջական աշխատանքի (կենդանի և առարկայացած) ծախսերի հավելաճն է: (Տե՛ս մանրամասն *Суварян Ю. М. Управление ростом производительности труда в промышленности*. Е., Айастан, 1987, էջ 129-131):

- հումքային ուղղվածության՝ համախառն ներքին արդյունքում լեռնահանքային և գյուղատնտեսական արտադրանքի գերակշռմամբ: Ուստի ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը որակական ցուցանիշ է, այդպիսին է նաև աճի կառուցվածքը,
- աճի դանդաղ, կայուն կամ արագ (թռիչքային) տեմպերով,
- թողարկվող արտադրանքի բարձր որակով և մրցունակությամբ կամ հակառակը:

Տնտեսական զարգացման որակական բնութագրիչներից է նաև այն, թե ինչպիսի տնտեսական կառուցակարգով է ապահովվում երկրի տնտեսության դինամիկան, այսինքն՝ որչափով առաջադիմական են տնտեսական համակարգը և նրա կառավարման սկզբունքները: Տնտեսությունը կարող է կառավարվել կենտրոնացված, վարչարարական մեթոդներով՝ սահմանափակելով տնտեսվարող սուբյեկտների ազատ գործունեությունը: Այդպիսին է տնտեսվարման կառուցակարգը վարչահրամայական համակարգ և պետական սեփականության գերակայություն ունեցող երկրներում, որպիսին, օրինակ, նախկին ԽՍՀՄ-ն էր: Մինչդեռ առաջադիմական է սեփականության բազմաձևության հիմքի վրա գործող շուկայական տնտեսությունը՝ ժողովրդավարական կառավարման սկզբունքներով: Վերջին դեպքում արտադրանքը և ծառայություններն ունենում են միջազգային շուկայում մրցունակություն և բարձր որակ:

Մեկ այլ որակական բնութագրիչ է այն, թե որչափով հավասարաչափ են բաշխվում տնտեսական աճի շնորհիվ ստեղծված բարիքները հասարակության անդամների միջև, ինչը պայմանավորված է երկրում տիրապետող քաղաքական

ու տնտեսական համակարգով և հետադարձ ազդեցություն կարող է ունենալ տնտեսական զարգացման ընթացքի վրա: Եկամուտների անհավասարաչափ բաշխումը համաշխարհային երևույթ է, այն բնորոշ է նաև բազմաթիվ զարգացած երկրների, անգամ ԱՄՆ-ին<sup>13</sup>, սակայն այն համահարթելու կամ մեղմացնելու խնդիրը մնում է արդիական ու կարևոր բոլոր երկրների համար:

Վերը նշվածի առումով ուշագրավ է, որ հայկական մամուլում նկատվում են դիտարկումներ «տնտեսական հեղափոխություն» արտահայտության՝ իբրև տնտեսական զարգացման բնույթի վերաբերյալ: Դրական վերաբերմունքի հետ մեկտեղ հաճախ որոշ մասնագետներ գտնում են, որ տնտեսությունը սիրում է կայունություն, ուստի դրա համար հեղափոխությունը չի կարող բնութագրական լինել: Իսկ ի՞նչ է հեղափոխությունը: Հայտնի է հարցադրման հանրագիտարանային պատասխանը. այն որևէ երևույթի խոր որակական փոփոխությունն է և տարբերվում է թե՛ էվոլյուցիոն զարգացումից, թե՛ բարեփոխումներից: Տեսության մեջ և պրակտիկայում գործածական է և ընդունված քաղաքական, սոցիալական, գիտատեխնիկական, տեխնոլոգիական ոլորտներում կտրուկ, արմատական փոփոխությունները կոչել հեղափոխություն: Պատմությանը հայտնի են այդ բնույթի բազմաթիվ հեղափոխություններ: Հատկապես գիտատեխնիկական, տեխնոլոգիական հեղափոխություններն էականորեն նպաստել են հասարակական ու տնտեսական առաջընթացին: Մասնավորապես հայտնի են միջազգայնորեն ընդունված

---

<sup>13</sup> St' u Стиглиц Дж. Нечестная экономика. “В мире науки”, №1-2, 2019, էջ 85-91:

տեխնոլոգիական հեղափոխության փուլերը և դրանց բնութագրիչները.

- արդյունաբերական հեղափոխություն (18-րդ դարի 60-ական թվականներ),
- ստանդարտացում և մեքենայացում (18-րդ դար),
- հոսքային հավաքման գծեր (1913 թ.):

ՌԳԱ ակադեմիկոս Ս. Գլազևը տեխնոլոգիական հեղափոխության շրջանակներում առանձնացնում է տեխնոլոգիական կացութաձևերը՝ համապատասխան առանցքային գործոններով, տեխնոլոգիական միջուկով, առանձնահատկություններով և ինստիտուցիոնալ կառուցվածքով<sup>14</sup>:

Կարո՞ղ է լինել նաև տնտեսական հեղափոխություն: Այս հարցի պատասխանը գտնելու համար հարկ է դիտարկել տնտեսական համակարգերի փոփոխությունների պատմական ընթացքը:

Տնտեսական համակարգը սերտորեն շաղկապված է քաղաքական համակարգին, նրա բաղադրիչն է, ուստի դրանց փոփոխությունները տեղի են ունենում միասին և միաժամանակ: Հայտնի է, որ քաղաքական համակարգի փոփոխությունը զուգակցվում է սեփականատիրական հարաբերությունների, տնտեսական կառուցակարգերի, կառավարման սկզբունքների և կառուցվածքների փոխակերպումներով: Օրինակ, XX դարի 90-ական թվականների սկզբին նախկին ԽՍՀՄ տարածքում, այդ թվում՝ Հայաստանում, տեղի ունեցան լուրջ քաղաքական փոփոխություններ, որոնց արդյունքում արտադրության միջոցների պետական սեփականութ-

---

<sup>14</sup> St' u Glaz'ev S. Ю. Становление шестого технологического уклада. В кн.: Яковец Ю. В. , Фарах С. Н. Диалог и партнерство цивилизаций, Москва-Казань, 2018, էջ 200-213:



յունը մեծ մասամբ մասնավորեցվեց, տիրապետող դարձավ սեփականության բազմաձևությունը՝ մասնավորի առաջատար դերով, էականորեն փոխվեց դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, ազատականացվեցին գները, արտաքին առևտուրը, ըստ էության ստեղծվեց տնտեսական գործող համակարգից տարբերվող որակապես նորը, որը համապատասխանում է նոր քաղաքական իրողություններին: Փոփոխությունների նկարագրված համալիրը, որ վերաբերում է տնտեսական համակարգի բազային բաղադրիչներին, իր բովանդակությամբ լիովին համապատասխանում է հեղափոխության բնութագրությանը, ուստի տեսականորեն և գործնականում տնտեսական հեղափոխություն կարող է լինել, եթե տեղի ունեցող փոփոխություններն ընդգրկում են ողջ տնտեսական համակարգը:

Տնտեսական համակարգում արմատական փոփոխությունները տրամաբանորեն կարող են հանգեցնել էական փոփոխությունների տնտեսական աճի տեմպերի և բնույթի առումով: Սակայն սույն եզրակացությունը վերաբերում է նոր համակարգի ներուժային հնարավորությանը, որի գործնական դրսևորումը պայմանավորված է բազմաթիվ քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, ընդհանուր առմամբ ներքին և արտաքին միջավայրերի գործոններով: Նոր տնտեսական համակարգը կարող է ապահովել բարձր տեմպերով ու նոր որակական զարգացում, եթե դրա համար ստեղծվում է նպաստավոր ներքին և արտաքին միջավայր:

## 2. Տնտեսական զարգացման գերակայությունները

Տնտեսական զարգացման որակական ցուցանիշների փոփոխության միտումների առումով հիմա անդրադառնանք տնտեսական զարգացման կարևորագույն գերակայություններին, որոնք էական են տնտեսական զարգացման թե՛ որակական, թե՛ քանակական բաղադրիչների արմատական փոփոխության համար:

Այդ տեսակետից նախ դիտարկենք տնտեսություն-գիտություն-կրթություն փոխառնչությունները: Ժամանակակից տնտեսության զարգացման հիմքը առաջադիմական, մրցունակ տեխնոլոգիաներն ու բարձր որակավորում ունեցող կադրերն են: Կան տնտեսության ճյուղեր, որոնց արտադրություններին բնորոշ են արագ փոփոխվող տեխնոլոգիաները, այսինքն՝ խիստ գիտատար են, զգայուն են նորի հանդեպ և արագ են արձագանքում գիտատեխնիկական զարգացումներին: Այդպիսի ճյուղերից են ճշգրիտ մեքենաշինությունը, քիմիա-կենսաբանական արտադրությունները, դեղագործությունը և այլն: Նման արտադրությունների համար պահանջարկված է գիտությունը հատկապես իր կիրառական մշակումներով: Տնտեսության որոշ ճյուղեր, ինչպիսիք են, օրինակ, սննդի և թեթև արդյունաբերությունը, համեմատաբար պակաս չափով են արձագանքում նոր գիտատեխնիկական մշակումներին՝ ապավինելով ավանդական տեխնոլոգիաներին: Ուստի տնտեսության ճյուղային ու բարձրագույն և մասնագիտական կրթության կառուցվածքի, ինչպես նաև տնտեսության և գիտության մշակումների նկատմամբ պահանջարկի միջև գոյություն ունեն որոշակի փոխառնչություններ:

Հետևաբար՝ ռազմավարական առումով և պետականորեն հարկ է կարևորել այնպիսի արտադրությունների բուռն զարգացումը, որոնք կարող են լոկոմոտիվի գործառույթ կատարել տարբեր ոլորտների և խնդիրների լուծման համար: Այդպիսին են, մեր համոզմամբ, գիտատար և աշխատատար, քիչ նյութատար ճշգրիտ մեքենաշինական արտադրությունները: Դրանց զարգացումը կարող է ստեղծել աշխատատեղեր, նպաստել քաղաքացիական նշանակության սարքավորումների և պաշտպանական բնույթի արտադրատեսակների թողարկման ընդլայնմանը:

Ներկայումս մեր հանրապետությունում գիտական արդյունքների և բարձր որակավորման ինժեներատեխնիկական կադրերի, բնական գիտությունների ներկայացուցիչների հանդեպ պահանջարկը համեմատաբար նվազել է, ինչը ՀՆԱ-ի և մշակող արդյունաբերության ճյուղային դեֆորմացված կառուցվածքի հետևանք է (աղյուսակներ 1 և 2): ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության բաժինը 11 տոկոս է, իսկ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ավելի բարձր՝ 14-15 տոկոս, ծառայությունների (առևտուր, կրթություն, առողջապահություն, բնակչության սոցիալական սպասարկում, մշակույթ, զվարճություններ, հանգիստ և այլն) հատվածը՝ ավելի քան 25 տոկոս: Ավելի անմխիթար է արդյունաբերության կառուցվածքը. հանքագործական և բաց հանքերի շահագործման ոլորտը կազմում է ամբողջի 15.5 (ՀՆԱ-ի՝ 3), մշակող արդյունաբերությունը՝ 69.8 տոկոսը: Վերջինիս կառուցվածքում սննդի արտադրությունների բաժինը հասնում է 63.3-ի, թեթև արդյունաբերությանը՝ 4.6-ի, մեքենաշինական արտադրանքինը՝ 2.3-ի, քիմիական և դեղագործական արտադրությունների տեսակարար կշիռը՝ 1.9 տոկոսի: Հանրագումարում

գուտ գիտատար արտադրանքի հատվածը (մեքենաշինություն և քիմիա-դեղագործություն) կազմում է 4.2 տոկոս: Ի դեպ, հուսադրող չէ նաև թե՛ ՀՆԱ-ի, թե՛ մշակող արդյունաբերության ոլորտների (ճյուղերի) արտադրանքի (ծառայությունների) աճի կառուցվածքը: Հարաբերաբար ավելի արագ են աճում ոչ թե իրական տնտեսության և գիտատար արտադրանք թողարկող արտադրությունները, այլ առևտրի, կացության և հանրային սննդի, զվարճությունների ոլորտները: Գործնականում տնտեսության մեջ աշխատատեղերի կառուցվածքն ունի նույն պատկերը, և մարդիկ ձգտում են տիրապետել այնպիսի մասնագիտությունների, որոնց համար կան աշխատատեղեր:

Աղյուսակ 1

ՀՆԱ-ի կառուցվածքը և իրական ծավալի ինդեքսները  
նախորդ տարվա համեմատ<sup>15</sup>

%

Ծածկագիրն ըստ SQT-ի		ՀՆԱ-ի կառուցվածքը		Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համեմատ	
		2017 թ.	2018 թ.	2017 թ.	2018 թ.
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	15.0	13.7	94.9	91.5
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3.3	2.9	125.7	85.8
C	Մշակող արդյունաբերություն	10.6	11.3	111.8	111.1

<sup>15</sup> Վիճակագրական բոլոր աղյուսակները կազմված են ՀՀ ԱՎԾ-ի տեղեկատվության հիման վրա:

D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4.1	3.7	103.8	109.2
E	Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.5	0.5	110.1	99.2
F	Շինարարություն	7.3	6.6	102.8	100.8
G	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	11.1	11.3	120.5	109.5
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	3.0	3.2	114.2	111.4
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	1.4	1.8	124.9	135.6
J	Տեղեկատվություն և կապ	3.3	3.2	104.8	104.5
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	4.9	5.3	118.5	117.8
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	7.8	7.9	99.9	103.5
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	1.1	1.2	98.9	114.8
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.9	1.0	111.5	111.1
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն	4.7	4.2	103.0	91.2
P	Կրթություն	2.7	2.6	97.3	100.4

Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	4.2	4.2	111.5	104.7
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	4.6	5.7	112.0	131.5
S	Սպասարկման այլ ծառայություններ	0.9	0.9	142.0	106.0
T	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	0.1	0.1	99.6	98.8

## Աղյուսակ 2

### Մշակող արդյունաբերության արտադրանքի արտադրության ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների

Ծածկագիրն ըստ S95Դ-ի խմբ. 2		2018թ. հունվար-դեկտեմբեր, ընթացիկ գներով <i>սկն դրամ</i>	2017թ. հունվար-դեկտեմբեր, ընթացիկ գներով <i>սկն դրամ</i>	2018թ.-ը 2017թ.-ի հունվար-դեկտեմբերի համեմատ, %	Կառուցվածքը, 2018թ. հունվար-դեկտեմբեր %
C	Մշակող արդյունաբերություն	1 349 852.6	1 213 642.7	108.3	100.0
	<i>որից՝</i>				
10	սննդամթերքի արտադրություն	523 870.5	470 909.7	105.8	38.8

11	խմիչքների արտադրություն	152 569.3	149 241.9	100.9	11.3
12	ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	178 367.7	157 747.2	108.4	13.2
13	մանածագործական արտադրատեսակների արտադրություն	1 147.6	620.4	177.0	0.1
14	հագուստի արտադրություն	22 488.6	16 848.8	140.8	1.7
15	կաշվե արտադրատեսակների արտադրություն	2 004.8	1 861.7	99.0	0.1
16	փայտանյութի արտադրություն	1 861.7	1 422.4	136.9	0.1
17	թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	34 727.2	26 138.3	132.3	2.6
18	պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	19 182.5	15 087.9	126.4	1.4
19	քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	16 603.5	11 605.7	143.4	1.2
20	դեղագործական արտադրանքի արտադրություն	9 548.2	9 602.4	100.6	0.7
21	ռետինե և պլաստմասե արտադրատեսակների արտադրություն	35 511.1	31 148.0	114.0	2.6

22	այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	61 564.5	44 740.9	139.5	4.6
23	հիմնային մետաղների արտադրություն	173 752.0	174 928.3	93.6	12.9
24	պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	14 087.5	12 393.0	109.6	1.1
25	համակարգիչների, էլեկտրոնային և օպտի- կական սարքավորանքի արտադրություն	9 558.8	7 721.3	110.7	0.7
26	էլեկտրական սարքավորանքի արտադրություն	14 782.3	18 460.8	79.5	1.1
27	մեքենաների և սար- քավորանքի արտադ- րություն, չներառված ուրիշ խմբավորում- ներում	5 874.8	3 883.0	155.4	0.5՝
28	այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն	155.6	113.8	134.5	0.0
29	կահույքի արտադրություն	5 226.6	3 694.4	145.2	0.4
30	այլ արտադրատեսակ- ների արտադրություն	53 145.8	51 189.7	117.0	3.9
31	մեքենաների և սարքա- վորանքի նորոգում և տեղադրում	13 822.0	4 283.1	3.8 անգամ	1.0



Տնտեսության ոչ առաջադիմական կառուցվածքն այդպիսին է դարձնում նաև կրթության կառուցվածքը (աղյուսակ 3):

Աղյուսակի տվյալներով հանրապետության բարձրագույն կրթության համակարգի շրջանավարտների ընդհանուր թվում հումանիտար մասնագիտություններով կրթություն ստացածների բաժինը 2017 թ. հասել է 64.5 տոկոսի: Մասնավորապես սոցիալական և վարքաբանական գիտությունների գծով շրջանավարտների թիվը կազմել է 4214, գործարարության ու վարչարարության և իրավունքի մասնագիտություններով համապատասխանաբար՝ 1 315 և 1 311, իսկ ֆիզիկական գիտությունների գծով՝ 179, կենսաբանական գիտությունների ուղղություններով՝ 296, մաթեմատիկա և վիճակագրություն մասնագիտություններով՝ 398, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գծով՝ 649 և այլն:

Ի դեպ, ոչ էական փոփոխություններով պատկերը նույնն է նաև 2018 թվականին:

Ռազմավարական առումով կրթության նման կառուցվածքը նպաստավոր չէ աշխարհում ընթացող տեխնոլոգիական հեղափոխության ներկա փուլում մեր երկրի դիրքավորման, տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման ապահովման համար:

**Բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական  
հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն  
ըստ մասնագիտությունների խմբերի, 2017-2018 ուս.տարի**

	Ընդունվել են		Ուսանողների թվա- քանակը		Ավարտել են 2017թ.	
	ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ կանայք	ընդա- մենը	նրանցից՝ կանայք
Կրթություն	1223	730	10 621	6 533	1665	1231
Արվեստ	1 014	650	4 666	3153	1 145	826
Հումանիտար գիտություններ	426	231	2 293	1191	719	464
Բանասիրական գիտություններ	1 363	1 302	7 556	7 169	2 418	2 363
Սոցիալական և վարքաբանական գիտություններ	2 726	1 449	12 120	6 322	4 214	2 463
Լրագրություն և տեղեկատվական գիտություններ	207	186	1 035	877	260	236
Գործարարություն և վարչարարություն	1 304	680	5 923	3128	1 315	735
Իրավունք	1 136	431	5 845	2 256	1 311	525
Կենսաբանական գիտություններ	201	163	927	817	296	268
Շրջակա միջավայր	110	43	265	114	124	55

Քիմիա	78	56	559	456	111	94
Գիտություններ երկրի մասին	142	40	936	355	256	126
Ֆիզիկական գիտություններ	148	30	735	168	179	72
Մաթեմատիկա և վիճակագրություն	509	237	2 022	959	398	238
Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ	942	232	3 763	1 178	649	241
Ճարտարագիտություն	1 006	102	4 285	463	776	107
Արդյունաբերություն և տեխնոլոգիա	521	92	2 188	462	189	52
Ճարտարապետություն և շինարարություն	383	58	1 999	350	341	75
Գյուղատնտեսական գիտություններ	228	-	912	-	84	-
Անասնաբուժություն	109	22	554	120	67	26
Առողջապահություն	959	571	6 321	3 711	593	339
Սոցիալական աշխատանք	47	40	261	233	90	66
Անհատական ծառայություններ	475	264	2 010	1 179	401	262
Անվտանգության ծառայություններ	281	66	951	247	186	44
<b>Ընդամենը</b>	<b>15 538</b>	<b>7 675</b>	<b>78 747</b>	<b>41 441</b>	<b>17 787</b>	<b>10 908</b>

Վիճակը մխիթարական չէ գիտական աստիճանաշնորհման բնագավառում: Այստեղ նույնպես գիտական աստիճան հայցողների, ասպիրանտուրայում սովորողների ընդհանուր թվում գերակշռում են տնտեսագիտական, իրավաբանական և մյուս հումանիտար մասնագիտությունները, փոքրաթիվ են ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական՝ տեխնոլոգիական փոփոխությունների ներուժ ապահովող մասնագիտություններով գիտական աստիճանի ձգտողները (աղյուսակ 4): Նույն աղյուսակի տվյալներով գիտական աստիճան հայցողների և պաշտպանաձևների թվում գերակշռում են կանայք:

Աղյուսակ 4

**Գիտության թեկնածուի գիտական աստիճան  
հայցողների և թեկնածուականատենախոսություն  
պաշտպանաձ հայցողների թվաքանակն ըստ  
մասնագիտության, 2018 թ.**

մարդ

	Գիտության թեկնածուի գիտական աստիճան հայցողների թվաքանակը		Թեկնածուականատենախոսություն պաշտպանաձ հայցողների թվաքանակը	
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
Ֆիզիկամաթեմատիկական	36	17	8	4
Քիմիական	27	17	2	2
Կենսաբանական	38	39	7	7
Երկրաբանական	21	12	15	8
Տեխնիկական	51	17	31	8
Գյուղատնտեսական	5	3	4	2
Պատմական	64	33	6	3
Տնտեսագիտական	114	62	39	21

Փիլիսոփայական	4	4	-	-
Բանասիրական	77	67	7	7
Իրավաբանական	82	47	5	1
Մանկավարժական	89	72	3	2
Բժշկական	50	28	5	4
Դեղագործական	5	5	.	-
Արվեստագիտական	16	14	2	2
Ճարտարապետական	9	6	1	1
Հոգեբանական	57	48	2	2
Սոցիոլոգիական	2	2	.	-
Քաղաքական	21	9	.	.
Ընդամենը	768	502	137	74

Վերը նշված աննպաստ զարգացումները կհաղթահարվեն գիտատար արտադրանքի թողարկման ծավալման շնորհիվ, ավելին՝ այն կխթանի թե՛ կրթության, թե՛ գիտության բուռն զարգացումը:

Սակայն այդ արտադրությունների զարգացումը հնարավոր է ներդրումների և մրցունակ տեխնոլոգիաների առկայության պարագայում: Այդ դժվարագույն խնդիրների լուծման համար համաշխարհային պրակտիկայում հայտնի է երկու տարբերակ.

- սինգապուրյան փորձը<sup>16</sup>. պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում նպատակային ներգրավել տրանսազգային կամ ազգային խոշոր կորպորացիաների՝ առաջարկելով բարենպաստ տնտեսավարման պայմաններ, բարձր

---

<sup>16</sup> Տե՛ս **Լի Կուան Յու**, Երրորդից առաջին աշխարհ: Մինգապուրի 1965-2000 թթ. պատմությունը, Ե., 2017, էջ 93-113:

որակավորման մասնագետներ, որոշ զարգացած ենթակառուցվածքներ,

- համատեղ ձեռնարկությունների ստեղծումը պետական մասնակցությամբ:

Հնարավոր բոլոր տնտեսական լծակներով պետք է խրախուսել հանրապետության համար ավանդական թեթև, կահույքի, շինարարական նյութերի, փոքր քիմիայի արտադրությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Նույնը վերաբերում է հարաբերաբար բարենպաստ զարգացման ընթացք ունեցող սննդի արդյունաբերության, ծառայությունների ոլորտի ճյուղերին:

Չափազանց կարևոր խնդիր է գյուղատնտեսության արդիականացումը՝ ինդուստրացման, գյուղատնտեսական կազմակերպությունների՝ կոոպերացման կամ բաժնետիրացման շնորհիվ խոշորացման, արտադրություն–արդյունաբերական մշակում–իրացում շղթայի կատարելագործման ուղիներով, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնելու գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը, կիրառելու բերքի աճեցման ժամանակակից տեխնոլոգիաներ, զոոտեխնիկական, անասնաբուժական և ագրոնոմիական ծառայություններ, ստեղծելու բազմաճյուղ տնտեսություններ՝ բնական ռիսկերի ազդեցությունը նվազեցնելու համար և այդպիսով ավելացնելու բերքատվության ու մթերատվության մակարդակը: Գյուղատնտեսության ինտենսիվացումը մշակովի հողատարածքների սահմանափակության պայմաններում երկրի պարենային անվտանգության ապահովման գլխավոր ուղին է:

Գյուղատնտեսության ոլորտում տեխնոլոգիական և տնտեսական զարգացման առանցքային խոչընդոտներից է

մանր գյուղացիական տնտեսությունների մեծ թիվը՝ շուրջ 318 հազար, ինչը անցյալ դարի 90-ական թվականներին ճյուղի արտադրության միջոցների մասնավորեցման ոչ ճիշտ մեթոդաբանության արդյունքն է: Գյուղացիական տնտեսությունների տիրապետած գյուղատնտեսական նշանակության հողակտորները փոքրածավալ են (աղյուսակ 5), ցածր է տնտեսությունների ապրանքայնության միջին կշռված մակարդակը՝ շուրջ 57%, որի 30%-ն է դրամային արտահայտությամբ, մնացածը ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված միջոցներն են: Ընդ որում ապրանքայնության մակարդակի ցուցանիշը 2017-2018 թթ. տարբերակվում է ըստ մթերքների և մարգերի: Մասնավորապես միջինից ցածր է այդ ցուցանիշը հացահատիկի և հատիկաընդեղենի (31-35%), ձվի (40-41%), բրդի (32-47%) գծով, բարձր է ապրանքայնությունը խաղողի (90%), բանջարեղենի (81-82%), պարենային բոստանի (92%) համար: Հատկապես բարձր է ապրանքայնությունը Արարատի և Արմավիրի մարզերում, իսկ մյուս մարզերում և հանրապետությունում որոշ մթերքների արտադրությունն ունի բնամթերային բնույթ: Ակնհայտորեն այդպիսի գյուղացիական տնտեսությունների ներուժն անբավարար է վերը թվարկված խնդիրների լուծման համար: Ուստի դրանց խոշորացումը օրհասական խնդիր է, ինչը նախադրյալներ կստեղծի գիտական հիմքով արդի գյուղատնտեսություն ունենալու համար:

**Տնտեսությունների բաշխվածության կառուցվածքն ըստ  
գյուղատնտեսական նշանակության հողերի չափերի**

	Տնտեսությունների քանակ, հատ	Տեսակարար կշիռ, %	
մինչև 0.1 հա	78 447	22.7	
մինչև 0.1-0.19 հա	24 461	7.1	
մինչև 0.2-0.49 հա	41 391	12.0	
մինչև 0.5-0.99 հա	61 971	17.9	
մինչև 1-1.99 հա	69 878	20.2	
մինչև 2-2.99 հա	31 217	9.0	
մինչև 3-4.99 հա	22295,	6.4	
մինչև 5-9.99 հա	12 359	3.6	
մինչև 10-19.99 հա	2 857	0.8	
մինչև 20-49.99 հա	829	0.0	
մինչև 50-99 հա	119	0.0	
մինչև 100-199 հա	37	0.0	
200 հ ավել, հա	13	0.0	
Մինչև 0.19 հա => 30.0 %	Մինչև 0.49հա => 42.0 %	Մինչև 0.99հա => 60.0 %	Մինչև 1.99 հա => 80.0 %

Անկախության տարիներին երկրում միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ձևավորված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը հիմնականում համապատասխանում է ժամանակակից չափանիշներին, սակայն նկատելի են որոշ բացեր, որոնք կարող են հաղթահարվել: Դրանցից առաջինը պակաս արդյունավետ



հարկային վարչարարությունն է, հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունների ստեղծված պրակտիկան:

Դրամավարկային քաղաքականության ոլորտում չափազանց շատ են ֆինանսատնտեսական ռիսկերից խուսափելու ձգտումները, ինչի արդյունքում միշտ չէ, որ տնտեսական աճի ռազմավարությունը զուգակցվում է արդյունավետ փողի և վարկային քաղաքականության հետ:

XXI դարում առանձնակի կարևորություն են ստանում ազգային նորամուծական համակարգի ձևավորումը և գործարկումը: Այն երկրները, որոնք ավելի են կարևորել գիտական առաջընթացը, նպաստել դրան, հասել են ավելի բարձր քաղաքակրթական, տնտեսական և պաշտպանական արդյունքների: Արդի աշխարհն այդ չափանիշով բաժանվում է զարգացած, զարգացող և թույլ զարգացած երկրների: Գիտատեխնիկական զարգացումն ընթանում է շատ արագ. եթե 18-րդ դարի 60-ական թվականներին և հաջորդ դարի առաջին կեսին տեխնոլոգիական միջավայրի առանցքային գործոնները մանածագործական հաստոցները և շոգեքարշն էին, ապա XXI դարում արդեն տիրապետող են նանո և բջջային տեխնոլոգիաները<sup>17</sup>:

ՀՀ-ում որոշակի աշխատանք է կատարվել նորամուծական համակարգի ձևավորման ուղղությամբ, մասնավորապես ստեղծվել է համապատասխան օրենսդրամոնիտինգային դաշտ<sup>18</sup>: Սակայն դեռևս չի կայացել ազգային արդյունավետ գործող նորամուծական համակարգը՝ կրթություն-գի-

---

<sup>17</sup> Տե՛ս *Глазьев С. Ю.* նշվ. աշխ., էջ 201, 202:

<sup>18</sup> Տե՛ս Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, ՀՀ ԳԱԱ ակադ. Յու. Մ. Սուվարյանի խմբ., Ե., «Գիտություն», 2017, էջ 165-173:

տություն-արտադրություն ինտեգրված շղթայով, պետական մարմինների միջև անհրաժեշտ լիազորությունների հստակ բաշխմամբ, գիտատեխնիկական գործունեության որոշակի գիտակոնստրուկտորական և սոցիալ-տնտեսական արդյունքներին միտված ֆինանսավորման և դրանց առևտրայնացման ենթահամակարգերով: Մինչդեռ այդ համակարգի ստեղծումը և դրա արդյունավետ գործունեության ապահովումը տնտեսության բարձր տեմպերով զարգացման և մրցունակ արտադրանքի թողարկման, երկրի ռազմավարական խնդիրների լուծման կարևորագույն երաշխիքներից են:

### **1.3. ՀՀ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԾԱՎԱԼԻ ԵՎ ԱՃԻ ՏԵՄՊԻ ՎՐԱ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ\***

Անվիճելիորեն XX դարում, ներկայումս և ապագայում նույնպես տնտեսական զարգացումն առավելապես հիմնված է նորամուծությունների, հատկապես տեխնոլոգիական առաջավոր լուծումների վրա: Այս պարագայում չափազանց կարևոր և արդիական գիտական խնդիր է գիտելիքի և կրթության տնտեսական հետևանքների գնահատումը: Վերջինը, լինելով ուսումնասիրությունների համեմատաբար նոր ուղղություն, սակայն սկզբնավորվել է տնտեսագիտության դասականների աշխատություններում (Ա. Սմիթ, Ա. Մարշալ և այլն):

---

\* Առաջին անգամ հրատարակվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» (2015, թ. 3) հանդեսում:

Նորամուծական զարգացման հայեցակարգային խնդիրները դիտարկվել են հատկապես Յո. Շումպետերի աշխատություններում<sup>19</sup>:

Գիտակրթական համակարգի ազդեցությունների որակական և քանակական գնահատականները խիստ կարևորվում են տնտեսական զարգացման խնդիրների շարքում և գտնվում են բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս խնդիրներին են նվիրված տարբեր երկրների օրինակով կատարված բազմաթիվ կիրառական հետազոտություններ, որոնք իրականացվել են մի շարք ուղղություններով: Մասնավորապես ուսումնասիրվել է գիտակրթական համակարգում ներդրումների արդյունավետության հարցը<sup>20</sup>: Այդ ներդրումներն այս կամ այն երկրի տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից են, և տարբեր երկրներում այս հարցի շուրջ մոտեցումները խիստ տարբերվում են, յուրօրինակ են նաև գիտակրթական համակարգի և տնտեսական զարգացման փոխառնչությունների գնահատման սկզբունքները<sup>21</sup>: Գիտության վրա կատարվող ծախսերը հատկապես զգալի են Հարավային Կորեայում և Շվեդիայում, որոնք համապատասխանաբար կազմում են այդ երկրների ՀՆԱ-ի 4%-ը և 3%-ից ավելին, իսկ բնակչու-

---

<sup>19</sup> *Шумпетер Й.* Теория экономического развития. Капитализм, социализм и демократия, М., ЭКСМО, 2007.

<sup>20</sup> *Julia Lane Jason* Owen-Smith Rebecca Rosen Bruce Weinberg, (2014) New Linked Data on Research Investments: Scientific Workforce, Productivity, and Public Value No. 8556 October 2014

<sup>21</sup> Այս մասին մանրամասն տե՛ս *Սուվարյան Յու. Մ., Հարությունյան Վ. Լ., Խաչատրյան Վ. Վ.*, Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը, Ե., «Գիտություն», 2011, էջ 10-20:

յան մեկ շնչի հաշվով՝ 1200-1300 ԱՄՆ դոլար: Բացարձակ արժեքով գիտության վրա կատարվող ծախսերը մեծ են ԱՄՆ-ում և Չինաստանում: Հետաքրքրական է այն փաստը, որ մի շարք ոչ Բարձր տնտեսական զարգացման մակարդակ ունեցող երկրներ, ինչպես օրինակ՝ Սլովենիան, Էստոնիան, Իսլանդիան, այս առումով հետ չընկնելով վերոնշյալ երկրներից, գիտության ոլորտում նույնպես զգալի ներդրումներ են իրականացնում՝ ակնկալելով դրա հետագա տնտեսական բարձր արդյունավետությունը:

Հետաքրքրություն են ներկայացնում տարբեր երկրներում կատարված ուսումնասիրությունները, որոնք բացահայտել են կրթության և գիտության այսպես կոչված տնտեսական արդյունավետությունը: Այդ հետազոտությունները բացահայտում են այս կամ այն երկրում համակարգի զարգացման օգտակար փորձը: Բազմաթիվ են ուսումնասիրությունները տնտեսության վրա կրթության ազդեցությունների վերաբերյալ: Վերջիններս գնահատվել են տարբեր տեսանկյուններից: Օրինակ, հաշվարկվել են կրթության ազդեցությունը ինչպես անհատների եկամուտների դինամիկայի, այնպես էլ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Գիտության տնտեսական արդյունավետության բացահայտման առումով ուշադրության արժանի է Հարավային Կորեայի փորձը, որտեղ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ՀՆԱ-ի կառուցվածքային փոփոխությունները հոգուտ գիտության ծախսերի բերեց մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մոտ 5-6 անգամ աննախադեպ աճ<sup>22</sup>:

---

<sup>22</sup> World Bank (2004): *World Development Indicators* 2004. World Bank, Washington DC.

Հիմնախնդրի ուսումնասիրությունը կարևորվում է հատկապես այնպիսի երկրների համար, որոնք կայուն տրնտեսական աճ ապահովելու համար գտնվում են գիտակրթական համակարգի բարեփոխումների ճանապարհին: Այդպիսի երկրների շարքում է Հայաստանի Հանրապետությունը:

Մեր երկրի հետագա տնտեսական զարգացումը նույնպես էապես կախված է գիտության և կրթության մեջ իրականացվող ներդրումներից: Հայաստանի Հանրապետությունը չունի հարուստ բնական ռեսուրսներ և տնտեսական առաջընթացին նպաստող աշխարհաքաղաքական դիրք: Այս պատճառով տնտեսական զարգացումն առավելապես կարող է հիմնվել նոր գիտատեխնիկական, տեղեկատվական և տեխնոլոգիական լուծումների վրա:

Անկախ պետականության ժամանակաշրջանում մեր հանրապետության գիտակրթական համակարգն անցել է որոշակի փոթությունների միջով, իսկ ներկայումս կանգնած է բարեփոխումների ուղու վրա: ՀՀ գիտակրթական համակարգի հետագա զարգացման ռազմավարության մշակման նպատակով հատկապես կարևոր է մեր նորագույն պատմության ժամանակաշրջանի համար գնահատել համակարգի և տնտեսության փոխառնչությունները:

Զարգացման և տնտեսական աճի վրա գիտության և կրթության ներազդեցության գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է հիմնախնդրի հետազոտության միջազգային հարուստ փորձի վրա:

Համախառն ներքին արդյունքի ծավալի և աճի տեմպերի վրա գիտության և կրթության ներգործության գնահատման նպատակով հաշվարկվել է այդ ոլորտների հանրային նշանակության (պետական, մասնավոր, դրամաշնորհային)

գիտական աշխատանքների և կրթական ծառայությունների ծավալի փոփոխության ուղղակի ազդեցությունը տնտեսական զարգացման ընթացքի վրա, ինչպես նաև դիտարկվել է նրա վրա գիտատեխնիկական առաջադիմության և կրթության՝ իբրև տնտեսական շարժընթացի գործոնների ներգործությունը:

ՀՆԱ-ի աճի վրա անմիջական ազդեցության համար էական են նորամուծական և գիտահետազոտական ոլորտներում, մարդկային կապիտալում ներդրումները, միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ դրամաշնորհային ծրագրերի ընդլայնումը, կորպորատիվ բնույթի նորամուծական, գիտակոնստրուկտորական մշակումներում ներդրումները: Դրանք ուղղակիորեն մեծացնում են ՀՆԱ-ի ծավալը և աճի տեմպերը՝ որպես կրթական և գիտատեխնիկական ծառայությունների ծավալն ընդլայնող գործոններ: Պետական բյուջեի հաշվին մասնավոր ֆինանսավորմամբ, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերով կատարվող գիտակրթական գործունեության արդյունքներն արտացոլվում են երկրի ՀՆԱ-ում իբրև շուկայում գործող սուբյեկտների (այդ թվում՝ պետության) կողմից գնված գիտակրթական ծառայություններ: Ըստ այդմ գիտակրթական համակարգի նպաստը ( $\Delta P_{(S+E)}$ ) ՀՆԱ-ի ( $G\Delta P$ ) աճի տեմպի ( $P$ ) վրա հաշվարկվել է հետևյալ բանաձևերով.

$$\Delta P_{(S+E)} = \frac{(s_t - s_{t-1}) + (E_t - E_{t-1})}{G\Delta P_{(t-1)}} * 100,$$

$$\Delta P_{(S)} = \frac{S_t - S_{t-1}}{G\Delta P_{(t-1)}} * 100,$$

$$\Delta P_{(E)} = \frac{E_t - E_{t-1}}{G\Delta P_{(t-1)}} * 100,$$

որտեղ S և E-ն համապատասխանաբար արտահայտում են գիտատեխնիկական և կրթական ծառայությունների ծավալը t և t-1 ժամանակաշրջաններում:

ՀՆԱ-ի աճի վրա հեռանկարային ազդեցությունը դրսևորվում է երկարատև ժամանակահատվածում նոր տեխնիկայի ստեղծման ու ներդրման և բարձրորակ մասնագետների պատրաստման, երկրի մրցունակության մակարդակի բարձրացման միջոցով: Նման ազդեցության գնահատման համար կիրառվել են միջազգային պրակտիկայում ընդունված տնտեսամաթեմատիկական մոդելներ:

Ըստ կատարված հաշվարկների՝ գիտության և կրթության համատեղ ուղղակի ազդեցությունը ՀՆԱ-ի շարժընթացի վրա 1995-2013 թվականներին միջին հաշվով կազմել է 0,23 տոկոս, երբ այդ ժամանակաընթացքում ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը կազմել է շուրջ 7 տոկոս: Ի դեպ, կրթության ներազդեցության չափը կազմել է 0,25, գիտությանը՝ 0,03 տոկոս (տե՛ս աղյուսակ 1-ը):

ՀՆԱ-ի ծավալի և աճի վրա գիտության և կրթության ազդեցությունը 1995-2013 թթ., ինչպես նշվել է, գնահատվել է նաև տնտեսամաթեմատիկական մեթոդների օգտագործմամբ՝ կապիտալի և աշխատանքի գործոնների հետ համատեղ:

Տնտեսամաթեմատիկական մոդելը կառուցվել է արտադրական ֆունկցիայի մեթոդաբանությամբ, քանի որ նմանատիպ հետազոտությունների միջազգային փորձը, ինչպես նաև իրավիճակային վերլուծությունը ցույց են տալիս, որ ՀՆԱ-ի վրա կրթության, գիտության և այլ գործոնների առավել իրատեսական ազդեցությունը գնահատելու նպատակով կարևոր է մոդելում ընդգրկել ՀՆԱ-ն ձևավորող հիմնական

գործոնները՝ կապիտալը և աշխատանքը: Այդ առումով նպատակահարմար է հիմք ընդունել Կոբբ- Դուգլասի ֆունկցիայի տրամաբանությունը և նշված ցուցանիշների միջև կապը ձևականացնել ցուցային մոդելով: Այս դեպքում հաշվարկված մոդելը կներկայացնի նաև գործոնների էլաստիկության գործակիցները (ցուցիչները)՝ որպես հիմնավոր եզրակացությունների հիմք:

Ելնելով վերոնշյալից՝ մոդելի կառուցման նպատակով ընտրվել են հետևյալ կախյալ և անկախ փոփոխականները.

GDP - ՀՆԱ ընթացիկ գներով (մլրդ դրամ),

K - հիմնական միջոցների համախառն կուտակում (մլրդ դրամ),

L - զբաղվածների միջին տարեկան թիվը (հազ. մարդ),

E - կրթական ծառայությունների ծավալը (մլրդ դրամ),

S - գիտատեխնիկական աշխատանքների ծավալը (մլրդ դրամ):

Աղյուսակ 1

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐՈՐՈՒՄԸ  
ՀՆԱ-Ի ԱՃԻ ՏԵՄՊԻ ՎՐԱ**

	ՀՆԱ (մլրդ դր.)	ՀՆԱ հավելածը, %	Գիտահետազ. աշխ. ծավալը (մլրդ դր.)	Գիտության բաժ- նենալը ՀՆԱ-ում, %	ՀՆԱ հավելածին գի- տության նպատակն ովորոշողը (տոկոսային (են ենվր) դաժեւածն)	Կրթության բաժնե- ւաւը ՀՆԱ-ում, %	ՀՆԱ-ի հավելածին կրթության նպատ- ւան չափը (տոկո- սային կեստոկ)	ՀՆԱ-ի հավելածին կրթության և գիտութ- յան նպատակն չափը (տոկոսային կեստոկ)
1995	522,3	6,9	2,0	0,38	–	26,9	5,15	–
1996	661,2	5,9	2,0	0,30	0,00	27,9	4,22	0,19
1997	804,3	3,3	2,1	0,26	0,02	29,0	3,61	0,17
1998	955,4	7,3	2,7	0,28	0,07	30,2	3,16	0,15
1999	987,4	3,3	2,2	0,22	-0,05	38,4	3,89	0,86
2000	1031,3	5,9	2,6	0,25	0,04	39,5	3,83	0,11



2001	1175,9	9,6	3,1	0.26	0.05	42.9	3.65	0.33	0.38
2002	1362,5	13,2	4,2	0.31	0.09	49.8	3.66	0.59	0.68
2003	1624,5	14,0	5,0	0.31	0.06	56.6	3.48	0.50	0.56
2004	1907,9	10,5	4,9	0.26	-0.01	57.6	3.02	0.06	.0.06
2005	2242,9	13,9	5,9	0.26	0.05	63.6	2.84	0.31	0.37
2006	2656,2	13,2	6,5	0.24	0.03	74.7	2.81	0.49	0.52
2007	3149,3	13,7	7,0	0.22	0.02	89.1	2.83	0.54	0.56
2008	3568,1	6,9	7,8	0.22	0.03	96.9	2.72	0.25	0.27
2009	3141,7	14,1	9,4	0.30	0.04	113.4	3.61	0.46	0.51
2010	3460,2	2,2	8,7	0.25	-0.02	120.9	3.49	0.24	0.22
2011	3777,9	4,7	9,2	0.24	0.01	120.7	3.19	-0.01	0.01
2012	4000,7	7,2	9,7	0.24	0.01	125.8	3.14	0.13	0.15
2013	4272,9	3,5	10,2	0.24	0.01	129.9	3.04	0.10	0.11
Միջին տարեկան	-	7.0	-	-	0.03	-	-	0.25	0.23

Ներկայացնենք փոփոխականների ժամանակային շարքերը 1995-2013 թթ. համար<sup>23</sup>

Աղյուսակ 2

	GDP	K	L	E+S	S	E
1995	522.3	96.2	1476.4	28.9	2.0	26.9
1996	661.2	132.3	1435.6	29.9	2.0	27.9
1997	804.3	153.3	1372.2	31.1	2.1	29.0
1998	955.4	182.8	1337.3	32.8	2.7	30.2
1999	987.4	181.2	1298.2	40.5	2.2	38.4
2000	1031.3	190.1	1277.7	42.2	2.6	39.5

<sup>23</sup> [www.armstat.am](http://www.armstat.am)

2001	1175.9	208.0	1264.9	45.9	3.1	42.9
2002	1362.5	287.4	1106.4	54.1	4.3	49.8
2003	1624.6	373.6	1107.4	61.6	5.0	56.7
2004	1907.9	455.3	1081.7	62.6	4.9	57.7
2005	2242.9	668.3	1097.8	69.4	5.9	63.6
2006	2656.2	943.8	1092.4	81.2	6.5	74.7
2007	3149.3	1163.2	1101.5	96.1	7.0	89.1
2008	3568.2	1418.8	1117.6	104.8	7.9	96.9
2009	3141.7	1143.0	1152.8	122.8	9.4	113.4
2010	3460.2	1156.7	1185.3	129.6	8.7	120.9
2011	3777.9	985.9	1175.1	129.9	9.2	120.7
2012	4000.7	942.7	1172.1	135.5	9.7	125.8
2013	4272.9	1014.2	1163.8	140.1	10.2	129.9

Ընտրված փոփոխականների փոխհարաբերությունների բացահայտման նպատակով կառուցվել է զույգային կորելյացիոն գործակիցների մատրիցը.

Աղյուսակ 3

	GDP	K	L	E+S	S	E
GDP	1					
K	0.926713	1				
L	-0.6477	-0.6533	1			
E+S	0.983947	0.901012	0.59414	1		
S	0.983816	0.91323	0.65925	0.989375	1	
E	0.98306	0.899219	-0.58842	0.999933	0.987628	1

ՀՆԱ-ի վրա կրթության և գիտության ինտեգրալ ազդեցության գնահատման նպատակով կառուցվել են ՀՆԱ-ի վրա հետևյալ 3 փոփոխականների ազդեցությունները.

K - հիմնական միջոցների համախառն կուտակում (մլրդ դրամ),

L - զբաղվածների միջին տարեկան թիվը (հազ. մարդ),

E+S - գիտակրթական ծառայությունների գումարային ծավալը (մլրդ դրամ):

Հաշվի առնելով տնտեսական զարգացման վրա գիտության և կրթության ներգործության բազմակողմանի միջնորդավորված և երկարաժամկետ բնույթը, ինչպես նաև ներկայացված թվային շարքերի վարքը՝ նախապատվությունը տրվել է ՀՆԱ-ի և կրթություն ու գիտություն ցուցչային կապին, այսինքն՝ արտադրական ֆունկցիայի նոր գործոններով լրացված տարբերակին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիտակրթական համակարգը տնտեսական զարգացման վրա ազդում է ոչ թե անմիջականորեն, այլ որոշակի լագով, մոդելում կիրառվել է եռամյա լագի գործոնը: Ստացվել է հետևյալ արդյունքային մոդելը.

$$GDP=194K_t^{0.35} L_{(t)}^{-0.28} (S+E)_{t-3}^{0.54} R=0.992183 \quad (1)$$

Նույն մոտեցմամբ հաշվարկվել են նաև կապիտալ-աշխատանք-գիտություն-կրթություն, կապիտալ-աշխատանք-կրթություն, կապիտալ-աշխատանք-գիտություն համակցությունների ներգործությունը ՀՆԱ-ի ծավալի և շարժընթացի վրա:

ՀՆԱ-ի վրա գիտության և կրթության ազդեցությունների գնահատման նպատակով գնահատվել են ՀՆԱ-ի վրա հետևյալ 4 փոփոխականների ազդեցությունները.

K - հիմնական միջոցների համախառն կուտակում (մլրդ դրամ),

L - զբաղվածների միջին տարեկան թիվը (հազ. մարդ),

E - կրթական ծառայությունների ծավալը (մլրդ դրամ),

S - գիտատեխնիկական աշխատանքների ծավալը (մլրդ դրամ):

Հաշվարկների արդյունքում ստացվել են էլաստիկության հետևյալ գործակիցները.

$$GDP_{(t)}=4123-K_{(t)}^{0.28}L_{(t)}^{-0.58}S_{(t-3)}^{0.27}.E_{(t-3)}^{0.33} \quad R=0.993052 \quad (2)$$



Համաձայն (1) մոդելի՝ կապիտալի էլաստիկության գործակիցը ստացվել է 0.35, աշխատանքի համար -0.28, իսկ կրթության և գիտության գումարային ցուցանիշի համար՝ 0.54: Քանի որ հետազոտվող ժամանակաշրջանում զբաղվածների թիվը կրճատվել է 1995 թ. 1476.4-ից մինչև 1163.8 հազար մարդ 2013 թվականին, ապա այդ գործոնի էլաստիկության գործակիցը ստացել է համապատասխան նշանակություն:


Նույն բնույթի մոդել լուծվել է նաև 1995-2008 և 1995-2010 թվականների համար, ըստ հաշվարկների՝ կապիտալի էլաստիկության գործակիցը համապատասխանաբար ստացվել է 0.47 և 0.4, իսկ կրթության և գիտության գումարային ցուցանիշի համար՝ 0.17 և 0.3: Հիմնական միջոցների համախառն կուտակման ցուցանիշը ներդրումների նվազման հետևանքով 2011-2013 թվականներին նախորդ ժամանակաշրջանի համեմատ դրսևորել է նվազման միտում, ինչի արդյունքում

գիտակրթական համակարգի էլաստիկության գործակիցը, ըստ վերջին մոդելի, աճել է, կապիտալին՝ նվազել: Ուստի կարելի է եզրակացնել, որ տարբեր տարիների ընդգրկմամբ հաշվարկային միջին էլաստիկության գործակիցը գիտակրթական համակարգի համար տատանվում է 0.2-0.3-ի միջակայքում: Այսպիսով, ըստ ստացված արդյունքների, ՀՆԱ-ի տարեկան ծավալի 20-30 տոկոսը 1995-2013 թթ. ապահովվել է գիտության և կրթության ոլորտների հաշվին:

Դիտարկվել է նաև կրթության և գիտության ոլորտների առանձին ազդեցությունը ՀՆԱ-ի շարժընթացի վրա (երկրորդ մոդել): Էլաստիկության գործակիցները համապատասխանաբար կազմել են կրթության համար 0.33, գիտության համար՝ 0.27: Ընդհանուր առմամբ բոլոր մոդելային հաշվարկներում ՀՆԱ-ի շարժընթացում համեմատաբար ցածր է գիտության նշանակությունը:

Ուշագրավ է ՀՆԱ-ի, գիտահետազոտական աշխատանքների և կրթական ծառայությունների ծավալների գրաֆիկական վերլուծությունը: Նշված ցուցանիշները հետազոտվող ժամանակաընթացքում աճում են, սակայն ՀՆԱ-ի հավելվածին կրթության և գիտության նպաստման չափը դրսևորում է դանդաղ, սակայն կայուն նվազման միտում:





Այդ երևույթը փաստում է, որ գիտակրթական համակարգը, հատկապես գիտահետազոտական աշխատանքները նպատակաուղղված չեն նորամուծական զարգացմանը, թույլ է գիտություն-արտադրություն կապը, հիմնարար գիտության ձեռքբերումները չեն առարկայանում կիրառական գիտակոնստրուկտորական մշակումների արդյունքում, չեն դառնում նոր տեխնոլոգիաների ու արտադրանքի տեսակներ, ինչին պետք է հաջորդի դրանց առևտրայնացումը:

Վերը բերված ցուցանիշներն ապացուցում են գիտության և կրթության բնագավառում նվաճումների, մասնավորապես գիտելիքի արժեքի և ազգային հարստության վերածման վիճակը: Սակայն կատարված հաշվարկները վկայում են, որ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով այդ գործընթացները նկատելիորեն հետ են մնում զարգացած երկրներում ընթացող իրողություններից:

Տնտեսության զարգացման գործում գիտության և կրթության նշանակության բարձրացման հույժ կարևորության մասին է վկայում նաև ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը, որում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը շարունակում է մնալ ցածր (9.9 %), իսկ մշակող արդյունաբերության կազմում գերակշռում է սննդամթերքի արտադրությունը (56.5%), մինչդեռ մեքենաշինական ուղղվածության արտադրանքի տեսակարար կշիռը 2.1 % է, քիմիական և դեղագործական արդյունաբերությանը՝ շուրջ 2, համակարգիչների, էլեկտրոնային օպտիկական սարքավորումների արտադրությունը՝ 0.8%: Այսպիսով, զուտ գիտատար արտադրանքի ծավալը, ներառյալ տեղեկատվության և կապի ծառայությունները, կազմում է ՀՆԱ-ի 4.5 %-ը, ինչը խիստ ցածր ցուցանիշ է:

Գիտակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, արտադրություն-գիտություն կապի սերտացման վերաբերյալ ռազմավարական բնույթի երաշխավորություններ ներկայացվել են որոշ հրապարակումներում<sup>24</sup>:

Ստորև հակիրճ կներկայացվեն արդի փուլում տնտեսության նորամուծական զարգացման, մեր համոզմամբ, գերակա ուղղությունները:

XX դարի 90-ական թվականների սկզբից, երբ հռչակվեց ՀՀ անկախությունը, փոխվեց քաղաքական ու տնտեսական համակարգը, երկիրը հայտնվեց պատերազմական իրավիճակում և Ադրբեյջանի ու Թուրքիայի կողմից տնտեսական

---

<sup>24</sup> *Մուվարյան Յու. Մ., Հարությունյան Վ. Լ., Խաչատրյան Վ. Վ.*, Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը, Ե., «Գիտություն», 2011, էջ 144-149, նույն հեղինակների՝ Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Ե., «Գիտություն», 2013, 232 էջ:



շրջափակման մեջ, ընտրվեց և հաջողությամբ գործադրվեց գիտական ներուժի պահպանման ռազմավարությունը: Ներկայումս փոխվել է իրավիճակը, և թեև շարունակվում է տրնտեսական շրջափակումը, ի հայտ են եկել նաև աշխարհաքաղաքական նոր մարտահրավերներ, սակայն տնտեսական զարգացման, երկրի պաշտպանունակության ամրապնդման ռազմավարական շահերը պահանջում են անցնել գիտական ներուժի օգտագործման և զարգացման ռազմավարության:

Դատելով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալի շեշտակի աճով (10,2 մլրդ դրամ 2013 թ., 1995 թ. 2 մլրդ դրամի համեմատ)՝ կարող է թվալ, թե այդ անցումը կատարվել է: Սակայն դա չի ապացուցվում նվաճված որոշակի գիտատեխնիկական արդյունքներով, մասնավորապես մշակված և ներդրված արտադրանքի նոր տեսակներով և տեխնոլոգիաներով, ինչպես նաև տնտեսության գիտատարության աստիճանով: Իհարկե, ֆինանսավորման աճն ուղեկցվել է գիտության կազմակերպման որոշակի առաջընթացով, գիտական հրապարակումների, այդ թվում՝ արտասահմանյան հանդեսներում, էական ավելացմամբ: Սակայն էականը տնտեսության նորամուծական զարգացումն է, որը դեռևս սպասվում է:

Կատարված վերլուծությունից (հատկապես գրաֆիկական) ակնհայտ է, որ առաջացել է խզում գիտության նվաճումների, գիտական գաղափարների ստեղծման ու դրանց կիրառության և առևտրայնացման գործընթացների միջև: Նույնը վերաբերում է կրթությանը. պատրաստվում են բարձր որակավորման կադրեր, որոնց մի մասը աշխատանք է որոնում և գտնում արտասահմանյան երկրներում, տեղի է ունենում «ուղեղների արտահոսք» կոչված երևույթը. այդպիսով,

գիտակրթական ստեղծված ներուժն ամբողջապես չի ծառայում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման շահերին: Այս առումով, անշուշտ, կարևորագույն խնդիրը գիտության և արտադրության փոխառնչությունների սերտացումն է, ինչը հնարավոր է, եթե.

- գիտության ֆինանսավորման համակարգ ներդրվեն մասնակի պատվերային և գործընկերային սկզբունքները,
- գիտության կառավարման համակարգը նպատակաուղղված լինի նորամուծական զարգացման, գիտություն-արտադրություն ամուր կապի ապահովմանը:

Գիտական ներուժի պահպանման և զարգացման, հատկապես հիմնարար գիտությունների վերելքի ապահովման համար կարևոր է բազային ֆինանսավորման սկզբունքի պահպանումը: Սակայն ֆինանսավորման այդ եղանակը մասամբ, իսկ ծրագրանպատակային ձևն ամբողջությամբ պետք է ծառայեն որոշակի արտադրատեխնոլոգիական խնդիրների լուծմանը, այսինքն՝ հարկ է գործադրել «Ֆինանսավորում որոշակի պատվերի կատարման համար» սկզբունքը: Նման մոտեցումը ենթադրում է ամբողջացնել ու մեկ կազմակերպության մեջ շարունակական դարձնել հիմնարար հետազոտություններ-կիրառական մշակումներ պարբերաշրջանները և կատարելագործել գիտության ֆինանսավորման ու նորամուծական գործունեության խրախուսման կառուցակարգերը: Ֆինանսավորման համակարգի պարտադիր փոփոխություններից է անցումը ընթացիկ (տարեկան կտրվածքով) ֆինանսավորումից ողջ պարբերաշրջանի՝ գիտական-կիրառական մշակումներ-առևտրայնացում, նպատակային հատկացումներին: Գիտական-կոնստրուկտորական մշակումների

առևտրայնացման գործում էական է պետություն-մասնավոր հատված համագործակցությունը նորամուծական գործունեության ծավալման համար խիստ անհրաժեշտ ռիսկային ներդրումների ներգրավման համար: Խրախուսման կառուցակարգի միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող բաղադրիչներից են ներդրումային հարկային վարկը, տեխնոլոգիական սարքավորումների արագացված ամորտիզացիան, նորաստեղծական գույքի (լաբորատոր սարքավորումներ, շենքեր և այլն) գրոյական հարկումը, նպատակային (թիրախային) հարկային արտոնություններ տրամադրելը, ներգրավված աշխատակիցների նյութական ու բարոյական խթանումը և այլն:

Գիտության կառավարման համակարգին ներկայացվող հիմնական պահանջը նրա առաքելության՝ երկրի տնտեսության նորամուծական զարգացման ապահովումն է: Գիտության, կրթության, տնտեսության ինտեգրման և կառավարման կատարելագործման հիմնախնդիրները լուսաբանվել են գիտական գրականության մեջ, և մշակվել են երաշխավորություններ գիտության կառավարման կազմակերպական կառուցվածքը իր առաքելությանը համապատասխանեցնելու նպատակով<sup>25</sup>: Այս առումով առաջարկվում են գիտության կառավարման բարեփոխման հետևյալ տարբերակները.

- ստեղծել գիտության և տեխնոլոգիաների նախարարություն, որի գլխավոր խնդիրները պետք է լինեն գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրագործումը, նպատակային (պատվերային) գիտական հետազոտությունների իրագործման կազմակեր-

---

<sup>25</sup> Մասնավորապես տե՛ս Սուվարյան Յու. Մ., Տնտեսություն, գիտություն, կրթություն, Ե., «Գիտություն», 2014, էջ 225-253:

- պումը, նորամուծական գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, գիտություն-արտադրություն կապի ապահովումը,
- պայմանագրային հիմունքներով Գիտությունների ազգային ակադեմիային օժտել երկրում գիտական և նորամուծական գործունեության ապահովման լիազորություններով՝ նրան հանձնելով բոլոր ճյուղային (ոլորտային) գիտահետազոտական հաստատությունները և բուհական գիտության համակարգման լիազորությունները:

Ընդհանուր առմամբ գիտակրթական համակարգի կառավարման կատարելագործումը կարևորագույն խնդիր է, նրա հիմնավոր լուծումն էականորեն կարող է նպաստել տնտեսության նորամուծական զարգացմանը, երկրի մրցունակության մակարդակի բարձրացմանը, տնտեսական ու սոցիալական վերելքին, ռազմավարական անվտանգության ամրապնդմանը:

#### **1.4.ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\***

##### ***Նորամուծական ներուժի մեկնաբանությունները, գնահատման սկզբունքները և խնդիրները***

Գիտատեխնիկական սրընթաց առաջադիմության արդի պայմաններում նորամուծական գործունեությունն ակնհայտ

---

\* Առաջին անգամ հրատարակվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» (2017, թ. 1) հանդեսում:

ազդեցություն ունի տնտեսական առաջընթացի վրա: Ուստի կարևոր են այդ ազդեցության, ինչպես նաև նորամուծական ներուժի գնահատումը<sup>26</sup>: Վերջինս բավականին բարդ գործընթաց է, և գիտական հանրությունը բոլորովին վերջերս է սկսել զբաղվել այդ բացառիկ կարևոր խնդրով: Ներկայումս առկա են խնդրի լուծման տարբեր և հաճախ նույնիսկ միմյանց հակասող մոտեցումներ: Պատճառը թերևս այն է, որ տարբեր երկրներում և տնտեսական զանազան համակարգերում նորամուծական գործունեության կառավարումն իրականացվում է տարբեր մոդելներով, և այդ առումով հնարավոր չէ կիրառել միասնական մեթոդաբանություն: Նորամուծությունն ի վերջո պետք է տեղ գտնի շուկայում, սակայն մինչ այդ այն որոշակի ճանապարհ պետք է անցնի: XXI դարում նորամուծական ներուժի գնահատումը հատկապես կարևորվում է, քանի որ արդի տնտեսությունն ավելի «նորամուծական» է դառնում, իսկ գիտություն-տնտեսություն կապը՝ առավել սերտանում: Իհարկե, տնտեսական ներուժը չի կարող հենվել միայն նորամուծական համակարգի վրա: Կարելի է պնդել, սակայն, որ վերոնշյալ կապի սերտությունը կապված է նաև երկրի զարգացման մակարդակի հետ: Այս առումով ավելի բարձր զարգացում ունեցող երկրներում առկա է նորամուծական առավել արդյունավետ համակարգ: Այն տնտեսությունները, որոնք առավելապես հենված են բնական ռեսուրսների վրա, ի վերջո պետք է ընտրեն նորամուծական ուղին: Զարգացման այդպիսի ռազմավարությունը նպատակային է նաև մեր երկրի տնտեսության համար:

---

<sup>26</sup> Տնտեսական առաջընթացի վրա նորամուծական գործունեության ազդեցության գնահատման մասին տե՛ս սույն աշխատության 1.3 հատվածում:

Նորարարական ներուժի գնահատումը հիմնված է նախ և առաջ նորամուծական ներուժի մեկնաբանման վրա: Նորարարական կարողությունն հասկացությունը տնտեսագիտական գրականության մեջ բացատրվում է բազմազան մոտեցումներով:

Որոշ աղբյուրներում<sup>27</sup> որպես նորամուծական ներուժ ներկայացվում է նորարարական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների տարբեր տեսակների ամբողջությունը: Այս մեկնաբանությունն իր բնույթով ռեսուրսային մոտեցում է: Այս տեսակետի կողմնակիցների կողմից գործածվող սահմանումները կրում են միայն տնտեսական համակարգի ներուժի և հնարավորությունների, ոչ թե գործընթացների և արդյունքի շեշտադրումը: Վերջիններիս գնահատումը առավել իրատեսական բովանդակություն կարող է ունենալ, քանի որ որպես նորամուծություն է դիտվում արդեն իսկ շուկայում առկա նորարարական արտադրանքը: Այս առումով մեկ այլ մեկնաբանմամբ<sup>28</sup> այդ ներուժը համակարգի՝ փոփոխությունների ենթարկվելու կարողությունն է շուկայում ձևավորված պահանջմունքների բավարարման նպատակով: Այսինքն՝ դիտարկվում է նորարարական կարողությունը նորարարական գործունեության արդյունքի տեսանկյունից, այսինքն՝ իրական արտադրանքի, որը ստացվել է նորարարական գործընթացի արդյունքում: Այս դեպքում նորարարական կարողությունը ներկայացված

---

<sup>27</sup> [www.finam.ru](http://www.finam.ru)

<sup>28</sup> Кравченко С.И., Кладченко И.С. Исследование сущности инновационного потенциала. Науч. труды Донецкого национального технического университета. Сер.: экономическая. Вып. 68. Донецк: ДонНТУ, 2003.

է որպէս հնարավոր, ապագայում ստեղծվելիք նորարարական արտադրանք:

Տնտեսագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել մի տեսանկյունի, ըստ որի՝ նորարարական ներուժը անհրաժեշտ է դիտարկել որպէս գիտատեխնիկական կամ մտավոր-ստեղծագործական կարողություն: Տվյալ մոտեցումը այնքան էլ հիմնավորված չէ, քանի որ, համաձայն այդ տեսակետի, նորարարական գործունեությունն արտահայտվում է միայն ցուցաբերված կարողությունների շրջանակներում:

Հեղինակներից շատերը, որոնք ուսումնասիրում են տնտեսական համակարգի նորարարական կարողության քանակական գնահատականը՝ ելնելով նորարարական կարողության՝ ունակություն, հնարավորություն և պատրաստակամություն լինելու սահմանումից, նորարարական կարողության հաշվարկի ժամանակ նորարարական ներուժը ներկայացնում են որպէս ռեսուրսների, ենթակառուցվածքների և արդյունքի ինտեգրում: Այս մոտեցմամբ նորամուծական ներուժը սահմանվում է որպէս մի համակարգ, որը միավորում է դրա երեք բաղկացուցիչ տարրերը՝ ռեսուրսային, ներքին և արդյունքային, որոնք գոյություն ունեն փոխադրեցության մեջ և պայմանավորվում են մեկը մյուսով<sup>29</sup>: Ներուժը սահմանված է նաև որպէս նորամուծությունների ստեղծման, իրականացման հնարավորություն, միջազգային մակարդակին համապատասխանող նորամուծություններ ընդունելու պատրաստակամություն հետագա արդյունավետ օգտագործման համար<sup>30</sup>: Ա. Բախտիզինի և այլոց մեկնաբան-

---

<sup>29</sup> Кокурин Д.И. Инновационная деятельность. М.: Экзамен, 2001.

<sup>30</sup> Шляхто И.В. Оценка инновационного потенциала региона. Управление общественными и экономическими системами. 2007. № 1.

մամբ<sup>31</sup>. նորարարական կարողությունը երեք բաղկացուցիչներից կազմված համակարգ է, որը ներառում է հետևյալ տարրերը՝ նորարարություններ ստեղծող սուբյեկտներ, նորարարական միջնորդներ, նորարարությունների սպառողներ:

Ի վերջո նորամուծական կարողության մեծությունը պարամետր է, որ թույլ է տալիս տարածաշրջանին գնահատել իր նորարարական գործունեության հնարավորությունները և որոշել նորարարական զարգացման ռազմավարությունը: Այս մոտեցմամբ որոշ հեղինակների կողմից առաջարկվում է բացահայտել երկրի այսպես կոչված «թաքնված» ռեսուրսները կամ հնարավորությունները՝ առաջիկայում դրանք երկրի նորամուծական համակարգում ինտեգրելու և իրականացման նպատակով: Իհարկե, այս մոտեցումը հիմնավորված է, սակայն այն չի բացահայտում ընթացիկ իրավիճակը<sup>32</sup>:

Արտասահմանյան աղբյուրներում<sup>33</sup> նորամուծությունը առավելապես բնորոշվում է որպես նորարարություն, որը

---

<sup>31</sup> Бахтизин А. Р., Акинфеева Е. В. Сравнительные оценки инновационного потенциала регионов Российской Федерации. А. Р. Бахтизин, Е. В. Акинфеева. Проблемы прогнозирования. 2010. № 3. С. 73–81.

<sup>32</sup> Чекулина Т. А., Тамахина Е. А. Инновационный потенциал региона: содержательные особенности и теоретические аспекты исследования. Т. А. Чекулина, Е. А. Тамахина. Вестник ТГУ. 2011. № 2 (94). С. 65–70

<sup>33</sup> Claire Nauwelaers, A. Reid Methodologies for the evaluation of regional innovation potential / Claire Nauwelaers, A. Reid// Scientometrics. 2005. Volume 34. Number 3. p. 497–511.

Kalcsú Zoltán, Magyar Dániel. Regional Situation Analysis on the Innovative potential of the West — Transdanubian Region. / South East Europe Transnational Cooperation Programme «Jointly for our common future» Project FIDIBE — «Development of Innovative Business Parks to Foster Innovation and Entrepreneurship in the SEE Area». Written by Pannon Novum



արդեն պատրաստ է իրացման, այսինքն՝ որպես արդյունք, ընդ որում դիտարկվում է ինչպես «սեփական», այնպես էլ ձեռք բերված նորամուծությունը:

Նորարարական կարողության մեծությունից է կախված նորարարական ռազմավարության ընտրության և իրականացման համար կառավարչական որոշումների ընդունումը: Տարածաշրջանի նորարարական ներուժը կազմված է արտադրատեխնոլոգիական, կադրային, տեղեկատվական, ֆինանսական, գիտատեխնիկական, կազմակերպչական, նորարարական մշակույթի, սպառողական սեգմենտի կարողությունների համակարգից<sup>34</sup>:

Նորամուծական կարողության համալիր գնահատումը ենթադրում է, առաջինը՝ ցուցանիշների գիտականորեն հիմնավորված համակարգի գոյություն, երկրորդը՝ վիճակագրական բազայի առկայություն: Ամենակարևորը՝ նորարարական կարողության ցուցանիշը ոչ միայն կանխորոշում է տարածաշրջանի հետագա զարգացումը, այլ նաև բնորոշում է տարածաշրջանի՝ նորամուծությունների տարբեր տեսակների ստեղծմանը, յուրացմանը և տարածմանը, նորարարական գործունեության արդյունքների իրականացմանը պատրաստ լինելու աստիճանը: Նորամուծական ներուժի գնահատման վերաբերյալ հետազոտություններ սկսել են իրականացվել միայն վերջին 15 տարիների ընթացքում: Դրա գնահատման առումով առկա են մի շարք խնդիրներ, որոնց շուրջ

---

Nonprofit Ltd. on behalf of West Pannon Regional Development Company.  
November 2009.

<sup>34</sup> Бахтизин А. Р., Акинфеева Е. В. Сравнительные оценки инновационного потенциала регионов Российской Федерации. А. Р. Бахтизин, Е. В. Акинфеева. Проблемы прогнозирования. 2010. № 3. С. 73–81.

դեռևս ընթանում են ակտիվ քննարկումներ: Փաստենք, որ չկա հստակ ընդհանրական մոտեցում կամ մոդել: Քննարկվում են նորամուծական ներուժի գնահատման տարբեր սկզբունքներ, որոնք հատուկ են տարբեր ուղղությունների կամ ոլորտների, մակարդակների, ինչպես նաև երկրների:

Նորամուծական գործունեության գնահատման համար գիտական հանրության կողմից քննարկվում են բազմաթիվ խնդիրներ: Առանձնացնենք դրանցից մի քանիսը:

Ներուժի գնահատման հիմնական խնդիրը նորամուծական գործունեության համակարգի հիմնական սկզբունքի կամ մոդելի բնորոշումն է, որի հիման վրա կներկայացվեն գնահատման գործոնները: Առանձնանում են երկու մոտեցումներ՝ գիտությունից դեպի նորամուծություն, շուկայից դեպի նորամուծություն:

Առաջին մոտեցմամբ նորամուծական գործունեությունը ուղղակիորեն հիմնված է գիտական ներուժի վրա: Այն երկրներում, որտեղ հզոր է գիտական ներուժը, նորամուծական գործունեությունն առավել ակտիվ է: Այստեղ կարևոր հարցադրում է այն, թե նորամուծական գաղափարը ծնվում է գիտահետազոտական դաշտում, թե՞ դա առավել բիզնես նախաձեռնություն է: Թերևս կարելի է պնդել, որ իրականում առկա են երկու մոդելներն էլ: Մի դեպքում գիտահետազոտական գործունեությունը նորամուծության աղբյուր կարող է լինել, մեկ այլ դեպքում բիզնես գործունեությունը կամ շուկան նորամուծական խնդիր կամ նորամուծության պահանջ կարող է առաջադրել: Ըստ էության կարող է լինել գիտություն տնտեսական դաշտից դուրս կամ առանց նորամուծության, սակայն նորամուծություն առանց տնտեսական հետևանքների հնարավոր չէ պատկերացնել:

Գլխավոր խնդիրներից է նաև այն, թե արդյոք գիտությունը և նորամուծությունը էապես տարբեր գործունեություններ են, որոնք պետք է կառավարվեն տարբեր մոդելներով կամ որոնց պետք է աջակցել տարբեր եղանակներով, թե արդյոք պետք է վերաբերվել այդ երկու ոլորտներին՝ որպես փոխադարձ կախում ունեցողների և մեկ համակարգի մեջ: Համաձայն որոշ մոտեցումների՝ գիտահետազոտական ռեսուրսը անկասկած կարևոր դեր է խաղում բիզնես նորամուծության մեջ, սակայն հաջող նորամուծությունը պահանջում է գիտելիք, կարողություն և նախաձեռնություն: Ավելին՝ չկա հստակ գծված ճանապարհ հաջող հետազոտությունից դեպի նորամուծություն:

Քննարկումների կիզակետում է այսպես կոչված «նորարարական շղթան», համաձայն որի ցանկացած հետազոտություն բերում է նորարարության: Գրականության մեջ դիտարկվում են նորարարական շղթայի տարբեր մոդելներ, սակայն բոլորն էլ բերում են նույն գաղափարին: Այստեղ բավական բարդ է գնահատել հետազոտության արդյունքները, որոնք դեռևս շուկայական ապրանք չեն դարձել: Ոչ մի հետազոտական գործիք այստեղ կիրառելի չէ: Կարելի է նշել, որ նորարարական շղթան «չափելի» չէ: Մյուս կողմից՝ հետազոտությունից նորարարություն գործընթացը ցույց է տալիս, որ այս հայեցակարգային մոդելը տալիս է հետազոտության և նորարարության միջև կապի ոչ բավարար նկարագրություն մի շարք պատճառներով: Նորարարական գործընթացների զգալի մասը սկիզբ է առնում շուկայական գաղափարից: Փոքր բաժինն է ձևավորվում նոր տեխնոլոգիական հնարավորության մեջ, և նույնիսկ ավելի փոքր բաժինն է հիմնված նոր հետազոտության վրա: Ինչպես արդեն վերը նշվել է,

նորարարությունը զուտ գիտական սկզբունքի կիրառումը չէ: Դա ներառում է գիտելիքներ շատ այլ աղբյուրներից, և դժվարությունը նորարարության համակարգում գիտության և բիզնես ոլորտի միջև ճիշտ հաշվեկշիռ ապահովելն է: Գիտությունը և տեխնոլոգիան փոխկապված են: Հետազոտության ուղղությունը հաճախ որոշվում է նրանով, թե ինչ գործիքներ կարող է առաջարկել տեխնոլոգիան: Գիտության կարևոր դերն է նաև բացատրել, թե ինչպես և ինչու են գոյություն ունեցող տեխնոլոգիաներն աշխատում (որն էլ, իր հերթին, կարող է ցույց տալ, թե ինչպես դրանք կարող են կատարելաործվել):

Կարևոր է նաև գնահատել այսպես կոչված «նորարարական» տարածքը տնտեսության մեջ: Որոշ մոտեցումներով նորարարությունները տեսանելի են բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Օրինակ, համաձայն որոշ աղբյուրների, ԱՄՆ-ի տնտեսության հիմնական նորարարական ոլորտը համակարգչային տեխնոլոգիաներն են, սակայն տարբեր երկրներում այդ ոլորտները կարող են տարբեր լինել: Որոշ աղբյուրներ փաստում են, որ տնտեսական զարգացումը չի կարող պայմանավորված լինել սուկ «բարձր տեխնոլոգիաներ» կոչվող սեկտորով<sup>35</sup>: Նորարարական քաղաքականությունը պետք է նպաստի նորարարությանը բոլոր ոլորտներում, ոչ թե միայն կենտրոնանա բարձր տեխնոլոգիաների վրա: Կարելի է հիմք ընդունել մի այնպիսի մոտեցում, որ յուրաքանչյուր երկիր իր նորարարական ներուժը կարող է չափել՝ հենվելով այդ երկրում առավելապես զարգացած և այդ երկիրը

---

<sup>35</sup> Lennart Elg, *Innovations and new technology - what is the role of research? Implications for public policy*, VINNOVA Analysis VA 2014:05, Swedish Governmental Agency for Innovation Systems April 2014

ճանաչելի դարձրած ոլորտի ցուցանիշների վրա: Մեկ այլ խնդիր է «գիտություն–նորարարություն–բիզնես» ժամանակի լազր: Իհարկե, գիտական արդյունքը անմիջապես շուկայական ապրանք չի կարող դառնալ: Հատկապես դա վերաբերում է հիմնարար գիտական հետազոտություններին: Այստեղ նույնպես չի կարելի ունենալ մեկ ընդհանուր ստանդարտ: Սա ևս խնդիր է առաջացնում նորամուծական ներուժի գնահատման առումով:

Նորամուծությունը հաճախ կարող է «մնալ օդում» երկար ժամանակ՝ որպես գաղափար այն բանի, թե ինչին պետք է հասնել: Էյնշտեյնը գիտականորեն բնութագրել է լազերի բաղադրիչ մասերը դրա կիրառումից ավելի քան 60 տարի առաջ: Նորամուծությունը կիրառելու համար անհրաժեշտ կարողությունները շատ ավելի բարդ են, քան դրա հիմնական բաղադրիչների գիտական հիմքերը: Ժամանակն արտոնագրված գյուտից մինչև օգտակար արտադրանքի ստեղծումը նույնպես կարող է երկար լինել:

Տարբեր հայտնագործություններ միմյանցից խիստ տարբեր տևողությամբ ճանապարհ են անցել մինչև շուկայական ապրանք: Իհարկե հետաքրքիր կլինի պարզաբանել նաև հիմնավորումները՝ հասկանալու համար ժամանակի լազր բացատրող պատճառները: Այստեղ կարելի է ենթադրել, որ գործոնները բազմաթիվ են, սակայն մեր կարծիքով պատճառներն առավելապես շուկայական են: Եթե առկա է հստակ ձևավորված շուկայական պահանջ, ապա հայտնագործությունը արագ «կհայտնվի» շուկայում: Օրինակ, սինթետիկ մաքրող միջոցների պահանջ շուկայում 1880-ականներին դեռևս հավանաբար չի ձևավորվել, այսինքն՝ գիտական արդյունքը պահանջված չի եղել: Իհարկե, միանշանակ առկա են

այլ գործոններ՝ որոնց թվում նաև սուբյեկտիվ: Այդպիսի գործոններից են տեխնոլոգիական գործոնները: Առկա է գյուտը, սակայն վերջինիս արտադրությունը կազմակերպելը կապված է տեխնոլոգիական բարդությունների հետ: Ներկայացվածն իր հերթին նույնպես խոչընդոտ է նորամուծական տնտեսական «հետևանքների» հստակ գնահատման առումով:

### **ՀՀ-ում նորամուծական ներուժի գնահատման հնարավոր մոդելները**

Կատարված վերլուծությունների հիման վրա ստորև դիտարկվում են մեր հանրապետությունում նորամուծական զարգացման առկա ներուժի գնահատման հնարավոր մոդելները կամ լուծումները: Արևմտյան երկրների փորձը առավել օգտակար է, սակայն, ինչպես արդեն նշվեց, այդ մոդելները չեն կարող իրականացվել համապատասխան ցուցանիշների վիճակագրության բացակայության առումով: Սակայն սա չի կարող բացառել այդ մոդելների կիրառությունը որոշ ձևափոխություններով հանդերձ: Ռուսական փորձը այս տեսանկյունից առավել կիրառելի է, քանի որ մեր երկրում տարվող վիճակագրությունը և հետազոտությունների շրջանակն առավել համապատասխան են այդ երկրում կիրառվող մոդելներին: Տեղին է շեշտել նաև, որ ռուսական փորձը ինչ-որ չափով ներառում է արևմտյանը:

Նախ և առաջ հարկ է առանձնացնել մեր տնտեսության մեջ նորամուծական ներուժ ունեցող և գիտելիքահենք մի շարք ոլորտներ: Առաջնահերթությունը կարող է տրվել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, սակայն մեր երկրի համար ուշադրության արժանի են մի շարք այլ ոլորտներ

ևս, ինչպես օրինակ՝ սարքաշինությունը, դեղագործությունը: Որպես նորամուծական տարածք կարող են դիտարկվել նաև այնպիսի ավանդական ոլորտներ, որտեղ մեր երկիրը հաջողություններ է գրանցել, և որտեղ առավել մեծ է նորամուծական առաջարկների հնարավորությունը: Սա այն պարագայում, երբ նորամուծական գործունեությունը կարող է ծնվել շուկայում, և երբ արտադրությունը նորամուծության «պատվիրատու» է:

«Նորամուծական» տարածքում նորամուծությունը չափվում է արդեն ստացված արդյունքով:

ՀՀ-ում նորամուծական ներուժը կարող է գնահատվել առանձին ոլորտի համար կամ մակրոմակարդակում, քանի որ առանձին ձեռնարկությունների վերաբերյալ չկան համակարգված ցուցանիշներ:

Նորամուծական ներուժի գնահատման կարևորագույն խնդիրը համապատասխան ցուցանիշների ձևավորումն է: Մեր կողմից վեր են լուծվել համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեցող բազմազան ցուցանիշներ: Միջազգային կազմակերպությունների կողմից հաշվարկված ռեյտինգային ցուցանիշների (նորարարական ներուժի ինդեքս...և այլն) նպատակն այլ է: Դրանք կարող են կիրառվել տարածաշրջանային համեմատությունների համար, այլ ոչ թե որոշակի երկրի ներուժի բացարձակ գնահատման: Մակայն այս ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը՝ որպես ինտեգրալ ցուցանիշների, կարող է օգտակար լինել:

Ներկայումս ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, իհարկե, տրամադրում է որոշ ցուցանիշներ, որոնք բնութագրում են գիտական հետազոտությունների ոլորտը (հետազոտության և մշակումների ծախսերը, հետազոտական

կազմակերպությունների և անձնակազմի թիվը և այլն), արտոնագրային վիճակագրությունը, գիտական հրապարակումների տվյալները, ինչպես նաև ֆինանսատնտեսական և տեխնոլոգիական միջավայրի վերաբերյալ մակրոցուցանիշներ: Նորարարական ոլորտի արդյունավետության գնահատման սահմանափակ լինելն ակնհայտ է, քանի որ ընդհանուր առմամբ այդ ցուցանիշները նորարարական գործունեության մասշտաբի, արդյունքների և որակի մասին ամբողջական պատկերացում չեն տալիս: Սակայն մակրոհամակարգում նորարարական գործընթացների գնահատման և կանխատեսման եղանակների մշակման գործընթացում կարելի է օգտագործել ցուցանիշների բազմազան հավաքածուներ, ինչպես նաև ինտեգրալ ցուցանիշներ, որոնք կարելի է գեներացնել տարբեր վիճակագրական և մաթեմատիկական գործիքների՝ մասնավորապես կշռված միջինների օգնությամբ: Օրինակ՝ նորարարական գործունեության արդյունքները կարող են գնահատվել բյուջետային միջոցների օգտագործման և արդյունավետության տեսանկյունից: Իհարկե, այսպիսի հետազոտություններն ընդհանուր առմամբ հնարավորություն չեն ընձեռում բարձր ճշգրտությամբ գնահատելու մակրոմակարդակում նորարարական գործունեությունը:

Ընդհանրացնելով տնտեսական համակարգում նորարարական ներուժի գնահատման առկա մոտեցումների ուսումնասիրությունը, հիմնվելով հիմնականում ռուսական փորձի վրա՝ կարելի է առանձնացնել այն հիմնական ցուցիչների ամբողջությունը, որոնք կարող են բնութագրել մակրոմակարդակում նորարարական համակարգի զարգացման մակարդակը: Դրանք են գիտատեխնիկական զարգացման մակարդակի ցուցանիշները, շուկայական ինստիտուտների և



օրենսդրության զարգացման որակական ցուցանիշները, աշխատանքային ռեսուրսների կրթական մակարդակը, ֆինանսական ցուցանիշները, գիտելիքների փոխանցման և օգտագործման, ինչպես նաև տնտեսական աճի քանակական և որակական ցուցանիշները:

Նորամուծական ներուժի գնահատման նպատակով սովորաբար կիրառվում են կոմպլեքս կամ ինտեգրալ ցուցանիշներ, որոնք կարող են օգտակար լինել երկրի և տարածաշրջանի նորամուծական ռազմավարություն մշակելու համար<sup>36</sup>: Ինտեգրալ ցուցանիշը ներառում է մի շարք գործոններ, որոնք կարող են տարբեր լինել՝ ելնելով տարածաշրջանի կամ պետության առանձնահատկություններից: Ինտեգրալ ցուցանիշի մեջ ներառվող յուրաքանչյուր գործոնի համար անհրաժեշտ է կիրառել որոշակի կշռային ցուցանիշներ, որոնք ստացվում են փորձագիտական եղանակով: Այդ կշիռների միջոցով ցուցանիշները կարող են հաշվարկվել տարբեր մեթոդներով, մասնավորապես կշռված միջինի կամ միջին երկրաչափականի մեթոդով: Ինտեգրալ ցուցանիշի հաշվարկման նպատակով առաջարկվում է երեք մոտեցում:

1. Հիմնվելով ինտեգրալ ցուցանիշների հաշվարկման վերը նկարագրված փորձի վրա, ՀՀ նորամուծական ներուժի գնահատման նպատակով կարելի է կիրառել կշռային մեթոդը: Միաժամանակ տարբեր ցուցանիշների աճի ինդեքսների միջոցով կարող է իրականացվել նաև ՀՀ-ում նորամուծական ներուժի դինամիկայի վերլուծություն: Ըստ էության կարող են դիտարկվել ցուցանիշների ինչպես բացարձակ, այնպես էլ

---

<sup>36</sup> Узяков М.Н., Сапова Н.Н., Херсонский А.А. Инструментарий макроструктурного регионального прогнозирования: методические подходы и результаты расчетов . Проблемы прогнозирования. 2010. № 2.

հարաբերական մեծությունները: Հաշվարկների համար սովորաբար հիմք են ընդունվում հարաբերական ցուցանիշները<sup>37</sup>: Նախքան ցուցանիշների ինտեգրումը փորձագիտական մեթոդով անհրաժեշտ է սահմանել կշիռներ յուրաքանչյուր ցուցանիշի համար՝ հիմնվելով հետևյալ պայմանի վրա.

$$0,1 \leq k_i \leq 0,9 \\ \sum_{i=1}^n (k_i) = 1,$$

որտեղ  $k_i$  –ն  $i$ -րդ ցուցանիշի կշիռն է,  
 $n$ -ը՝ դիտարկվող ցուցանիշների թիվը:  
 Ինտեգրալ ցուցանիշը կբնորոշվի հետևյալ բանաձևով.

$$I = (k_1 * C_1) + (k_2 * C_2) + \dots + (k_n * C_n),$$

որտեղ  $C_i$  –ն  $i$ -րդ ցուցանիշի հարաբերական մեծությունն է:

I ցուցանիշը հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա համար: Հաշվարկելով ինտեգրալ ցուցանիշների շարքի աճի տեմպերը ամեն տարվա համար՝ կարելի է վերջիններս միջինացնելով (կիրառելով միջին երկրաչափականի մոտեցումը) պատկերացում կազմել երկրի կամ տարածաշրջանի նորամուծական զարգացման դինամիկայի վերաբերյալ.

$$D = \sqrt[n]{t_1 * t_2 * \dots * t_m},$$

---

<sup>37</sup> Հարաբերական մեծությունները հիմք ընդունելու տրամաբանությունը տարբեր որակի կամ չափայնության ցուցանիշները համադրելի տեսքով և չափայնությամբ (0-ից 1) ներկայացնելու մեջ է:

որտեղ  $D$ -ն նորամուծական ներուժի դինամիկայի ցուցանիշն է:

$t1 * t2 * ... * tm$  –ը ինտեգրալ ցուցանիշի (I) աճի տեմպերն են ըստ տարիների:

Այս մոտեցման հիմնական առավելությունը հաշվարկների պարզության մեջ է: Որպես թերություն կարելի է նշել ցուցանիշների կշիռների մոտավորությունը, որը կարող է հանգեցնել ոչ ճշգրիտ արդյունքների:

2. Հաշվարկվում է հարաբերական ցուցանիշների միջին երկրաչափականը, և այս պարագայում չեն կիրառվում փորձագիտական կշիռները.

$$I = \sqrt[n]{C1 * C2 * ... * Cn},$$

որտեղ  $C_i$  –ն  $i$ -րդ ցուցանիշի հարաբերական մեծությունն է,  $n$ -ը՝ դիտարկվող ցուցանիշների թիվը:

Համաձայն այս մոտեցման՝ տարածաշրջանի նորամուծական ներուժի բաղկացուցիչները ( $C_i$ ) բերված են համեմատելի տեսքի (դիտարկվում են հարաբերական ցուցանիշները): Այս մեթոդը հիմնականում կիրառվում է մի շարք տարածաշրջանների միջև՝ տվյալ տարածաշրջանի նորամուծական ռեյտինգը բացահայտելու նպատակով: Այս մոտեցմամբ հաշվարկվել են Սիբիրի ֆեդերալ օկրուգի տարածաշրջանների 2002-2005թթ. նորամուծական ներուժի գնահատականները<sup>38</sup>:

Վերոնշյալ մեթոդով կարելի է հաշվել նորամուծական ներուժի դինամիկայի ցուցանիշը (ինչպես 1-ին մոտեցմամբ):

---

<sup>38</sup> [Алексеев С. Г.](#), Экономические проблемы регионо и отраслевых комплексов, Проблемы современной экономики, N 2 (30), 2009.

3. Այս մոտեցմամբ տարբեր ցուցանիշների ազդեցությունները գնահատվում են էկոնոմետրիկ մեթոդով՝ զույգային ռեգրեսիոն գործակիցների միջոցով: Նախ և առաջ նկարագրված ցուցանիշների մեջ անհրաժեշտ է առանձնացնել մեր հանրապետությունում նորամուծական ներուժը ներկայացնող առավել նշանակալի վիճակագրական ցուցանիշը (որպես արդյունքային ցուցանիշ), որը հիմնականում արտացոլում է երկրի նորամուծական ակտիվությունը: Մեր վերլուծություններով դրանք արդյունաբերական «նորամուծական» ճյուղերի և տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության և ծառայությունների ծավալներն են ինչպես առանձին-առանձին, այնպես էլ զումարային: Այս ցուցանիշի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ուշադրության արժանի է, և կարևորվում է նորամուծական գործունեության «հետևանքը» տնտեսության հատկապես այն հատվածի համար, որն առավել մեծ հավանականությամբ է «կլանում» նորամուծությունները: Տնտեսության այդ հատվածում իրականացվում են այնպիսի ապրանքների արտադրություն և ծառայությունների մատուցում, որոնք հատկապես վերջին հինգ տարիների ընթացքում տարբեր աստիճանի տեխնոլոգիական փոփոխությունների են ենթարկվել: Հաշվարկված ցուցանիշը այլ ցուցանիշների հետ ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ում առանձնացված են նաև նորամուծական ներուժը բնութագրող ցուցանիշների բացարձակ և հարաբերական արժեքները: Այս աղյուսակում հարաբերական արժեքները հաշվարկվել են բարձր ճշգրտությամբ՝ էկոնոմետրիկ հաշվարկներում զգայնության աստիճան ապահովելու նպատակով: Այդ ցուցանիշների համար կառուցվել է

գույգային կորեյացիոն գործակիցների մատրիցան: Այդ մատրիցայի հիման վրա կրնորոշվեն այն ցուցանիշները, որոնք նշանակալի կորեյացված են արդյունքային գործոնի հետ, այսինքն՝ կբացահայտվեն առավել նշանակալի ցուցանիշները, որոնք կմիավորվեն ինտեգրալ ցուցանիշի մեջ:

Աղյուսակ 1

**Նորամուծական ներուժն արտահայտող ցուցանիշների բացարձակ և հարաբերական արժեքները (2010-2015թթ.)**

	2010	2011	2012	2013	2014	2015
Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակը, միավոր (SI)	81	72	72	62	66	70
Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ, % (SIR)	0.540072	0.449607	0.444637	0.381492	0.404759	0.415603
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը, մլն դրամ (SE)	7987.9	9276.6	9713.2	9355.7	10912	11929.9
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, % (SER)	2.30850638	2.455462	2.276641	2.053653	2.259856	2.370765
Գիտատեխնիկական աշխատանքներ ու մշակումներ իրականացնող գիտական աստիճան ունեցող մասնագետ-հետազոտողների թվաքանակը, հազ.մարդ (SP)	2.2	2	2	1.9	2.1	2

Գիտական աստիճան ունեցող մասնագետ-հետազոտողների մասնաբաժինը զբաղվածների մեջ, % (SPR)	0.18562268	0.170198	0.170532	0.163258	0.185267	0.186463
Ասպիրանտուրա ունեցող կազմակերպությունների քանակը, միավոր (AS)	51	47	47	55	62	59
Ասպիրանտուրա ունեցող կազմակերպությունների մասնաբաժինը, % (ASR)	0.34004534	0.293493	0.290249	0.33842	0.380228	0.350294
Տրված արտոնագրերի քանակը, միավոր (PT)	187	188	182	172	181	170
10000 զբաղված բնակչի հաշվով տրված արտոնագրերի քանակը, միավոր (PTR)	0.15777928	0.159986	0.155184	0.147792	0.159682	0.158493
Հիմնական կապիտալի համախառն կուտակումը, մլն դրամ (CP)	1156732	985877.2	1006835	966365.3	965486.6	1045047
Հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում, % (CPR)	33.4295878	26.09559	23.59884	21.21251	19.99506	20.76766
Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ (ծավալը մլն դրամ) (IT)	196717.3	198739.8	213906.9	234416.1	233830.3	235423.0
SՀS արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (ITR)	5.68513804	5.260526	5.013685	5.145626	4.842584	4.678435
Արդյունաբերական «նորամուծական» ձյուղերի ընդհանուր ծավալը (ID)( <i>մլն դրամ</i> )	20780.2	22168.7	22673.9	24437.5	24623.4	26825.3
Արդյունաբերական նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (IDR)	0.60054863	0.586792	0.531445	0.536423	0.509946	0.533085
SՀS և նորամուծական արտադրանքի և ծառայությունների ծավալը ( <i>մլն դրամ</i> ) (IN)	217497.5	220908.5	236580.8	258853.6	258453.7	262248.3

SՀS և նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (INR)	6.2857	5.8473	5.5451	5.682	5.3525	5.2115
--	--------	--------	--------	-------	--------	--------

Զույգային կորելյացիոն գործակիցների մատրիցան կառուցվել է ներգրավված ցուցանիշների հարաբերական արժեքների համար:

Ստացված զույգային կորելյացիայի գործակիցների միջոցով կարելի է գնահատել նաև գործոնների կշիռները հետևյալ մոտեցմամբ.

$$K_i = \frac{R_i}{\sum_{i=1}^m R_i},$$

որտեղ  $K_i$  –ն  $i$ -րդ ցուցանիշի կշիռն է,

$R_i$ –ն  $i$ -րդ ցուցանիշի արժեքն է (կորելյացիայի զույգային գործակիցը),

$m$ –ը՝ նշանակալի ցուցանիշների թիվը:

$K_i$  կշիռը հաշվարկվում է 1-ից  $m$  բոլոր նշանակալի ցուցանիշների համար: Կորելյացիայի բացասական կամ ոչ նշանակալի գործակիցներ ունեցող ցուցանիշները չեն ընդգրկվում նշանակալի գործակիցների շարքում: Կշիռները հաշվարկելուց հետո ինտեգրալ ցուցանիշը կարող է հաշվարկվել 1-ին մոտեցմամբ:

Կատարված կորելյացիոն վերլուծության հիման վրա նախ և առաջ ընդգծվում են նորամուծական ներուժի վրա ազդող նշանակալի գործոնները դիմամիկ համատեքստում կոնկրետ դեպքում վերջին 6 տարիների ընթացքում: Եթե դիտարկումների քանակն ապահովում է բավարար ազատության աստիճան, առավել նշանակալի ցուցանիշների համար կարող է կատարվել նաև ռեգրեսիոն վերլուծություն:

Ինչպես արդեն նշվել է, կորեյացված գործոնների շարքում դիտարկվում են երեք արդյունքային ցուցանիշներ՝ ՏՀՏ արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%), (ITR), արդյունաբերական նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%), ՏՀՏ և նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%), (INR): Առաջին և երրորդ ցուցանիշների դեպքում (ITR, IDR) նշանակալի են երկու գործոններ՝ գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ, % (SIR) և հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում, % (CPR): Երկրորդ ցուցանիշի համար նշանակալի են չորս գործոններ՝ գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ, % (SIR), հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, % (SER), 10000 զբաղված բնակչի հաշվով տրված արտոնագրերի քանակը միավոր (PTR) և հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում, % (CPR): Իհարկե, PTR-ի համար կապը բավական թույլ է արտահայտված, սակայն համապատասխան չափով էլ դա կինտեգրվի ընդհանուր ցուցանիշի մեջ:

Ունենալով վերոնշյալ պատկերը՝ նպատակահարմար է արդյունքային դիտարկել արդյունաբերական նորամուծական արտադրանքի և ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում (%), (IDR) ցուցանիշը, քանի որ գործոնների թիվը 4-ն է, այսինքն՝ առավելագույնը: Միջին երկրաչափականի միջոցով երկրորդ մոտեցմամբ կարելի է հաշվարկել 2010-



2015թթ. ընթացքում ՀՀ նորամուծական ներուժի ցուցանիշը (INNP).

$$INNP_T = \sqrt[4]{C_{SIR} * C_{SER} * C_{PTR} * C_{CPR}} = 0,49$$

Համաձայն ստացված արդյունքի՝ նորամուծական ներուժը 0-ից 1 միջակայքում գնահատվում է 0.49:

Սակայն այս ցուցանիշը չի կարող արտացոլել ընդհանուր պատկերը: Այդ նպատակով հաշվարկենք դիտարկվող 4 ցուցանիշների կշիռները և ընդգծենք դինամիկան:

Ստացված գույգային կորելյացիայի գործակիցների միջոցով կարելի է գնահատել նաև գործոնների կշիռները վերը նշված մոտեցմամբ:

Մեր դեպքում առաջարկված մեթոդով հաշվարկվել են 4 նշանակալի ցուցանիշների կշիռները.

$$K_{SIR} = 0.8 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.35$$

$$K_{SER} = 0.4 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.17$$

$$K_{PTR} = 0.2 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.09$$

$$K_{CPR} = 0.9 / (0.8 + 0.4 + 0.2 + 0.9) = 0.39$$

Ունենալով հաշվարկված կշիռները՝ կարելի է արդեն յուրաքանչյուր տարվա համար հաշվարկել նորամուծական ներուժը և ստանալ այդ ներուժի դինամիկան: Այդ նպատակով հաշվարկվել է նորամուծական ներուժի դինամիկան յուրաքանչյուր տարվա համար (INNP<sub>i</sub>), (աղյուսակ 2):


## Աղյուսակ 2

Ցուցանիշների կշռված արժեքները, ինտեգրալ ցուցանիշը և ինտեգրալ ցուցանիշի աճի տեմպերը

	Կշիռները	2010	2011	2012	2013	2014	2015
Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը գործող կազմակերպությունների մեջ, % (SIR)	0,35	0.1890252	0.1573625	0.1556230	0.1335222	0.1416657	0.145461
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում, % (SER)	0,17	0.3924461	0.4174285	0.3870290	0.3491210	0.3841755	0.40303
10000 զբաղված բնակչի հաշվով տրված արտոնագրերի քանակը միավոր (PTR)	0,09	0.0142001	0.0143987	0.0139666	0.0133013	0.0143714	0.014264
Հիմնական կապիտալի համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում % (CPR)	0,39	13.0375392	10.1772801	9.2035476	8.2728789	7.7980734	8.099387
Նորամուծական ներուժի ինտեգրալ ցուցանիշը INNP <sub>i</sub>		0.34233157	0.31322749	0.2966303	0.2676208	0.2794602	0.286878
Նորամուծական ներուժի ինտեգրալ ցուցանիշի աճի տեմպը			91.4982763	94.701224	90.220335	104.42395	102.6543

Հաշվարկները ցույց են տալիս՝ նորամուծական ներուժի դինամիկան վերջին հինգ տարիների ընթացքում էական միտում չունի, սակայն նկատվում է որոշ չափի նվազման միտում: 2014 -2015թթ. այն ցուցաբերում է դրական աճի տեմպ:

**Պճանկար 1. Նորամուծական ներուժի ինտեգրալ ցուցանիշի (INNPi) դինամիկան 2010-2015թթ.**



Միջին աճի տեմպը հաշվարկվել է միջին երկրաչափականի մեթոդով և հավասար է 96.5-ի: Սա նշանակում է, որ վերջին 5 տարիներին ցուցանիշի աճ չի նկատվել: Այդ երևույ-

թը բացատրվում է մեր երկրում գիտական հետազոտությունների արդյունքի և դրա առևտրայնացման միջև խզվածքով: Դա նշանակում է, որ նորամուծական ներուժի ավելացման համար գիտական բաղադրիչի հետ մեկտեղ հարկ է ակտիվացնել շուկայական ներդրումային գործոնը:

## ԳԼՈՒԽ 2.

### ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

#### 2.1. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\*

Տնտեսագիտության մեջ գրեթե արքայամատիկ ճշմարտություն է, որ տնտեսական գործունեության արդյունավետությունը կարող է գնահատվել ստացված արդյունքների և կատարված ծախսերի համադրմամբ: Սակայն միշտ ծագում են խնդիրներ արդյունքները և ծախսերը հաշվարկելու մեթոդական հարցերի շուրջ, քանի որ ծախսերը միատարր չեն (ընթացիկ և երկարաժամկետ ծախսեր, կենդանի աշխատանք և նյութական ծախսեր), իսկ արդյունքները ևս բազմաբնույթ են (այդ թվում՝ սոցիալական ուղղվածության) և հաճախ դժվար չափելի: Հանրային կառավարման արդյունավետության գնահատման առումով այս խնդիրներն ավելի բարդ են՝ հատկապես կառավարման մարմինների գործունեության արդյունքների խիստ բազմաբնույթ լինելու և չափելիության դժվարությունների պատճառով:

Ի դեպ, բոլոր մակարդակների կառավարման մարմինների գործունեության առանձնահատկությունների հաշվառ-

---

\* Առաջին անգամ հրատարակվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» (2019, թ. 1) հանդեսում:

մամբ, արևմտյան գործընկերները գտնում են, որ միայն արդյունքներ-ծախսեր համադրումը բավարար չէ կառավարման արդյունավետությունը գնահատելու համար: Թե՛ հանրային, թե՛ կազմակերպությունների կառավարման մարմինները պարտավոր են գործել իրավական դաշտում (հաճախ մասնակցել դրա ստեղծմանը), մշակել կազմակերպության զարգացման ռազմավարությունը ընթացիկ և երկարաժամկետ նպատակներով, հաշվարկել անհրաժեշտ ռեսուրսները, ճիշտ գնահատել ներքին և արտաքին միջավայրը, հատկապես գիտատեխնոլոգիական հնարավորությունները, մրցակցային սպառնալիքները, հնարավոր մարտահրավերները, զանազան ռիսկերը և այլն ու ապահովել սահմանված նպատակների իրագործումը: Կառավարման գիտական հիմնավորվածության աստիճանի այս չափանիշներով գնահատումը դիտարկվում է իբրև կառավարչական գործունեության որակական արդյունավետություն կամ արդյունքաբերություն<sup>1</sup>:

Որակական արդյունավետության գնահատման անհրաժեշտությունն ակնհայտ է դառնում նաև նրանից, թե ինչպես են ձևակերպվել հանրային կառավարման արդյունավետության գնահատման նպատակները միջազգային ծրագրերում<sup>2</sup>:

ա) Հանրային կառավարման արդյունավետությունը և արտադրողականությունը բարելավել պետական ծախսերի

---

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Кунц Г., О'Доннел С. Управление: Системный и ситуационный анализ управленческих функций, т. 1, М., Прогресс, 1981, с. 40. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента, М., Дело, 2000, էջ 48-50, Дафт Р. Л. Менеджмент, СПб, Питер, 2006, էջ 810-812:

<sup>2</sup> Evaluation of public administrations added value to the Lisbon strategy goals (UPDATE 2010):

ռացիոնալացման և վարչական գործընթացների վրա ծախսված ժամանակի կրճատման միջոցով՝ քաղաքացիներին և ձեռնարկություններին ավելի լավ ծառայություն մատուցելու համար:

բ) Կանոնակարգային բարեփոխումներ իրականացնել կարգավորիչ ազդեցության գնահատման և ավելի լավ կանոնակարգերի միջոցով:

գ) Վարչարարական բեռը ձեռնարկությունների և քաղաքացիների հետ աշխատանքային ընթացակարգերում կրճատել՝ բարելավելու համար աշխատանքային և գործարար միջավայրը:

դ) Մրցունակությունն ամրապնդել, որը տնտեսական ճգնաժամի արմատներից մեկն է Եվրոպայում:

ե) Հանրային ոլորտի վերակառուցման գործում ինստիտուցիոնալ փոփոխություններ կատարել՝ վերացնելով (միաձուլելով) վարչական ստորաբաժանումների կամ մակարդակների քանակը՝ նպատակաուղղված լինելով սիներգիա գտնելու, և նոր ու ավելի արդյունավետ կառուցվածք ստեղծել համընկնող գործառույթները հեռացնելու միջոցով:

զ) Նորարարությունը խթանել և հնարավորություն տալ որպես հիմնական աջակցություն արտադրողականության բարձրացման համար բոլոր տնտեսական ոլորտներում:

է) Թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարձրացնել՝ տեղեկատվությունը բացելով քաղաքացիների համար՝ հրապարակային բացատրելու գործողությունները և հանրային կատարողականը՝ շահագրգիռ կողմերին գնահատման ներկայացնելու համար:

ՄԱԿ-ի շրջանակներում օգտագործում են հանրային կառավարման արդյունքների գնահատման առնվազն երեք տեսակի ցուցանիշներ<sup>3</sup>.

- իրավիճակային (ազդեցության) ցուցանիշներ, որոնք ապահովում են պատկեր, թե արդյոք ՄԱԿ-ի համար կարևոր նշանակություն ունեցող զարգացումներն իրականում տեղի<sup>6</sup> են ունենում (ազդեցության և իրավիճակային ցուցանիշներն ըստ էության նույնն են, թեև առաջինը կարող է ավելի որոշակի լինել, և վերջինս կարող է ավելի ընդհանուր լինել): Իրավիճակային ցուցանիշներն ըստ էության դինամիկ ենթատեքստում բնութագրում են զարգացման իրավիճակը: Այդպիսի ցուցանիշներ կիրառվում են ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման ծրագրերի գնահատման նպատակով և արտացոլում են երկարաժամկետ զարգացման արդյունքներ կամ ազդեցություն: Առկա ցուցանիշներն ապահովում են երկրի մակրոտնտեսական զարգացման վիճակի ընդլայնված պատկերը: Այդ ցուցանիշներն առավել օգտակար են երկրի կառավարման արդյունավետության գնահատման համար՝ ցույց տալով, թե ինչպես են իրականացվում այս կամ այն զարգացման ռազմավարությունները: Այսպիսի ցուցանիշի որոշակի օրինակ է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի իրականացման գնահատումների շրջանակներում կիրառվող մարդկային զարգացման ինդեքսը (Human Development Index):

---

<sup>3</sup> *Ruby Sandhu-Rojon* Selecting Indicators for impact evaluation, , *UNDP*



- Արդյունքի ցուցանիշներ, որոնք առաջընթացն են գնահատում որոշակի արդյունքների առումով: Այս ցուցանիշները հիմնականում օգնում են կազմակերպություններում կամ մակրոմակարդակում գործունեության առանցքային արդյունքների վերաբերյալ իրականացնել ռազմավարական գնահատումներ և օգտակար են զարգացման դրական փոփոխություններ ընդգծելու համար: Պետական կառավարման համակարգում նմանատիպ ցուցանիշներ կարող են կիրառվել՝ պառլամենտական գործունեության արդյունքում իրավական դաշտի, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման արդյունավետությունը գնահատելու համար:
- Արտադրանքի (ելքային) ցուցանիշներ, որոնք գնահատում են որոշակի գործառնական գործունեության առաջընթացը: Այս ցուցանիշներն օգնում են չափել և ստուգել ելքային արդյունքը, որը կարող է չափելի լինել և կարող է հստակորեն ցույց տալ արդյունավետության աստիճանը: Ստացված գնահատականներն օգտակար են նախագծի կառավարիչներին, որոնք պատասխանատու են արդյունքների համար: Այս ցուցանիշները հիմնականում քանակական բնույթի են: Օրինակ՝ հանրային կառավարման ոլորտում քանի դպրոց է վերանորոգվել, քանի ուսուցիչ է վերապատրաստվել, ինչքան աշխատատեղ է ստեղծվել և այլն:

Վերջին շրջանում ՄԱԿ-ի կողմից իրականացվող հետազոտություններում կարևորվում են հատկապես որակական գնահատումները: Մշակված են նաև արդյունավետ ցու-

ցանիշների ընտրության մեթոդաբանական մոտեցումներ այս կամ այն ծրագրի համար:

Ցուցանիշների ընտրությունը և կիրառումը համարվում են կարևոր և բովանդակային աշխատանք, որը պահանջում է լուրջ հետազոտական ներուժ: Մեծ թվով ցուցանիշների կիրառումը հաճախ արդյունավետ չէ: Ցուցանիշի հավաստիությունը խիստ կարևորվում է հուսալի արդյունք ստանալու համար: Ըստ էության քանակական ցուցանիշներն առավել օբյեկտիվ են արտացոլում իրավիճակը, քան որակական դիտարկումները, որոնք առավելապես սուբյեկտիվ են և հիմնականում հենված են ոչ հավաստի և մոտավոր տեղեկատվության վրա, սակայն դրանց կիրառությունն առավել մեծ թափ է ստանում:

Օրինակ, որպես արդյունքի կամ ելքի ցուցանիշներ կարող են կիրառվել ինչպես որակական կամ կատեգորիան բնութագրող, այնպես էլ քանակական կամ թվային ցուցանիշներ: Որակական ցուցանիշները կարող են արտահայտել բինար արժեք («այո» կամ «ոչ»), ինչպես նաև իդենտիֆիկացնել որոշակի կատեգորիա մի քանի կատեգորիաների մեջ (A,B,C կամ D): Քանակական ցուցանիշները կարող են ցույց տալ բացարձակ կամ հարաբերական արժեք (օրինակ՝ մաս կամ %):

Կառավարման արդյունավետության գնահատումը հիմք է կառավարման բարելավման ռազմավարությունների ձևավորման համար: Եթե տնտեսական արդյունավետության գնահատման համակարգը դետերմինացված է և արդեն իսկ ձևավորված, քանի որ այն հենվում է քանակական գնահատականների վրա, ապա հանրային կառավարման արդյունավետությունը չի կարող գնահատվել միայն քանակական

տեսանկյունից, քանի որ այստեղ խաչվում են նաև սոցիալական և քաղաքական ազդակներ, և առավել են կարևորվում կառավարման արդյունավետության որակական ցուցանիշները: Գիտական գրականության մեջ այս առումով առկա են տարբեր և հաճախ նաև միմյանց հակասող մոտեցումներ: ՀՀ-ում հանրային կառավարման համակարգի արդյունավետության գնահատման առավել ընդունելի մոտեցումների ձևավորման համար օգտակար է ուսումնասիրել գիտական առկա փորձը և գործնական մոտեցումները:

Ինչպես արդեն նշվեց, կառավարչական գործունեության արդյունավետությունը կարող է բնութագրվել քանակական և որակական ցուցանիշներով: Քանակական ցուցանիշները սովորաբար բնութագրում են տնտեսական ազդեցությունները, իսկ որակական ցուցանիշներն առավելապես սոցիալական և քաղաքական ազդեցությունների դաշտում են<sup>4</sup>: Իհարկե, քանակական ցուցանիշներով, բացի տնտեսական ազդեցություններից, կարելի է գնահատել նաև սոցիալական գործոններ:

Եթե խնդիր է դրված գնահատել կառավարման հաջողությունները՝ կիրառելով արդյունավետության ցուցանիշներ, ապա նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել հանրային կառավարման «կատարողական» հասկացությունը, քանի որ արդյունավետության գնահատումը ըստ էության հանգում է կատարողականի գնահատման: Ինչպես Neely-ն է նշում<sup>5</sup>.

---

<sup>4</sup> <https://studfiles.net/preview/3847102/page:7/>

<sup>5</sup> NEELY, A.D., MILLS, J.F., GREGORY, M.J., PLATTS, K.W. Performance measurement system design – literature review and research agenda. International Journal of Operations and Production Management, Vol. 15, No. 4, 1995, pp. 80-116. ISSN 0144-3577.

«...կատարողականի չափումն այն խնդիրն է, որ հաճախ քննարկվում է, բայց հազվադեպ է սահմանվում»: Նույն հեղինակները ներկայացնում են իրենց սահմանումը, թե ինչպես հասկանալ հանրային կառավարման գործունեության արդյունավետությունը և դրա չափումը. «Արդյունավետության չափումը կարող է սահմանվել որպես արդյունավետության և որակական արդյունավետության քանակական գնահատման գործընթաց»:

Տեխնիկական գիտություններում համակարգերի կատարողական արդյունավետությունը համեմատաբար հստակ է ներկայացվում կատարողականի փոփոխականով (միավոր ժամանակի ընթացքում կատարված աշխատանքի քանակը): Հանրային կառավարման ոլորտում նմանատիպ հստակ սահմանում դժվար է ձևակերպել: Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական կառավարման համակարգը շատ բարդ համակարգ է, որի ներդրումները և արդյունքները չափելի են (օրինակ՝ ֆինանսական բնույթը), սակայն նաև ուղղակիորեն չափելի չեն (օրինակ՝ անձնակազմի աշխատանքի որակը, ոչ առևտրային ծառայությունների որակը, պաշտոնյաների գործունեությունը և այլն...): Այստեղ առկա է մի սկզբունք, որն ասում է, որ չի կարելի չափել անչափելին, նույնիսկ չի կարելի կառավարել անչափելին, ուստի անհրաժեշտ է, առաջին հերթին, բոլոր այն ցուցանիշները, որոնք ազդում են կատարողականի վրա, հնարավորինս չափելի դարձնել: Հանրային կառավարման մարմինների կատարողականի չափումը և գնահատումը կարող են պատասխանել այն հարցին, թե որակապես ինչքան

արդյունավետ և ուղղակի արդյունավետ են մատուցվում հանրային ծառայությունները<sup>6</sup>:

Հանրային կառավարման ոլորտում կատարողական ընդհանուր առմամբ շատ ընդգրկուն տերմին է, եթե հատկապես հաշվի առնենք շահագրգիռ կողմերի (բոլոր անձանց և հաստատություններին, որոնք կապված են հանրային կառավարման հետ) տեսանկյունից կատարված աշխատանքը, քանի որ առաջին հայացքից նրանց շահերը կարող են տարբեր լինել: Սա արտացոլվում է հատկապես հանրային բյուջեի շրջանակներում ֆինանսական հարաբերությունների երկակիության և արդյունքում առաջացող սիներգիկ հետևանքների մեջ: Հանրային ընտրության յուրաքանչյուր մասնակից ընդունում է տարբեր նպատակներ և գործողություններ՝ ըստ իր հետաքրքրության և շահերի:

Այնուամենայնիվ, եթե հանրային կառավարման համակարգը ճիշտ գործի, բոլոր շահագրգիռ կողմերի տարբեր շահերի համախմբման և բավարարման անհրաժեշտությունը բաղկացած կլինի փոխզիջումային լուծումներից կամ մաթեմատիկական լեզվով ասած օպտիմալ կառավարման համակարգի ստեղծումից, որը նաև արտաքին ազդակներ է ստանում: Եթե հաշվի առնենք, որ որոշակի շահագրգիռ կողմերի համար հանրային կառավարման արդյունավետության օգուտները բնորոշվում են համակարգի մուտքերից (այսինքն՝ ներդրումներից), ապա հնարավոր է սահմանել կատարողականը յուրաքանչյուր շահառուի առումով՝ որպես ել-

---

<sup>6</sup> GREILING, D. Performance measurement in the public sector: the German experience. International Journal of Productivity and Performance Management. Vol. 54, No. 7, 2005, pp. 551-567. ISSN 1741-0401.

քերի և մուտքերի հարաբերակցություն կամ որպես ելքերի և մուտքերի տարբերություն:

Տարածված կարծիք է, որ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք ընդգրկում են բոլոր պետական ինստիտուտները, ընդհանուր առմամբ չեն կարող որևէ շահույթ ստանալ իրենց գործունեությունից: Այս կարծիքը սխալ է, քանի որ շահույթ չհետապնդող կազմակերպություններն իսկապես կազմակերպություններ են, որոնք շահույթ չեն ստեղծում իրենց սեփականատերերի, դեկավարների կամ շահառուների շրջանում վերաբաշխման համար, բայց որոշակի պայմաններում կարող են շահույթ ստեղծել, որն այնուհետև պետք է վերստին ներդնել նույն կազմակերպության զարգացման մեջ՝ իր նպատակներին հասնելու համար:

Հանրային կազմակերպությունների առջև ներկայումս արդիական է կատարողականի չափման ցուցանիշների հստակ համակարգի մշակման խնդիրը, որը համապատասխան կերպով կարտացոլի որակական արդյունավետությունը և արդյունավետությունը<sup>7</sup>: Հանրային կառավարման կատարողականի չափման ունիվերսալ մոդել սահմանված չէ, և տարբեր կազմակերպություններում մոտեցումները տարբերվում են:

Առկա են նաև մոտեցումներ հանրային և մասնավոր համակարգերի արդյունավետությունների էական նմանությունների վերաբերյալ: Ինչպես նշված է Դեյվիդ Հոլլի և Էմա-

---

<sup>7</sup> WRIGHT, G., NEMEC, J.: Management veřejné správy: teorie a praxe. Prague: Ekopress, 2003. ISBN 80-86119-70-X.

նուեւ Լոբինայի ուսումնասիրության մեջ<sup>8</sup>, չի կարելի պնդել, որ հանրային և մասնավոր կազմակերպությունների միջև արդյունավետության գնահատման զգալի տարբերություններ կան: Հետազոտության արդյունքում, որն իրականացվել է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող և անցումային երկրներում, բացահայտվել է, որ հանրային և մասնավոր ոլորտներում կառավարման արդյունավետության գնահատականների առումով կառավարման ոլորտի կարգավիճակը չի կարևորվում, և որևէ կազմակերպության անարդյունավետությունը լիովին կապված չէ նրա սեփականության ձևի հետ: Վերլուծելով Միացյալ Թագավորությունում սեփականաշնորհման գործընթացները՝ Մասսիմո Ֆլորիոն եզրակացրեց, որ սեփականաշնորհման գործընթացները կազմակերպության գործունեության կառավարման գործառնությունների վրա որևէ տեսանելի ազդեցություն չեն ունեցել, և զուտ շահույթը զրո է՝ հաշվի առնելով աշխատողներից սեփականատերերին արժեքի փոխանցումը (Florio, 2004):

Ինչպես արդեն փաստվել է, արդյունավետությունն այն ցուցանիշն է, որը ձեռք է բերվում արդյունքի կամ հետևանքների մասին հաշվետվության միջոցով: Հանրային ծախսերի արդյունավետությունը ենթադրում է կապ ծրագրի իրականացման արդյունքում տեղի ունեցած տնտեսական և սոցիալական հետևանքների և այդ ծրագրի ֆինանսավորմանն ուղղված ջանքերի միջև:

---

<sup>8</sup> Hall D., Lobina E. (2005), “The relative efficiency of public and private sector water”, PSIRU, Business School, University of Greenwich, September 2005, p. 3.

Որակական արդյունավետությունն այն ցուցանիշն է, որը ստացվում է ձեռք բերված արդյունքը հարաբերելով այն իրավիճակին, որին ծրագրված է հասնել:

Փիթեր Դրաքերը հավաստում է, որ չկա արդյունավետություն առանց որակական արդյունավետության, քանի որ ավելի կարևոր է հասնել այն իրավիճակին, ինչը ձևակերպված է որպես նպատակ, քան անել լավ ինչ-որ այլ բան, որը ամբողջը չէր<sup>9</sup>: Արդյունավետության և որակական արդյունավետության միջև փոխհարաբերությունը մասի և ամբողջի փոխհարաբերություն է, որակական արդյունավետությունը արդյունավետությանը հասնելու համար անհրաժեշտ պայման է:

Ուլրիքե Մանդլը, Ադրիան Դիերքսը և Ֆաբիեն Իլոզկովիցը «*Հանրային ծախսերի որակական արդյունավետությունը և արդյունավետությունը*» աշխատության մեջ<sup>10</sup> ցույց են տալիս, որ արդյունավետության և որակական արդյունավետության վերլուծությունը հիմնված է ներդրումների (մուտքերի), ելքերի (արդյունքների) և արտադրանքի (հետևանքների) միջև փոխհարաբերությունների վրա:

Արդյունավետությունն ազդում է բուն արդյունքների և շրջակա միջավայրի գործոնների վրա: Շրջակա միջավայրի գործոնները (ինչպես, օրինակ, ապրելակերպը և տարբեր սոցիալ-տնտեսական ազդեցությունները) մեծ ներգործություն են ունենում որակական արդյունավետության վրա:

---

<sup>9</sup> Drucker, P. (2001), *Eficienya factorului decizional* ("The efficiency of the decision makers"), Bucuresti: Editura Destin.

<sup>10</sup> Mandl U., Dierx A., Ilzkovitz F., (2008), "The effectiveness and efficiency of public spending", European Commission, Directorate General for Economic and Financial Affairs, pp. 3-4.



Մ. Պրոֆիրոյի կարծիքով հանրային ոլորտում *կատարողականը* ենթադրում է հարաբերություններ նպատակների, միջոցների և արդյունքների միջև, հետևաբար՝ կատարողականը *արդյունավետության, որակական արդյունավետության և համապատասխան բյուջեի միաժամանակյա հետապնդման արդյունք է*<sup>11</sup>:

Վերջին շրջանում հանրային կառավարման հետ կապվում է նորամուծական գործունեությունը: Հանրային կառավարման համակարգի գործունեությունը կարելի է նաև դիտել որպես նորամուծական գործունեություն կառավարման տարբեր մակարդակներում, և այն կարող է դիտվել որպես կառավարման արդյունավետության գնահատական:

Հանրային կառավարման գլխավոր ուղենիշներից է նաև տնտեսության զարգացմանը նպաստելը, իսկ վերջինս իհարկե հանրային կառավարման կարևորագույն գնահատականներից է: Այս առումով հանրային կառավարման արդյունք կարելի է դիտարկել նաև նորարարական միջավայրին նպաստելը: Բարենպաստ գործարար միջավայր ստեղծելով՝ հանրային կառավարման ինստիտուտը կարող է նաև մեծ ազդեցություն ունենալ ընկերությունների տնտեսական և նորարարական գործունեության վրա: Արդյունավետ և բարձրորակ հանրային ծառայությունները նույնպես գործում են որպես բիզնեսի խթանիչ: Որոշ հեղինակների կողմից գնահատվել են հանրային ծառայությունների ազդեցությունը նորամուծական ոլորտի աշխուժացման վրա և փորձել են պատասխանել այն հարցին, թե որն է հանրային ոլորտի նորա-

---

<sup>11</sup> Profiroiu, M., Profiroiu, A.: "Cadrul de analiza a performantelor sectorului public" ("The analysis of public sector performances"), In *Economie teoretica si aplicata*, pp. 44-47.

բարակաճ ազդեցությունը ֆիրմայի գործունեության վրա: Innobarometer 2011 ընկերության՝ 33 եվրոպական երկրներում իրականացված մանրամասն վերլուծությունը<sup>12</sup> ցույց է տալիս հանրային հատվածի կառավարման նորարարական գործունեության կարևորությունը բիզնեսի համար: Հանրային հատվածի կառավարման արդյունավետության բարձրացումը 8.3%-ով դրական ազդեցություն է ունենում գործող ընկերությունների նորարարական զարգացումների վրա, սակայն դա էապես չի ազդում տնտեսական ցուցանիշների և վաճառքների աճի վրա: Հանրային հատվածի նորարարությունը տնտեսական աճի և քաղաքացիների բարեկեցության վրա դրական ազդող գործոն է, սակայն այդ ազդեցությունների գնահատումը և չափումը դժվար է նորաբանական բավականին բարդ հիմնախնդիր<sup>13</sup>:

Պետական կառավարման համակարգն ունի նաև կարգավորող գործառույթ, քանի որ այն ձևավորում է կանոններ և կանոնակարգեր հանրային քաղաքականություն օրենսդրության իրականացման համար: Պետական կառավարմանը վերաբերող մի շարք ուսումնասիրություններ հիմնականում վերաբերում են կազմակերպական տեսակներին և մոդելներին, բյուրոկրատիայի բնույթին և դրանց հետևանքներին, պետական կառավարման բարեփոխումներին և պետական կառավարման համակարգերի տեսակներին: Վերոնշյալ գործառույթների քանակական գնահատումները կապված են

---

<sup>12</sup> Bianca Buligescu UNU-MERIT Maastricht University Hugo Hollanders UNU-MERIT Maastricht University

<sup>13</sup> Windrum, P. (2008), "Innovation and entrepreneurship in public services", in: Windrum P. and P. Koch P (ed.), Innovation in Public Sector Services, Edward Elgar, Cheltenham

բարդությունների հետ: Հանրային կառավարմանը վերաբերող տնտեսագիտական ուսումնասիրությունները կենտրոնացած են նախ և առաջ դասական գնահատման մեթոդների և ծախս-օգուտ մոդելների կիրառմամբ իրականացվող կամ ապագայում իրագործվելիք քաղաքականության արդյունավետության և որակական արդյունավետության գնահատման վրա: Պետական հատվածի նորարարության ազդեցության չափման հիմնական դժվարությունը պետական հատվածի ծառայությունների և քաղաքականությունների, ինչպես նաև շահառուների և արդյունքների իրականացման համար պատասխանատու գործակալությունների և մարմինների բազմազանությունն է: Կառավարական քաղաքականությունների և ծառայությունների բազմազանությունը, որոնք ունեն տարբեր արդյունքներ, դժվարություն են ստեղծում միասնական գնահատման համար:

Հանրային ոլորտի կառավարման նորարարությունները կարող են տեղի ունենալ տարբեր մակարդակներում և տարբեր դրսևորումներով. պետական կառավարման և հանրային ոլորտի հաստատությունների կազմակերպման ասպարեզում, քաղաքականության մեջ և կանոնակարգերում (բարեփոխումները), հանրային տեղեկատվության տարածման մեջ, եկամուտների հավաքագրման և ստեղծման ոլորտներում (հարկային համակարգը, հանրային ձեռնարկությունները), հանրային ծառայությունների և ապրանքների մատակարարման բնագավառներում (օրինակ՝ կրթությունը), ենթակառուցվածքների զարգացման և ֆինանսական աջակցության գործընթացներում (նոր ծրագրերի ներդրում, ինչպիսիք են

նորարարական ֆինանսական ներդրումները), համակարգային փոփոխությունները<sup>14</sup>:

Ներկայումս հանրային նորարարությունների գնահատման ոլորտում բավականին լայնածավալ տնտեսագիտական հետազոտություններ են կատարվել, որոնք վերլուծում են գնումների, կանոնակարգերի, գիտելիքների խթանման, գիտահետազոտական և փորձարար-կոնստրուկտորական աշխատանքներում ներդրումների, ինչպես նաև բիզնես նորարարության, զբաղվածության, վաճառքի աճի, արտահանման, բիզնեսի գոյատևման և արտադրողականության վրա հանրային նորարարությունների վերլուծության ազդեցությունը<sup>15</sup>:

Տնտեսագիտական հետազոտությունները լրացվում են քաղաքագիտական ուսումնասիրություններով, որոնք վերաբերում են նաև էլեկտրոնային կառավարության ազդեցություններին<sup>16</sup>: Տնտեսագիտական ուսումնասիրությունների

---

<sup>14</sup> Windrum, P. (2008), “Innovation and entrepreneurship in public services”, in: Windrum P. and P. Koch P (ed.), *Innovation in Public Sector Services*, Edward Elgar, Cheltenham.

<sup>15</sup> Aschhoff, B. and W. Sofka (2009), “Innovation on demand – Can public procurement drive market success of innovations?”, *Research Policy* (38): 1235-1247.

Crespi, G., A. Maffioli, P. Mohnen and G. Vásquez (2011), “Evaluating the Impact of Science, Technology and Innovation Programs: A Methodological Toolkit”, Inter-American Development Bank Technical Notes, IDB-TN-333: 1-88.

Paraskevopoulou, E. (2012), “Non-technological regulatory effects: Implications for innovation and innovation policy”, *Research Policy* 41 (6): 1058-1071.

Wren, C. and D.J. Storey (2002), “Evaluating the effect of soft business support upon small firm performance”, *Oxford Economic Papers* 54(2):334-365.

<sup>16</sup> Andersen K. N., H.Z. Henriksen, R. Medaglia, J.N. Danzinger, M.K. Sannarnes and M. Enemærke (2010), “Fads and Facts of E-Government: A

հիմնական դրույթները հանգում են մասնավորապես համեմատական վերլուծություններին: Հանրային քաղաքականության և պետական ծրագրերի իրագործումը կարող է հանգեցնել ինչպես դրական, այնպես էլ բացասական տնտեսական հետևանքների, օրինակ՝ պետական աջակցությունը կարող է խթանել կամ խոչընդոտել մասնավոր ֆինանսավորումը<sup>17</sup>:

Ֆրաունհոֆերի համակարգերի և նորամուծական հետազոտությունների ինստիտուտը<sup>18</sup> (2004) վերլուծել է կանոնակարգման ազդեցությունը նորարարության վրա՝ հիմք ընդունելով 250 եվրոպական ընկերությունների օրինակով իրականացված հետազոտությունը: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ հանրային ծառայությունների նորարարությունների ամենաարդյունավետ ծրագրերը վերաբերում են առողջապահական և անվտանգության ոլորտներին:

Կառավարությունը ինչպես հանրային ծառայությունների հիմնական մատուցող է, այնպես էլ սպառող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պաշտպանության, կրթության կամ առողջապահական ծառայությունները: Որպես սպառող՝ կառավարությունները կարող են հանդես գալ որպես այնպիսի նորարարությունների սպառող, որոնք հնարավորություն են ընձեռում ընկերություններին սովորելու և կատարելա-

---

review of Impacts of E-government (2003-2009)”, International Journal of Public Administration 33 (11): 549-576.

<sup>17</sup> Crespi, G., A. Maffioli, P. Mohnen and G. Vásquez (2011), “Evaluating the Impact of Science, Technology and Innovation Programs: A Methodological Toolkit”, Inter-American Development Bank Technical Notes, IDB-TN-333: 1-88.

<sup>18</sup> <https://www.fraunhofer.de>

գործելու իրենց արտադրանքը և արագ կրճատելու ծախսերը<sup>19</sup>: Հանրային պահանջարկը կարող է հանգեցնել նաև մասնավոր պահանջարկի:

Այսպիսով, կարելի է ընդհանրացնել, որ հանրային կառավարման տնտեսական (քանակական) արդյունավետությունը միջազգային պրակտիկայում առաջարկվում է գնահատել ամբողջական աշխատանքի արտադրողականության ցուցանիշով՝ ելքի արդյունքները հարաբերելով մուտքի ռեսուրսներին<sup>20</sup>:

Իսկ ամբողջական աշխատանքի կամ գործոնային արտադրողականության ցուցանիշը (Ա) առաջարկվում է չափել հետևյալ բանաձևով<sup>21</sup>.

$$A = \frac{ՀՆԱ}{ԱՎ + ՆԾ + ՀՄԱ + Ն.դգ}$$

որտեղ՝

ՀՆԱ-ն տվյալ ժամանակամիջոցում երկրում ստեղծված համախառն ներքին արդյունքն է դրամական արտահայտությամբ,

<sup>19</sup> Aschhoff, B. and W. Sofka (2009), “Innovation on demand – Can public procurement drive market success of innovations?”, *Research Policy* (38): 1235-1247.

<sup>20</sup> Տե՛ս, օրինակ, Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента, էջ 48-50:

<sup>21</sup> Ամբողջական աշխատանքի արտադրողականության չափման մեթոդի հիմնավորումը տե՛ս *Суварян Ю. М.* Управление ростом производительности труда в промышленности, Е., Айастан, 1987, էջ 41-60: Հանրային կառավարման առումով բանաձևը ենթարկվել է անհրաժեշտ փոփոխությունների՝ ցուցանիշների ճշգրտման նպատակով (տե՛ս Մենեջմենթ, Յու. Մ. Սովարյանի ընդ. խմբ., Ե., «Տնտեսագետ», 2016, էջ 307-309):

ԱՎ-ն՝ հանրային կառավարման համակարգում աշխատողների հիմնական և լրացուցիչ վարձատրությունը,

ՆԾ-ն՝ նյութական բոլոր ծախսերը, որոնք կատարվել են հանրային կառավարման գործընթացում,

ՀՄԱ-ն՝ հիմնական միջոցների ամորտիզացիան՝ ներառյալ վարչական շենքերի, կառավարման տեխնիկական միջոցների տարեկան մաշվածքը,

Ն-ն՝ հանրային կառավարման ոլորտին անհրաժեշտ շենքերի կառուցման և տեխնիկական միջոցների ձեռքբերման համար կատարված, սակայն անավարտ ներդրումների ծավալը,

Դգ-ն՝ դիսկոնտավորման գործակիցը:

Արդյունավետության քանակական ցուցանիշի առաջարկվող տարբերակը կիրառելի է նաև միկրոմակարդակում: Այդ դեպքում արդյունքը կարող է գնահատվել վաճառքի (ծառայությունների) ծավալի ցուցանիշով, իսկ ծախսերը նույն կազմով կարող են հաշվարկվել կազմակերպությունների համար:

Հանրային կառավարման որակական արդյունավետությունը կարող է գնահատվել տարբեր մոտեցումներով: Գրականության մեջ նկարագրված են ցուցանիշների տարբեր համակարգերի վրա հիմնված գնահատման մոդելներ: «Հանրային ոլորտի արդյունավետություն: Միջազգային համեմատություն» հոդվածում հեղինակներն առաջարկում են հանրային ոլորտի ընդհանուր արդյունավետության չափման ցուցանիշը, որը ձեռք է բերվում յոթ ենթացուցանիշների հի-

ման վրա, որոնցից յուրաքանչյուրը զարգացվել է առանձին ցուցանիշների համակցություններից<sup>22</sup>:

Առաջարկվել են ներուժը բնութագրող՝ կատարողականի չորս ցուցանիշներ (կրթության, առողջապահության, հանրային ենթակառուցվածքների, վարչարարության) և գործողությունները գնահատող երեք ցուցանիշներ, որոնք արտացոլում են հանրային կառավարման մարմինների նպատակները (կայունություն, բաշխում, տնտեսական կատարողական):

Եվրամիության անդամ-պետությունների մակարդակով մշակված, այսպես կոչված «գնահատման» ֆունկցիան կարելի է կիրառական գործիք համարել: Բացահայտենք այդ ֆունկցիան, որը սահմանում է առաջարկված ցուցանիշների հիման վրա հանրային հատվածի կատարողականը: Գնահատման ֆունկցիան պարունակում է յոթ ցուցանիշներ՝ չորս հնարավորությունների ցուցանիշներ և երեք գործողությունները գնահատող ցուցանիշներ: Սակայն յուրաքանչյուր ցուցանիշ բաղկացած է ենթացուցանիշների փոփոխական թվից, որոնք հավասարապես կշռվում են ինտեգրալ ցուցանիշի կառուցվածքում: Հիմնական մեթոդաբանությունը ներկայացվում է հետևյալ բանաձևով.

$$ՀԿԻ^{23} = A1 * X1 + A2 * X2 + A3 * X3 + A4 * X4 + A5 * X5 + A6 * X6 + A7 * X7 ,$$

---

<sup>22</sup> Afonso A., Schuknecht L., Tanzi V., (2003), “Public sector efficiency: an international comparison”, European Central Bank, Working Paper No. 242/July 2003, pp.10-12.

<sup>23</sup> Հանրային կառավարման ինդեքս:



որտեղ

$A_i$  = կշռային կամ կարևորությունը բնութագրող գործակիցներն են,

$x_i$  = հանրային կառավարման մարմնի կատարողականի ցուցանիշներն են:

Այս գնահատականը կարող է կիրառվել տարբեր երկրների կամ տվյալ երկրում տարածքային միավորների հանրային կառավարման մարմինների գործունեության համեմատությունների համար, ինչպես նաև այդ ցուցանիշների հիման վրա կարող է գնահատվել հանրային կառավարման արդյունավետության դինամիկան:

Նկարագրենք կիրառված կատարողականի ցուցանիշները:

**X1 – վարչականը**, որը բաղկացած է 4 ենթացուցանիշներից՝ **կոռուպցիա** (այս ենթացուցանիշի քանակական գնահատման համար օգտագործվել է կոռուպցիայի ընկալման ինդեքսը, որը հաշվարկվել է International Transparency Agency-ի կողմից), **կարմիր ժապավեն** (այս ենթացուցանիշի քանակական չափման համար օգտագործվել են հետևյալ ցուցանիշները՝ բիզնես սկսելու, սեփականության գրանցման և շինարարության թույլտվության հետ կապված գործարքներ, որոնք կառուցվել և հաշվարկվել են Doing Business ամենամյա զեկույցում), **դատական համակարգի որակը** (այս ենթացուցանիշը չափելիս կիրառվել է դատական համակարգի արդյունավետության ցուցանիշը՝ հրապարակված Doing Business ամենամյա զեկույցում), **ստվերային տնտեսությունը** (այս ենթացուցանիշը ցույց է տալիս ստվերային տնտեսության ՀՆԱ-ի տոկոսը և հիմնված է OECD զեկույցների վրա):

**X2 – կրթությունը**, որը բաղկացած է 2 ենթացուցանիշներից՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրությունից վերցված **միջնակարգ դպրոցների ընդգրկվածությունը** և **կրթական նվաճումները**, որ կառուցվել է ԵՄ-ի անդամ-երկրների կողմից 2006 թ. PISA-ի գիտության, մաթեմատիկայի և ընթերցանության թեստով ձեռք բերված արդյունքների հիման վրա: PISA-ի թեստը գնահատում է 15-ամյա երեխաների ձեռք բերած արդյունքները երեք նշված տիրույթներում:

**X3 – առողջապահությունը**, որը բաղկացած է 2 ենթացուցանիշներից՝ **մանկական մահացության և կյանքի սպասվող տևողության** երկուսն էլ հաշվարկված և հրապարակված World Health Organization-ի կողմից:

**X4 – հանրային ենթակառուցվածքը**, որն ունի մեկ ենթացուցանիշ՝ **որակյալ կապի և տրանսպորտային ենթակառուցվածքի**, և դրա քանակականացման համար մենք օգտագործել ենք Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակված արդյունքները:

**X5 – բաշխումը**, որը հիմնված է մեկ ենթացուցանիշի վրա՝ **եկամուտների բաշխման անհավասարությունը**, որը 20% ամենաբարձր եկամուտ ունեցող բնակչության ստացված ընդհանուր եկամտի հարաբերությունն է 20% ամենացածր եկամուտ ունեցող բնակչության ընդհանուր եկամտին՝ օգտագործելով Eurostat- ի կողմից հրապարակված տվյալները:

**X6 – կայունություն**՝ ցուցիչ, որը հիմնված է հետևյալ երկու ենթացուցանիշների հավասար կշիռների վրա՝ **ՀՆԱ-ի աճի կայունությունը** և **գնաճը**:

**X7 – տնտեսական կատարողականը**, որը հիմնված է 3 ենթացուցանիշների վրա՝ **ՀՆԱ-ն**, **ՀՆԱ-ի աճը** և **վերջին 10 տարիների գործազրկությունը**:

Ինչպես նշվել է, X1, X2, X3 և X4-ը ներուժի ցուցիչներն են, մինչդեռ X5, X6 և X7-ը ներկայացնում են գործողությունները գնահատող կամ այսպես կոչված Մուսգրավյան (Musgravian) ցուցանիշները:

ԵՄ-ի համար հանրային կառավարման ինդեքսի միջին արժեքը 7.8628 է, իսկ առավելագույն արժեքը՝ 12.2015, չիրապարակված ցանկացած անդամ-պետության կողմից: Գնահատման ֆունկցիայի առավելագույն արժեքը ստացվել է Լյուքսեմբուրգում (9.8729), որին հետևել են Շվեդիան և Ֆինլանդիան՝ համապատասխանաբար 9.4834 և 9.1840 արժեքներով. այս պետությունները հանրային հատվածի կատարողականի առումով առաջատարներն են: Հակառակ կողմում Բուլղարիան էր 5,5382 միավորով, Ռումինիան 5,57211 և Լեհաստանը 6,3844 միավորներով<sup>24</sup>:

Որոշումներ կայացնողները պետք է արդյունավետ տնտեսական ծրագրեր ստեղծեն՝ ակնկալելու համար ապագա սոցիալ-տնտեսական փոփոխությունները: Բացի այդ, պետական հատվածի վերաբերյալ հիմնական որոշումներ կայացնողները պետք է եղանակ գտնեն՝ գնահատելու վերջնական արդյունքները և հանրային հատվածի կատարողականի վրա չափելի ազդեցությունները: Մեկ այլ տեսակետից քաղաքականություն մշակողները պետք է գտնեն հանրային հատվածի կատարողականի բարձրացման ուղիներ՝ անդրադառնալով հետևյալ գերակայություններին.

---

<sup>24</sup> Afonso A., Schuknecht L., Tanzi V., (2003), “Public sector efficiency: an international comparison”, European Central Bank, Working Paper No. 242/July 2003, pp.10-12.

1. տնտեսական կայունության ապահովում,
2. հանրային ենթակառուցվածքների որակի բարելավում,
3. կոռուպցիայի դեմ պայքարի, պետական բյուրոկրատիայի կրճատման, արդարադատության որակի բարձրացման և ստվերային տնտեսության կտրուկ նվազեցման միջոցով կառավարչական կատարողականի ավելացում,
4. կրթության որակի բարձրացում,
5. եկամուտների բաշխման ընդլայնում և եկամուտների միջև անհավասարությունների նվազեցում բնակչության տարբեր կատեգորիաների միջև:

Վերը նկարագրված մեթոդաբանությունը, անշուշտ, համապարփակ է, սակայն այն ունի տեղեկատվական ապահովվածության բարդություններ, բացի այդ կիրառական չէ՝ հանրային կառավարման առանձին միավորներում որակական արդյունավետությունը գնահատելու համար: Մեթոդաբանության տրամաբանությունն ամբողջությամբ հաշվի չի առնում նաև նախապես սահմանված չափանիշների և ցուցանիշների կատարողականի, դրանց հիմնավորվածության՝ իբրև կառավարման որակի ցուցիչների կարևոր խնդիրները:

Ահա թե ինչու առաջարկվում են որակական արդյունավետության գնահատման մեթոդաբանական այլ սկզբունքներ, որոնք փորձ են՝ լրացնելու վերը նշված բացերը:

Հանրային կառավարման առումով էական է, թե ինչպիսի օրենսդրական դաշտ է ստեղծվել, որչափով է այն ապահովում պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման արդյունավետությունը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացումը և գործունեութ-

յունը, ինչպես նաև գործարարության ազատ զարգացումը: Իրավական դաշտի և այլ կարգավորումների քննական (համեմատական) փորձագիտական կամ, ինչպես նշվել է, բինար արժեքով գնահատումներով կարող է տրվել վերը նշված հարցերի պատասխանը: Այդ նպատակով առաջարկվում է կարևորագույն ցուցանիշների համակարգված ցանկը (աղյուսակ 1):

Բացի դրանից, կարևորվում է ռազմավարական թիրախային և ընթացիկ նպատակներից շեղումների (կատարողականի) խնդիրը: Հատկապես առանցքային են երկրի զարգացման ռազմավարության հիմնավորվածությունը և արդյունքների վերահսկելիությունը, բնակչության կենսամակարդակի ու սոցիալական ծառայությունների զարգացման ցուցանիշները (աղյուսակ 1):

Համաձայն վերոնշյալի՝ շեղումները կարող են գնահատվել որպես հանրային կառավարման «անարդյունավետություն»: Կառավարման արդյունավետությունը կարելի է նկարագրել շեղումների ինտեգրալ ցուցանիշի միջոցով, որի հաշվարկման նպատակով առաջարկվում է հետևյալ մոտեցումը: Նախ և առաջ յուրաքանչյուր ցուցանիշի համար հաշվարկվում է կատարողականի բացարձակ արժեքի հարաբերական շեղումը<sup>25</sup>.

$$K_i = \frac{|Ni - Ri|}{Ni},$$

որտեղ  $Ni$ -ը թիրախային ցուցանիշն է,  $Ri$ -ն՝ կատարողականը:

---

<sup>25</sup> Նկարագրված մեթոդաբանության մեջ կիրառվում են աղյուսակ 1-ում ներկայացված 3-րդ և 4-րդ խմբերի ցուցանիշները:

Առաջարկվում է ընդհանուր հարաբերական շեղումը գնահատել շեղումների բացարձակ արժեքների կշռված միջին թվաբանականով հետևյալ բանաձևով.

$$K_{\text{շեղ}} = \frac{\sum_{i=0}^n K_i A_i}{\sum A_i},$$

որտեղ

$K_i$ -ն շեղումն է  $i$  ցուցանիշի գծով,

$A_i$ -ն՝  $i$  ցուցանիշի նշանակալիությունը հանրային կառավարման համակարգում, որը կարող է հաշվարկվել տարբեր մոտեցումներով: Բավականին տարածված է փորձագիտական եղանակը, որը հաճախ կիրառվում է տեղեկատվության ոչ լրիվության կամ բացակայության պայմաններում: Առավել մեծ ճշգրտություն կարող են ապահովել մաթեմատիկական վիճակագրության գործիքների կիրառության վրա հիմնված մեթոդները:

Համաձայն այդ մոտեցման՝ հաշվարկվում են  $X$  ցուցանիշների և ՀՆԱ-ի կամ նմանատիպ տնտեսական ընդհանրացված ցուցանիշների միջև զույգային կորելյացիոն գործակիցները: Վերջիններիս միջոցով կգնահատվեն  $X$ -երի նշանակալիության աստիճանները, որոնց հիման վրա կհաշվարկվեն գործակիցները<sup>26</sup>: Կարող են հիմք ընդունվել նաև էլաստիկության գործակիցները: Գործակիցները կարող են որոշվել կորելյացիոն կամ էլաստիկության գործակիցների համամասնության սկզբունքով:

---

<sup>26</sup> Afonso A., Schuknecht L., Tanzi V., (2003), “Public sector efficiency: an international comparison”, European Central Bank, Working Paper No. 242/July 2003, pp.10-12.

**Աղյուսակ 1.**

**Հանրային կառավարման որակական արդյունավետության  
գնահատման հիմնական ցուցանիշները**

<b>Հանրային կառավարման համակարգի բաղադրիչներ և արդյունքներ</b>	<b>Որակական արդյունավետության գնահատման ցուցանիշներ</b>
1. Հանրային կառավարման օրենսդրական հիմքերը (փորձագիտական բալային գնահատմամբ)	1.1. Սահմանադրության արդիականությունը 1.2. ՏԻՄ-ի մասին օրենքի առկայությունը 1.3. Դատական համակարգի անկախությունը
2. Քաղաքացիական հասարակության ինստիտուտների կազմավորման օրենսդրական նախադրյալները և դրանց իրագործման ապահովումը	1.4. Օրենսդրական դաշտի առկայությունը (բալային փորձագիտական գնահատական) 1.5. Խոսքի ազատության գործակից 1.6. Մամուլի ազատության գործակից
3. Երկրի զարգացման ռազմավարության հիմնավորվածությունը և արդյունքների վերահսկելիությունը	1.7. ՀՆԱ-ի փաստացի և ծրագրված աճի տեմպերի հարաբերակցությունը 1.8. Պետական բյուջեի եկամուտների և ծախսերի փաստացի և ծրագրային ցուցանիշների հարաբերակցությունը
4. Բնակչության կենսամակարդակ և սոցիալական ծառայություններ	1.9. Բնակչության մեկ շնչի հաշվով դրամական եկամուտներ 1.10. Բնակչության զբաղվածություն 1.11. Աղքատության մակարդակը 1.12. Բնակչության մեկ շնչի հաշվով սոցիալական ծառայությունների ծավալը (առևտուր, առողջապահություն, կրթություն)

Այսպիսով, կունենանք որակական արդյունավետության նաև քանակական գնահատական: Ընդ որում հարկ է

նորմավորել շեղումների թույլատրելի չափը փորձագիտական գնահատականով, օրինակ.

$$0.03 \leq K_{\text{շեղ}} \leq 0.1$$

Ի դեպ, միջակայքից դուրս շեղումը բացասական է, քանի որ այն վկայում է չհիմնավորված կանխատեսումների, արտաքին և ներքին միջավայրի ոչ ճիշտ գնահատումների, անբավարար կազմակերպական ջանքերի մասին:

Մեթոդական նկարագրված սկզբունքները կիրառելի են հանրային կառավարման, ինչպես նաև կազմակերպությունների կառավարման որակական արդյունավետությունը գնահատելու համար: Միկրոմակարդակի համար հարկ կլինի կատարել ցուցանիշների որոշակի ճշգրտումներ:



## 2.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային կառավարումը, ինչպես հայտնի է, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կառույցների ամբողջությունն է: Ձևավորվելով քաղաքացիական հասարակության կողմից՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները յուրաքանչյուր երկրում իրագործում են սահմանադրորեն և տարբեր օրենքներով ամրագրված գործառույթներ՝ ըստ այդմ կանխորոշելով երկրի զարգացման ուղղությունները և մակարդակը, բնակչության կենսապայմանները, ազգային անվտանգության երաշխիքները:

Գիտական գրականության էջերում հաճախ դիտարկվում է հանրային կառավարման արդյունավետությունը՝ նպատակ ունենալով գնահատելու նրա որակական ու քանակական բնութագրիչները<sup>27</sup>: Չնսեմացնելով հանրային կառավարման արդյունավետության գնահատման ու նրա բարձրացմանն ուղղված ջանքերի կարևորությունը, սակայն էական նշանակության հիմնախնդիր է նաև տնտեսական ու սո-

---

<sup>27</sup> Մանրամասն տե՛ս *Մուվարդյան Յու. Մ., Սարգսյան Վ. Ա.*, Հանրային կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտություններին», 2019, թ. 1, էջ 128-149:

ցիալական զարգացման վրա հանրային կառավարման ազդեցության բազմագործոնային գնահատումը:

Կառավարչական գործունեության արդյունավետությունը սովորաբար բնութագրվում է քանակական և որակական ցուցանիշներով: Քանակական ցուցանիշները բնութագրում են տնտեսական ազդեցությունները՝ արդյունքների և ծախսերի համադրմամբ, իսկ որակական բնութագրիչներն առավելապես վերաբերում են քաղաքական ու սոցիալական բաղադրիչներին, բոլոր մակարդակների կազմակերպությունների ռազմավարության ընտրությանը և դրա իրագործման ապահովմանը: Ուստի արդյունավետության գնահատումը հենվում է արդյունքներ-ծախսեր, ինչպես նաև ռազմավարական ու մարտավարական նպատակներ-իրագործման աստիճանի համադրումների վրա: Դրան զուգընթաց էական է բացահայտել, թե հանրային կառավարումն ինչպես է ներագրում հասարակական-տնտեսական զարգացման ընթացքի վրա, գնահատել այդ ազդեցությունը, այն պայմանավորող գործոնները, այսինքն՝ մոդելավորել հանրային կառավարում-արդյունքներ համակարգը, գտնել օպտիմալ լուծումների տարբերակներ: Սույն հետազոտության առարկան նշված խնդիրներն են, որոնք մեզ հայտնի ուսումնասիրություններում դիտարկվում են տարբեր ուղղություններով:

### **1. Դիտարկումներ հանրային կառավարման և զարգացման փոխազդեցությունների վերաբերյալ**

Հանրային կառավարման և սոցիալ-տնտեսական համակարգերի փոխազդեցության խնդիրները գտնվում են տրնտեսագետ-հետազոտողների հետաքրքրությունների շրջա-

նակում: Առկա են հետազոտություններ, որտեղ փորձ է կատարվել՝ գնահատելու հանրային կառավարման ազդեցությունները երկրի կամ տարածաշրջանի տնտեսական ցուցանիշների վրա: Կիրառվել են տարբեր գործիքներ, և մշակվել են մի շարք մոդելներ: Մի շարք հետազոտություններ, հատկապես եվրոպական երկրներում, ուղղված են հանրային կառավարման բարեփոխումների ազդեցությունների գնահատմանը:

Դեռևս 2001թ. ՏՀԶԿ-ի շրջանակներում հրատարակված հետազոտության մեջ<sup>28</sup> դիտարկվել են հանրային կառավարման բարեփոխումների և սոցիալ-տնտեսական զարգացման կապերը: Փորձ է կատարվել՝ պատասխան տալու այն հարցին, թե ինչպես են պետական կառավարման փոփոխությունները ազդել կամ նպաստել տնտեսական և սոցիալական զարգացմանը: Այս հարցի պատասխանը շատ է կարևորվում նաև ներկայումս ինչպես զարգացած եվրոպական, այնպես էլ զարգացող երկրներում:

Հանրային կառավարման համակարգերը գտնվում են անընդհատ զարգացման գործընթացում: Իհարկե, որոշ երկրներում հանրային կառավարման ոլորտում տիրապետում են պատմական ավանդույթները և հաստատությունները: Կարելի է շեշտել, որ գոյություն չունի հանրային կառավարման մեկ ընդհանուր կամ լավագույն մոդել, սակայն կարևոր է այն, որ հանրային կառավարումն անընդհատ փոփոխվող համակարգ է, և որ բոլոր երկրներում տեղի են ունենում ոլորտի բարեփոխումներ, և, իհարկե, առկա են հանրային կառավարման համակարգերի որոշակի ընդհանրություններ:

---

<sup>28</sup> Michael Keating, Public Management Reform and Economic and Social Development *OECD 2001*, էջ 141-212:

Անշուշտ, պետական կառավարման բարեփոխումները չեն կարող զարգանալ վակուումային վիճակից, և անհրաժեշտ է որոշակի պահանջ: Իբրև այդպիսին կարող են լինել հանրային դժգոհությունը, քաղաքական մոտիվները, սակայն բարեփոխումների առավել կարևոր պայման է տնտեսական և սոցիալական զարգացում ապահովելու խնդիրը: Համաձայն վերոնշյալ ուսումնասիրության՝ վերջին ժամանակաշրջանում արդեն ընդգծվել են հանրային կառավարման զարգացումը պայմանավորող հետևյալ հիմնական խնդիրները.

- հարկման մակարդակը, բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը չափազանց բարձր են, և կարող են այդ ցուցանիշներն ավելի վատթարանալ, եթե հանրային կառավարման համակարգում որևէ գործողություն չձեռնարկվի.
- պետական ծրագրերը հաճախ չեն հասնում իրենց նպատակներին և շատ դեպքերում կատարվում են ոչ նպատակային և անարդյունավետ ծախսեր,
- վարչական մեքենան բավարար չափով չի բավարարում հանրային կարիքները,
- կառավարման մարմիններն ինքնին խնդիր են դարձել, քանի որ չափազանց ուռճացված և չափազանց «միջամտող» են:

Մի շարք այլ հետազոտություններում դիտարկվում են հանրային ու պետական կառավարման համակարգերի և տնտեսական աճի փոխհարաբերությունների խնդիրները, որոնք վերաբերում են առանձին վերցրած երկրի, մասնա-

վորապես Հարավային Կորեային<sup>29</sup>: 19-րդ դարում աղքատ Հարավային Կորեան աննախադեպ տնտեսական զարգացում է ապրել, արագ աճել են համախառն ներքին արդյունքը, առևտուրը, հանրային ծառայությունների որակը, բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտները: Նրա տնտեսական հաջողությունը չի կարելի ընկալել՝ առանց հաշվի առնելու պետական կառավարման դերը: Վերջինս ենթարկվում է նաև քաղաքական համակարգի, շրջակա միջավայրի, պատմության և մշակույթի ազդեցություններին: Հարավային Կորեայում պետական կառավարումն ուժեղ ազդեցություն ունի զարգացման քաղաքականության մշակման և իրականացման վրա: Վերոնշյալ հոդվածում քննարկվում է պետական կառավարման դերը տնտեսական հաջողությունների խթանման գործում:

Մեկ այլ հետազոտության մեջ ներկայացվում է Չինաստանի փորձը<sup>30</sup>: Այստեղ ներկայացված են Չինաստանի զարգացման տարիներին կառավարման դերը և տնտեսական բարեփոխումները: Ուսումնասիրությունը ներառում է ժամանակակից տնտեսական համակարգերում հիմնական պետական քաղաքականության շրջանակներում իրականացվող կառավարչական գործառնությունների և տնտեսական զարգացման խնդիրների մասին գրականության տեսությունը: Այնուհետև գնահատվում է չինական կառավարության փորձը բա-

---

<sup>29</sup> [Murat Onder, Fatih Ulasan](#), The Impact of Public Administration on Economic Growth: The Case of South Korea, International journal of leadership education and mahagement studies, No1, p.23-43.

<sup>30</sup> [Kuotsai Tom Liou](#) **The role of government in economic development: the chinese experience**, International Journal of Public Administration, Volume 21, 1998 - [Issue 9](#), p. 1005-1022.

քեփոխումների և զարգացման գործընթացում՝ կենտրոնանալով պետական կառավարման համակարգի հինգ հիմնական դերերի վրա՝ ա) աճի խթանում, (բ) տնտեսության կառավարում, (գ) եկամտի բաշխում, (դ) արդյունաբերության կարգավորիչ ու (ե) քաղաքացու և բիզնեսի պաշտպան:

Տնտեսական զարգացման գործընթացում կառավարման խնդիրները քննարկվել են նաև մի շարք այլ աշխատանքներում: Ուսումնասիրությունը հատկապես կենտրոնանում է կառավարման քաղաքականության երեք հիմնական ոլորտների վրա, որոնք վերաբերում են կառավարմանը և տնտեսական զարգացմանը. 1) կարգավորման բարեփոխումներ, 2) մասնավորեցման քաղաքականություն և 3) ապակենտրոնացման քաղաքականություն<sup>31</sup>: Որպես եզրահանգում ներկայացվում են պետական և հանրային կառավարման մարմինների աճող դերը և նշանակությունը, ինչպես նաև տնտեսական զարգացման ոլորտում ոչ պետական և հասարակական կազմակերպությունների մասնակցության մասին դիտարկումները:

Հետազոտողների ուշադրության կենտրոնում են նաև հանրային կառավարման համակարգերի տնտեսագիտական մեկնաբանությունների հետ կապված խնդիրները<sup>32</sup>: Հաճախ քննարկվում է այն հարցը, թե ինչ սերտությամբ հանրային

---

<sup>31</sup> **Liou, Kuotsai Tom** GOVERNANCE AND ECONOMIC DEVELOPMENT: CHANGES AND CHALLENGES, International Journal of Public Administration Volume 24, 2001 - [Issue 10](#), p. p. 1005-1022

<sup>32</sup> **C. Kurt Zorn**, The economic perspective on public administration, International Journal of Public Administration , Volume 21, - [Issue 6-8](#), p. 1119-1136

կառավարումը պետք է կապված լինի տնտեսագիտական տեսանկյունից դիտվող օպտիմալ լուծումների հետ:

Հատկապես վերջին ժամանակաշրջանում նոր հանրային կառավարման պայմաններում տնտեսությունը պետական կառավարման մարմիններին առաջադրում է առօրեական բազմաթիվ խնդիրներ: Սակայն, ինչպես նշում է Զորնը, տնտեսությունը դեռևս չի կարողանում հստակ և ուղղակի ազդեցություն ունենալ պետական քաղաքականության վրա: Սա ակնհայտ է քաղաքական որոշումների կայացման գործընթացում, որտեղ որոշումներ կայացնողների կողմից որոշակի կայուն տնտեսական մեկնաբանություններ առկա չեն: Դա կարող է կապված լինել բյուջեի դեֆիցիտի, հանրային ենթակառուցվածքների զարգացման, աղքատության դեմ պայքարի, բնակարանային ծրագրերի, միջազգային առևտրային գործընկերների հետ գործարքների և այլ խնդիրների հետ: Թեև կարող են լինել բացատրություններ քաղաքական բազմաթիվ որոշումների տնտեսական հիմնավորումների բացակայության մասին, սակայն ավելի շատ առկա են քննադատական մոտեցումներ պետական կառավարման և տնտեսական դաշտի անհամապատասխանության վերաբերյալ:

Ինչպես արդեն արձանագրվեց, տնտեսությունն ուղղակի ազդեցություն չի ունենում վարչական գործառնությունների կառուցվածքի վրա: Այս իրավիճակը մասամբ կարելի է վերագրել մի այնպիսի խնդրի, թե ինչպիսի տնտեսական համակարգ պետք է ձևավորել՝ օպտիմալ վարչարարություն կազմակերպելու համար: Այս խնդրի լուծման նպատակով նախ և առաջ պետք է գնահատել կառավարչական գործառնությունների ազդեցությունը տնտեսական ցուցանիշների վրա: Գիտական քննարկման նյութ է տնտեսության դերի գնահա-

տումը պետական կառավարման համակարգում: Այս առումով անհրաժեշտ է ուսումնասիրությունները տանել երեք հիմնական ուղղություններով<sup>33</sup>.

1. պետական կառավարման և տնտեսական համակարգերի փոխառնչություններ,
2. պետական և հանրային վարչարարության համակարգերում առկա օպերատիվ խնդիրներ,
3. տնտեսության և հանրային կառավարման մարմինների ներդաշնակեցման գործառույթներ:

Հանրային կառավարման եվրոպականացման սոցիալ-տնտեսական ազդեցությունների գնահատմանը վերաբերող մի աշխատության մեջ<sup>34</sup> հիմնավորվում են և առաջարկվում կիրառել վիճակագրական մոդելներ և համապատասխան սոցիալ-տնտեսական ցուցանիշներ: Նպատակ է դրվել գնահատելու հանրային կառավարման տնտեսական և սոցիալական ազդեցությունը՝ կիրառելով քանակական և որակական ցուցանիշներ՝ վարչական ու տնտեսական համակարգերի փոխազդեցությունների կամ ինտեգրման աստիճանի որոշման նպատակով: Առաջարկվում են վիճակագրական վերլուծության շրջանակային մոդելներ պետական և հանրային կառավարման մակարդակներում, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ցուցանիշներ և մոդելներ, որոնք ուղղված են կառավարչական ծախսերի որոշմանը և տնտեսական ցուցանիշների հետ այդ ծախսերի կորելյացվածության աստիճանի գնահատմանը:

---

<sup>33</sup> C. Kurt Zorn, The economic perspective on public administration

<sup>34</sup> The Economic and Social Impact of Public Administration Europeanization, [https://mpr.ub.uni-muenchen.de/24267/1/MPRA\\_paper\\_24267.pdf](https://mpr.ub.uni-muenchen.de/24267/1/MPRA_paper_24267.pdf)



Ինչ վերաբերում է տնտեսության կառավարման գործում պետության դերին, գաղտնիք չէ, որ այս առումով պետական քաղաքականությունն ուղղված է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության մշակմանը, պետական պարտքի կառավարմանը, ինչպես նաև տնտեսության միկրո և մակրո կարգավորումներին<sup>35</sup> :

Ուշադրության արժանի մի շարք ուսումնասիրություններ նվիրված են տնտեսական աճի վրա պետական ծախսերի ազդեցություններին<sup>36</sup>: Մասնավորապես Դանիել Միտչելի կողմից կատարված հետազոտության արդյունքում կատարվել են հետաքրքիր եզրահանգումներ<sup>37</sup>.

- հիմնականում պետական ծախսերն ունենում են բացասական տնտեսական ազդեցություն,
- կարևոր է կառավարման ապարատի չափը, այլ ոչ թե ֆինանսավորման մեխանիզմը,
- առկա են համոզիչ ապացույցներ, որ պետական ծախսերը բավականին բարձր են, և ԱՄՆ-ի տնտեսությունն առավել արագ կարող է աճել, երբ կառավարության բեռը նվազի:

Տնտեսագիտության տեսությունը միանշանակ չի ձևավորում եզրակացություններ, որոնք հստակ փաստում են պետական ծախսերի կոնկրետ ազդեցությունը տնտեսական

---

<sup>35</sup> Government's Role in Managing the Economy, [https://saylordotorg.github.io/text\\_exploring-business-v2.0/s05-07-government-s-role-in-managing-.html](https://saylordotorg.github.io/text_exploring-business-v2.0/s05-07-government-s-role-in-managing-.html)

<sup>36</sup> Որպես պետական ծախսեր նկատի ունենք ոչ միայն կառավարման ապարատի ծախսերը, այլ նաև պետական տարբեր ծրագրերին վերաբերող ծախսերը:

<sup>37</sup> Daniel J. Mitchell, The Impact of Government Spending on Economic Growth, Background. executive summary, No1831, p. 1-18.

գործունեության վրա: Անշուշտ, գրեթե բոլոր տնտեսագետները կհամաձայնեն, որ կան հանգամանքներ, որոնցում պետական ծախսերի ցածր մակարդակը կխթանի տնտեսական աճը: Իհարկե, կան նաև հանգամանքներ, համաձայն որոնց պետական ծախսերի ավելի բարձր մակարդակը ցանկալի կլինի: Եթե պետական ծախսերը զրոյական են, ենթադրվում է, որ տնտեսական աճը նշանակալի չի լինի: Արդյունավետ չեն լինի պետական գույքի պաշտպանությունը և ենթակառուցվածքի զարգացումը: Այլ կերպ ասած, որոշ պետական ծախսեր անհրաժեշտ են: Ըստ այսպես կոչված Ռանի կորի՝<sup>38</sup> ԱՄՆ-ում օպտիմալ կետ է համարվում, երբ պետական ծախսերը կազմում են ՀՆԱ-ի մոտ 15%-ը: Այդ դեպքում տնտեսական աճը 4% է: Այնուհետև կորը սկսում է նվազել, և պետական ծախսերի 60%-ի դեպքում տնտեսական աճը արդեն 0%-է:

Մի շարք վերլուծաբաններ ուսումնասիրել են քաղաքական ինստիտուտների և տնտեսական աճի փոխհարաբերությունների խնդիրները: Քաղաքական ինստիտուտները ձևավորում են պետական և հանրային կառավարման տրամաբանությունը և համակարգը:

Գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ տնտեսական ինստիտուտները (օրինակ, սեփականության իրավունքը, կարգավորող հաստատությունները, մակրոտնտեսական կայունացում ապահովող հաստատությունները, սոցիալական ապահովագրության կառույցները, կոնֆլիկտների կառավարման կազմակերպությունները և այլն) տնտեսական աճի

---

<sup>38</sup> Daniel J. Mitchell, The Impact of Government Spending on Economic Growth, Background. executive summary, No1831, p. 1-18

հիմնական աղբյուրն են<sup>39</sup>: Միաժամանակ տնտեսական ինստիտուտները վճռորոշ ազդեցություն ունեն ֆիզիկական և մարդկային կապիտալի, տեխնոլոգիաների և արդյունաբերական արտադրության ու ներդրումների վրա, միաժամանակ դրանք կարևոր են նաև ռեսուրսների բաշխման համար:

Տնտեսական աճի վրա քաղաքական ինստիտուտների ազդեցությունը գնահատելու նպատակով մշակվել է Էկոնոմետրիկ մոդել<sup>39</sup> օգտագործելով 109 երկրների տարեկան տվյալները 1975-ից 2004 թթ. ժամանակաշրջանի համար: Այս մոդելում կախյալ փոփոխականը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն է: Հաշվի են առնվել մի քանի քաղաքական ինստիտուտներ՝ որպես անկախ փոփոխականներ: Դրանք են ընտրական կանոնները (բազմակարծության կանոն, համամասնական ներկայացուցչություն, բաց և փակ ցուցակներ, ընտրատարածքների ակտիվության աստիճան), կառավարման ձևը (խորհրդարանական և նախագահական համակարգեր), քաղաքական ռեժիմը (դիկտատուրա ընդդեմ ժողովրդավարության, որը չափվում է ժողովրդավարության տևողությամբ), խորհրդարանում կամ կոնգրեսում իշխող կուսակցության կամ կոալիցիայի չափը (իշխող կուսակցության կամ կոալիցիայի կողմից տեղերի քանակը), հարկային քաղաքականությունը:

---

<sup>39</sup> Dani Rodrick, *One Economics, Many Recipes: Globalization, Institutions and Economic Growth*, Princeton / Oxford 2007 Princeton University Press, 278 p., <http://assets.press.princeton.edu/chapters/i8494.pdf>

<sup>39</sup> Vladimir K Teles, Carlos Pereira, *Are Political Institutions Substitutes for Democracy? A Political Economy Analysis of Economic Growth*, Brazilian review of econometrics, vol 3 No1, p.3-25  
<http://bibliotecadigital.fgv.br/ojs/index.php/bre/article/view/26290/25354>

Մոդելի լուծման արդյունքների հիման վրա կատարվել են մի շարք ուշադրության արժանի եզրահանգումներ, մասնավորապես ժողովրդավարական ռեժիմը դրականորեն է ազդում տնտեսական աճի վրա: Ինչպես և ենթադրվում էր, հարուստ երկրներում քաղաքական ինստիտուտների ազդեցությունը, ի տարբերություն աղքատ երկրների, տնտեսության վրա փոքր է կամ աննշան: Այս եզրակացությունները փաստում են դասական ժողովրդավարության նշանակությունը, քանի որ տնտեսական ցուցանիշների դրական շարժի և ժողովրդավարության միջև նշանակալի կապ է արձանագրվել:

Մեկ այլ հետազոտության մեջ ցույց է տրված<sup>40</sup>, որ «ժողովրդավարության ակնկալվող «կյանքը» մեկ շնչի հաշվով 1000 դոլարից ցածր ՀՆԱ ունեցող երկրում կազմում է մոտ ութ տարի: \$ 1,001 և \$ 2,000 միջակայքի դեպքում ժողովրդավարությունը կարող է տևել 18 տարի: Բայց ավելի քան 6000 դոլարի դեպքում ժողովրդավարությունը տևում է ընդամիշտ»: Մյուս կողմից արձանագրված է, որ քաղաքական ինստիտուտները մեծ կարևորություն ունեն՝ ցածր եկամուտ ունեցող երկրներում տնտեսական աճ ապահովելու համար: Մասնավորապես, երբ նույն քաղաքական էլիտան կառավարում է երկար, կուսակցական համակարգն ավելի մասնատված է, և մեծ թվով կուսակցություններ են առկա կառավարման կռալիցիայում: Այս դեպքում ոչ հարուստ երկրների համար առկա է ցածր տնտեսական աճ: Այդ երկրներում ավելի

---

<sup>40</sup> Przeworski, A. (1999) “Minimalist Conception of Democracy: A Defense.” *In Democracy’s Value* edited by Shapiro, I. and Hacker-Cordon, C. Cambridge: Cambridge University Press, p.12-17

բարձր տնտեսական արդյունքների հասնելու համար կարևորվում են ընտրատեղամասերի ակտիվությունը, քաղաքական բազմակարծությունը, քաղաքական բևեռացումը:

Վերոնշյալ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական ինստիտուցիոնալ փոփոխականների ազդեցությունները տարբեր են ավտորիտար և ժողովրդավար երկրների համար: Ժողովրդավարական ռեժիմներում, քաղաքական ուժի ավելի երկարատև իշխանությունը, որ իրականացվում է որոշակի քաղաքական առաջնորդի կողմից, տնտեսական աճը կլինի ավելի մեծ, սակայն ավտորիտար ռեժիմի դեպքում այդ ազդեցությունը վերանում է: Քաղաքական բևեռացումը նույնպես ունի հակառակ ազդեցություններ ժողովրդավարական և ավտորիտար ռեժիմներում: Թեև այս փոփոխականը չի օգնում ավտորիտար կառավարություններին հասնել լավ տնտեսական արդյունքների, սակայն դա դրական ազդեցություն է ունենում ժողովրդավարական համակարգերում:

Ակնհայտ է, որ անգամ ավտորիտար ռեժիմները կարող են բավարար տնտեսական արդյունք ունենալ, քանի դեռ որոշ քաղաքական իրավունքներ տրվում են հասարակությանը: Կարելի է նաև ենթադրել, որ քաղաքական ինստիտուտները դիտվում են որպես ավտորիտար ռեժիմում ժողովրդավարությանը փոխարինող գործոններ: Այլ կերպ ասած, ավտորիտար ռեժիմները քաղաքական ինստիտուտների առումով կարող են տարբերակվել միմյանցից: Դա հաստատում է Պրզևորսկին<sup>41</sup>, ով տնտեսական աճի առումով

---

<sup>41</sup> Przeworski, A.; Alvarez, M.; Cheibub, J. A.; and Limongi, F.

(2000) *Democracy and Development: Political Institutions and Well-Being in*

քաղաքական ժողովրդավարության և ավտորիտար տարբեր ռեժիմների գործառույթների միջև զգալի տարբերություն չի գտել: Հետևաբար՝ ենթադրվում է, որ ռեժիմների տարբեր տեսակների դիտարկումների (ժողովրդավարություն ընդդեմ ավտորիտարիզմի) փոխարեն հարկավոր է որոշել, թե որ տեսակի ժողովրդավարությունը կամ ավտորիտարիզմն է համարվում համապատասխան վերլուծության ենթարկված քաղաքական ինստիտուտ:

Տ. Աճեմօղլուի կողմից խնդիր է դրվել՝ հասկանալու, թե տարբեր քաղաքական ինստիտուտները ինչպես են ազդում տնտեսական որոշումների և տնտեսական աճի վրա, և այս խնդրի շրջանակներում պետք է դուրս գալ ժողովրդավարության և ավտորիտարիզմի միջև տարբերությունների դիտարկումից<sup>42</sup>: Թեև ժողովրդավարական ռեժիմի ընդունումը բավարար չէ տնտեսական աճի հասնելու համար, ժողովրդավարությունն անկասկած դրական ինստիտուտ է:

Տ. Աճեմօղլուն և Ջ. Ռոբինսոնը, դիտարկելով քաղաքական ինստիտուտների և տնտեսական զարգացման փոխառնչությունները, տարբերում են գերակտիվ և ներառական (ինկլյուզիվ) քաղաքական ինստիտուտները: Դրանցից առաջինը կենտրոնացնում է քաղաքական իշխանությունը արտոնյալ խավի (էլիտայի) ձեռքում, ստեղծում գերակտիվ տնտեսական

---

*the World*, 1950-1990. New York: Cambridge University Press, 340 p. pp.142-179

<sup>42</sup> Acemoglu, D. and Robinson, J. (2006) “Overview” in Weingast, Barry R. and Wittman, D. (Ed.) *The Oxford Handbook of Political Economy*, Oxford: Oxford University Press,

Аджемоглу Д., Робинсон Дм. А. Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., изд.-во АСТ, 2016, էջ 214, 215, 533, 588:

ինստիտուտներ, որոնք տնտեսական զարգացման արդյունքները և դրանց բաշխումը ծառայեցնում են էլիտայի շահերին: Ներառական քաղաքական ինստիտուտները բացառում են նման տնտեսական ինստիտուտների ստեղծումը, իշխանությունն էլիտայի փոխարեն պատկանում է հանրությանը, չի սահմանափակվում շուկայի մասնակիցների թիվը: Ավտորիտարիզմի և գերակտիվ քաղաքական ու տնտեսական ինստիտուտների պարագայում տնտեսական աճը չի կարող լինել տևական ու կայուն, իսկ տնտեսական զարգացումը, ինչպես կարծում են որոշ տեսաբաններ, չի կարող հանգեցնել ժողովրդավարության: Ուստի կայուն և երկարատև տնտեսական զարգացման համար գերակտիվ քաղաքական ինստիտուտները պետք է վերափոխվեն ներառականի:

Մեկ այլ ուսումնասիրության մեջ<sup>43</sup> դիտարկվում են Ռուսաստանի Դաշնությունում հանրային կառավարման համակարգի գործունեության ցուցանիշների և սոցիալ-տնտեսական տարածքային զարգացման հիմնական ցուցանիշների միջև փոխհարաբերությունները, և ժամանակակից տնտեսամաթեմատիկական գործիքների հիման վրա կատարվում է բազմավեկտոր կորելյացիոն վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է 2008-2010 թթ. Ռուսաստանի Դաշնության մի շարք շրջաններում հաշվարկված ցուցանիշների համար:

Արդյունքում թույլ կապ է հայտնաբերվել մեզոմակարդակի տնտեսական համակարգերի համար: Տեսանելի կորել-

---

<sup>43</sup> Kalinina, Alla; Petrova, Elena; Buyanova, Marina Efficiency of public administration and economic growth in Russia : empirical analysis, 2015, <https://www.um.edu.mt/library/oar/handle/123456789/2980>, Vol 18 No 3. pp 77-90.

յացիոն կապ է նկատվել տարածքային տնտեսական զարգացման ու գործադիր իշխանությունների կատարողականի ցուցանիշների, ինչպես օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության գործադիր մարմինների քաղաքացիական ծառայողների միջին ամսական աշխատավարձի, համայնքների բյուջեի եկամուտների հարկային և ոչ հարկային մուտքերի հարաբերակցության, կառավարման մարմինների գործադիր ճյուղում աշխատողների թվի միջև:

Տարածաշրջանային կառավարման համակարգերի և սոցիալ-տնտեսական տարածքային զարգացման գործառնական ցուցանիշների միջև թույլ փոխհարաբերությունները ենթադրում են ակտիվացնել կառավարչական գործառույթները:

## **2. Տնտեսական ու սոցիալական զարգացման վրա հանրային կառավարման ազդեցության գնահատման մոդելը**

Դիտարկված հետազոտությունները և դրանց եզրակացությունները խիստ ուշագրավ են, սակայն ամբողջական չեն «հանրային կառավարում-սոցիալ-տնտեսական արդյունքներ» փոխառնչությունների ընդգրկման շրջանակները, ինչն ըստ երևույթին պայմանավորված է խնդրի բարդությամբ: Բացի այդ, կատարված վերլուծությունները, թեև հետաքրքիր, սակայն ավելի շատ ունեն որակական ուղղություն և չեն բացահայտում տնտեսական ու սոցիալական զարգացման վրա հանրային կառավարման ազդեցության քանակական բնութագրիչները:

Սոցիալական ու տնտեսական զարգացման վրա հանրային կառավարման ազդեցության գնահատման նպատա-



կով անհրաժեշտ է հստակեցնել նրա արդյունքային բնութագրիչները և կառավարչական գործոնները:

Հատկապես բարդ է արդյունքները քանակապես բնութագրելը, քանի որ հանրային կառավարման գործառույթները և դրանցով պայմանավորված արդյունքները բազմաբնույթ են: Հայտնի է, որ XXI դարի սկզբին պետության առաքելությունը դրսևորվում է հինգ առանցքային գործառույթների իրականացմամբ<sup>44</sup>.

- հասարակական և տնտեսական կյանքի համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ստեղծում,
- քաղաքական իրադրության կայունության և մակրոտնտեսական արդյունավետ հավասարակշռության ապահովում,
- սոցիալական ապահովության և ենթակառուցվածքային ոլորտներում ներդրումների իրագործում,
- հասարակության անաշխատունակ և տարեց անդամների սոցիալական պաշտպանություն:

Հանրային կառավարման առումով թվարկածին հարկ է ավելացնել ժողովրդավարական ազատությունների, երկրի ներքին և արտաքին անվտանգության, տարածքային համաչափ զարգացման ապահովումը:

Նշված գործառույթների ըստ պատշաճի իրագործմամբ իբրև առաջին դրսևորում զարգանում է տնտեսական համակարգը, ինչի շնորհիվ աճում է երկրի համախառն ներքին արդյունքը, որն արտացոլում է տնտեսության վիճակի ընդ-

---

<sup>44</sup> St' u Gosudarstvo v menyayemom mire. Otchet o mirovom razvitanii, M., Praym-TACC, 1997.

<http://documents.worldbank.org/curated/en/886571468156582917/pdf/173000RUSSIAN018213137761901PUBLIC1.pdf>.

հանուր և ամփոփ պատկերը: Մակայն այդ ցուցանիշը, որքան էլ այն ընդհանրական է, չի ընդգրկում հանրային կառավարման բազմաբնույթ հետևանքները: Մասնավորապես համախառն ներքին արդյունքի ծավալի ընդլայնումն ուղղակիորեն չի հանգեցնում բնակչության սպառման ծավալի աճին, մանավանդ եկամուտների հավասարաչափ բաշխմանը, քանի որ այն, ապրանքների և ծառայությունների սպառման ծավալից բացի, բովանդակում է համախառն ներդրումները, զուտ արտահանումը, պետական գնումները, որոնցում չեն ներառվում պետական տրանսֆերտային վճարումները<sup>45</sup>: Ուստի հարկ է առանձին դիտարկել բնակչության մեկ շնչի հաշվով ապրանքների և ծառայությունների սպառման ծավալը՝ Ջինի վիճակագրական գործակցով ճշգրտմամբ:

Հանրային կառավարման կարևորագույն խնդիրներից է երկրի ներքին և արտաքին, բնապահպանական անվտանգության ապահովումը: Այդ նպատակով պետական բյուջեից կատարվում են հատկացումներ, որոնք ուղղվում են անվտանգային խնդիրների լուծմանը: Ուստի նշված կարևորագույն խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը կարող են արտահայտվել անվտանգային ծախսերի ծավալով և երկրի ներքին ու արտաքին հարաբերական կայունությամբ, ինչը կարող է բնութագրվել փորձագիտական գնահատականներով:

Հանրային կառավարման էական նպատակներից է ժողովրդավարական ազատությունների երաշխավորումը: Այն սկսվում է բոլոր մակարդակների կառավարման մարմինների ազատ ու թափանցիկ ընտրությունների կազմակերպումից մինչև մարդու սահմանադրական իրավունքների, խոսքի

---

<sup>45</sup> St' u Мэнкью Н. Г. Принципы экономики. СПб, Питер-Ком, 1999, с. 485-486.

ազատության, քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության ապահովումը: Անշուշտ, նշված գործընթացները կարող են բնութագրվել փորձագիտական գնահատականներով:

Այսպիսով, հանրային կառավարման հիմնական արդյունքները կարող են դրսևորվել առնվազն չորս բնութագրիչներով.

- համախառն ներքին արդյունքի ծավալը (K1),
- բնակչության մեկ շնչի հաշվով ապրանքների և ծառայությունների սպառման իրական ծավալը շուկայական գներով՝ ճշտված Ջինի վիճակագրական գործակցով (K2),
- երկրի ներքին ու արտաքին, բնապահպանական և կիրքեռանվտանգության փաստացի ծախսերը և հարաբերական կայունությունը (K3),
- ժողովրդավարական ազատությունների աստիճանը՝ փորձագիտական բալային գնահատականներով (K4):

Հանրային կառավարման արդյունքներն ապահովող գործոնները կամ այլ կերպ՝ կառավարչական գործոնները մեծաթիվ են, որոնցից հատկապես կարող են կարևորվել հետևյալները.

- աշխատողների թիվը հանրային կառավարման ոլորտում (M1),
- ոլորտում կատարվող ծախսերը կամ տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ (M2),
- կառավարչական որոշումների որակը (օպտիմալությունը), (M3),
- որոշումների կատարման ապահովման կառուցակարգերի հուսալիությունը (M4),

- հարկային բեռը (M5) ,
- կառավարման մարմնի կողմից ապահովվող գնաճը (M6),
- ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը կամ բանկային վարկի միջին տոկոսադրույքը (M7),
- նորամուծական ծախսերը (գիտության և նրա արդյունքների առևտրայնացման ոլորտում), (M8),
- պետական բյուջեից ծախսերը արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման համար (M9),
- ներգրավված ներդրումները՝ շնորհիվ ներդրումային միջավայրի բարելավման (M10):

Վերը թվարկված գործոններից առաջին չորսը վերաբերում են կառավարման մարմինների ծավալային և որակական բնութագրիչներին, հաջորդ երեքը՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության գործիքների արդյունավետությանը, վերջին երեքը՝ ռազմավարական կառավարման միտումներին:

Թվարկված գործոնները չափելի են, բացի  $M_3$  և  $M_4$  -ից: Դրանք կարող են գնահատվել փորձագիտական եղանակով: Մյուս գործոնների մի մասը ունեն բացարձակ, որոշ մասը՝  $M_5$ - $M_7$ , հարաբերական չափում: Միօրինականացման համար բացարձակ գործոն-ցուցանիշները կարող են գնահատվել հարաբերական արտահայտությամբ:

Նկարագրված խնդիրը կարող է լուծվել տնտեսամաթեմատիկական մոդելավորման եղանակով: Ակնհայտ է, որ հանրային կառավարման արդյունքների և կառավարչական գործոնների միջև կապն ունի ստոխաստիկ՝ պատահական-

հավանական բնույթ: Կարող է կիրառվել ինչպես գծային, այնպես էլ ոչ գծային մոդել: Երևույթների կապի մոդելավորման համար կարող են դիտարկվել հետևյալ տարբերակները.

- չորս առանձին արդյունքների և կառավարչական գործոնների միջև,
- համընդհանրացված կամ ինտեգրալ արդյունքի և կառավարչական գործոնների միջև:

Վերոնշյալ խնդրի շրջանակներում հանրային կառավարման տնտեսական ազդեցությունների գնահատման վերաբերյալ կարող են կիրառվել տարբեր վիճակագրական մեթոդներ: Մեր կողմից առաջարկվում է գնահատման բազմագործոն մոտեցումը՝ փուլային տարբերակով: Բազմափուլ մոդելի նպատակն է ձևավորել հանրային կառավարման օպտիմալ քաղաքականություն, որը պայմանավորված է ինչպես կազմակերպչական, սոցիալ-քաղաքական, այնպես էլ ֆինանսատնտեսական բազմաբնույթ գործոններով: Իհարկե, խնդրահարույց է մի շարք որակական պարամետրերի քանակական գնահատման խնդիրը, որը կարևոր է ձևական մոդելի լուծման համար, սակայն նախ և առաջ կարևոր է մոդելի ձևական ներկայացումը՝ հետագայում մոդելի լուծման խոչընդոտների շուրջ գիտական քննարկումները շարունակելու առումով: Այսպիսով, առաջարկվում է եռափուլ մոտեցում.

1. գործոնային և զույգային ազդեցությունների նախնական վերլուծություն,
2. ազդեցությունների գնահատում և պարամետրական վերլուծություն,
3. օպտիմալ կառավարման վերլուծություն:

Հանրային կառավարման տնտեսական ազդեցությունների գնահատումը կարող է կատարվել տարբեր մակարդակ-

ներում և տարբեր մոտեցումներով: Ազդեցությունները կարող են գնահատվել ինչպես պետական մակրո, այնպես էլ տեղական ինքնակառավարման մակարդակներում:

Առաջին փուլում դիտարկվում, գեներացվում և նորմալ տեսքի են բերվում կառավարման հիմնական արդյունքները և կառավարման գործոնները բնութագրող  $K_1$ - $K_4$  ցուցանիշները:

Առաջին երկու ցուցանիշները բնութագրում են կարևորագույն տնտեսական ինդիկատորներ, որոնք, անշուշտ, հանրային կառավարման արդյունք են:

Իհարկե, ճշգրիտ չէ երկրի անվտանգության մակարդակը գնահատել միայն ներքին ու արտաքին անվտանգության, բնապահպանական և կիբեռանվտանգության փաստացի ծախսերի հիման վրա: Այս մոտեցումը թերևս հիմնավորվում է չափելիության նկատառումով: Առկա են տարբեր մոտեցումներ անվտանգության գնահատման վերաբերյալ, սակայն դեռևս չի առաջարկվում անվիճելի մոտեցում, որի միջոցով կարելի է չափել երկրի ընդհանուր անվտանգությունը<sup>46</sup>:

Ժողովրդավարության ազատությունների աստիճանը նույնպես կապված է չափելիության խնդրի հետ և հետազոտողների ուշադրության կենտրոնում է: Ներկայումս ժողովրդավարության չափման նպատակով ընդունված է Մարդկային զարգացման ինդեքսի (HDI) կիրառությունը<sup>47</sup>:

---

<sup>46</sup> Robert K. Cunningham, Why Measuring Security Is Hard, Massachusetts Institute of Technology, IEEE Security and Privacy Magazine · July 2010, 8(4) pp.46-54

<sup>47</sup> Can Democracy be measured? By Odd R. Hunnes,  
<https://bravo.hivolda.no/hivolda-xmlui/bitstream/handle/11250/2467236/Chapter%2013%3A%20Can%20>

Մեր համոզմամբ ժողովրդավարական ազատությունների աստիճանը ավելի ճշգրիտ կարող է գնահատվել խոսքի, մամուլի, ընտրությունների ազատության ու դատական համակարգի անկախության ինդեքսների արտադրյալով:

Հաշվի առնելով նաև բավական մեծ գիտական հետաքրքրությունը և կարևորությունը վերոնշյալ կառավարման արդյունքների շուրջ՝ կարելի է փաստել, որ ինչպես երրորդ, այնպես էլ չորրորդ արդյունքների գնահատումը կարող է դիտվել որպես առանձին ուսումնասիրության նյութ:

Կառավարչական գործոնները ներկայանում են որպես կառավարման փոփոխականներ, որոնց միջոցով իրականացվում է կառավարման գործընթացը: Խնդրի լուծման արդյունքում նպատակ է դրվում բացահայտելու կառավարման այն գործոնները, որոնք առավել էական դրական կամ բացասական ազդեցություն ունեն կառավարման համակարգի արդյունավետության վրա, ինչպես նաև գնահատելու այդ ազդեցությունների աստիճանը: Այդպիսով իսկ կարող են ձևավորվել կառավարման մարմինների արդյունավետ ռազմավարությունները:

Քանի որ ստացված թվային շարքերը կարող են ունենալ տարբեր չափողականություն, ազդեցությունների գնահատման համար նպատակահարմար է թվային շարքերը նորմալացնել: Նորմալացման համար կիրառվում է դասական մոտեցումը՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$A_{i \text{ norm}} = \frac{A_i}{A_{max}}$$

որտեղ

---

[emocracy%20be%20measured%20/%20Odd%20R%20Hunnes?sequence=17&isAllowed=y](http://emocracy%20be%20measured%20/%20Odd%20R%20Hunnes?sequence=17&isAllowed=y)

$A_{i\ norm}$  –ը նորմալացված թվային շարքի  $i$ -րդ անդամն է,  $A_{max}$ –ը շարքի առավելագույն բացարձակ արժեք ունեցող անդամն է:

Նորմալացված թվային շարքերի համար կառուցվում է կորելյացիոն մատրիցա՝ փոխազդեցությունների նախնական վերլուծության իրականացման նպատակով:

Երկրորդ փուլում կատարվում է կառավարչական գործոնների ազդեցության գնահատումը կառավարման հիմնական արդյունքների վրա: Ինչպես նշվել է, կարող է կիրառվել երկու մոտեցում՝ կառավարման արդյունքի ինտեգրալ ցուցանիշի կիրառմամբ և ըստ առանձին կառավարման արդյունքների:

Կառավարման արդյունքի գնահատման նպատակով կարող է հաշվարկվել ինտեգրալ ցուցանիշ, որը կարող է օգտակար լինել հանրային կառավարման ռազմավարություններ մշակելու համար<sup>48</sup>: Այն ներառում է կառավարման հիմնական արդյունքները, որոնք կարող են տարբեր լինել՝ ելնելով կառավարման արդյունավետության գնահատման տարբեր ուղղություններից: Ինտեգրալ ցուցանիշի մեջ ներառվող յուրաքանչյուր բաղադրիչի համար անհրաժեշտ է սահմանել որոշակի կշիռներ: Դա հիմնականում իրականացվում է փորձագիտական եղանակով: Այդ կշիռների միջոցով ցուցանիշները կարող են հաշվարկվել տարբեր մեթոդներով, մասնավորապես կշռված միջինի կամ միջին երկրաչափականի

---

<sup>48</sup> Узяков М.Н., Сапова Н.Н., Херсонский А.А. Инструментарий макроструктурного регионального прогнозирования: методические подходы и результаты расчетов. Проблемы прогнозирования. 2010. № 2.



մեթոդով: Ինտեգրալ ցուցանիշի հաշվարկման նպատակով առաջարկվում է երկու մոտեցում<sup>49</sup>:

Հիմք ընդունելով նշված մոտեցումներից մեկը՝ հանրային կառավարման արդյունքների և կառավարչական գործոնների միջև կապը ռեգրեսիոն գծային մոդելի տեսքով կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

$$INT = F(X, a) + \varepsilon,$$

որտեղ

INT-ը կառավարման արդյունքի ինտեգրալ ցուցանիշն է ըստ տարիների՝ հաշվարկված առաջին մոտեցմամբ,  $a$ -ն մոդելի պարամետրերն են, իսկ  $\varepsilon$ -ը՝ մոդելի պատահական սխալը:

$F(X, a)$  ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$F(X, a) = a_0 + (a_1 * X_1) + (a_2 * X_2) + \dots + (a_n * X_n)$$

Էլաստիկության կամ կառավարչական գործոնների ազդեցության չափի վերլուծության նպատակով առաջարկվում է կիրառել ցուցչային ռեգրեսիոն մոդել: Այս դեպքում  $F(X, a)$  ֆունկցիան կունենա հետևյալ տեսքը.

$$F(X, a) = a_0 a_1^{e_1} a_2^{e_2} \dots a_n^{e_n}$$

Որտեղ  $e_1, \dots, e_n$  ցուցիչները մեկնաբանվում են որպես կառավարչական գործոնների էլաստիկության գործակիցներ:

Ինչպես վերը նշվեց, հաջորդ մոտեցումը ենթադրում է կիրառել առանձին գնահատման մոդելներ ըստ կառավարման առանձին արդյունքների: Այս դեպքում կունենանք 4 մոդելներ և պարամետրական վերլուծություններ՝ ըստ կառավարման յուրաքանչյուր արդյունքի:

---

<sup>49</sup> Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, ՀՀ ԳԱԱ ակադ. Յու Մ. Սուվարյանի խմբ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017:

### 3. Օպտիմալ հանրային կառավարում

Օպտիմալ հանրային կառավարումն առկա ռեսուրսների լավագույն օգտագործմամբ տնտեսական բարձր տեմպերով երկարաժամկետ աճի, բնակչության պահանջմունքներին համապատասխան սպառման ծավալի և կառուցվածքի, երկրի ներքին և արտաքին անվտանգության ապահովումն է, երբ կառավարչական որոշումների ընդունումը և իրագործումն իրականացվում են ժողովրդավարության պայմաններում: Այս բնորոշումը բխում է հետևյալ ելակետային դրույթներից.

- օպտիմալ որոշումները կարող են կայացվել՝ հաշվի առնելով առկա նյութական, մարդկային, ֆինանսական ու մտավոր ռեսուրսները և դրանց արդյունավետ օգտագործումը,
- հանրային կառավարումն օպտիմալ է, եթե իրագործվում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործառույթները, ներառյալ մարդկային ազատությունների սահմանադրական պահանջները,
- բնակչության սպառման ծավալը և կառուցվածքը, ինչպես նաև երկրի անվտանգության երաշխիքները պայմանավորված են առկա ռեսուրսների, դրանց բազմապատկման և արդյունավետ օգտագործման աստիճանով,
- հանրային կառավարման օպտիմումը բացարձակ չէ, այն հարաբերական է՝ պայմանավորված առկա

ռեսուրսներով և սահմանադրաիրավական գործող  
կարգավորումներով:

Տեսականորեն վերը բերված գծային և ցուցային մոդել-  
ները կարող են իբրև նպատակային ֆունկցիա հանդիսանալ  
օպտիմալ լուծումների որոնման համար: Այսպիսով, ստաց-  
ված արդյունքների հիման վրա երրորդ փուլում հաշվարկ-  
վում են օպտիմալ կառավարման լուծումները: Այստեղ կա-  
րող են կիրառվել ինչպես դասական գծային օպտիմալաց-  
ման, այնպես էլ առավել բարդ օպտիմալ կառավարման դի-  
նամիկ մոդելներ, որոնք հիմնված են Բելմանի դինամիկ  
ծրագրավորման մեթոդի վրա: Առավել տեսանելի է գծային  
օպտիմալացման մոդելի կառուցումը, քանի որ ստացված  
գնահատման մոդելի հիման վրա կարող է կառուցվել նպա-  
տակային ֆունկցիան: Որոշակի բարդությո է կառավարչական  
գործոնների սահմանափակումների ձևակերպումը, քանի որ  
առկա են որոշ խոչընդոտներ:

Մասնավորապես դիտարկվող կառավարչական գոր-  
ծոնների չափելիությունը հաճախ խնդրահարույց է, և կարող  
են կիրառվել նաև ոչ բավարար ճշգրտությամբ հաշվարկված  
սահմանային ցուցանիշներ, որոնց հետագա կիրառումը գծա-  
յին մոդելում կարող է բերել ոչ բավարար հուսալիություն  
ունեցող արդյունքների: Դրանք հատկապես կարող են վերա-  
բերվել գնաճի, վարկային տոկոսադրույքի, հարկային բեռի  
նորմատիվային կամ սահմանային մեծություններին: Հարկ է  
նաև նկատել, որ կառավարչական յուրաքանչյուր փոփոխա-  
կան իր հերթին կարող է ունենալ օպտիմալ արժեք՝ կախված  
նրա դինամիկան պայմանավորող գործոններից: Ուստի  
կարելի է լուծել առանձին խնդիրներ՝ սահմանափակումների  
ճշգրտման նպատակով:

Վերոնշյալ խոչընդոտները հաղթահարելի են՝ միաժամանակ ներառելով գիտական հետաքրքրություն ունեցող խնդիրներ:

Նկարագրված մոդելների եռափուլ համակարգը կարող է դիտվել որպես ուրույն համակարգային մոտեցում, համաձայն որի կարող են մշակվել հանրային կառավարման ռազմավարական լուծումներ՝ հիմնված ընկալելի տնտեսամաթեմատիկական վերլուծությունների վրա: Ինչպես վերևում նկարագրվել է, առկա են հանրային կառավարման համակարգերի բարեփոխումներին վերաբերող բազմաթիվ վերլուծություններ, որոնցում հաճախ չեն հանդիպում քանակական լուծումներ, և առաջադրված չեն քանակական գնահատականներ: Այդ իսկ առումով կարելի է շեշտել, որ նմանատիպ խնդիրների առաջադրումը և մոդելները կարող են դիտվել որպես հանրային կառավարման համակարգերում կիրառվող նորագույն և արդյունավետ գործիքներ:

**ԳԼՈՒԽ 3.**  
**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅ**  
**ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**3.1. ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ**  
**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ:**  
**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ**

**Ներածություն**

Ավելի քան 1500 տարի պետականություն ունեցած և չորս անգամ այն կորցրած 10000-ամյա ժողովրդի համար չափազանց էական են հանրային կառավարման և սահմանադրականության ամրապնդման հիմնախնդիրները: Դրանց կարևորությունն առաջին հերթին պայմանավորված էր կորցրած պետականությունը վերականգնելու (օրինակ՝ Մ. Գոշի «Դատաստանագիրքը» (1184 թ.) Շ. և Հ. Շահամիրյանների «Որոգայթ փառացը» (1773 թ.) ստեղծվել են պետականության բացակայության պայմաններում) և կառավարման հանրային կառույցների զարգացման, դրանց արդյունավետության բարձրացման առաջնահերթությամբ (օրինակ՝ Վ. Բարեպաշտի «Կանոնական սահմանադրությունը» (488 թ.), Ս. Սպարապետի «Դատաստանագիրքը» (1265 թ.) և այլն): Պետականության բացակայության և օտար իշխանությունների տիրապետության պայմաններում հայ բնակչության եկեղեցական, քաղաքացիական, կենցաղային կենսական խնդիրները լուծվել են «Կանոնագիրք Հայոց»-ում» պարունակվող կանոններ-

րով, ինչի շնորհիվ այն կատարել է յուրօրինակ սահմանադրության և ժողովրդի համախմբման խիստ կարևոր գործառույթները:

Հանրային կառավարման՝ պետական և տարածքային ղեկավարման մարմինների գործունեության կարգի և սկզբունքների վերաբերյալ տեղեկություններ կան հայ պատմիչների՝ Մ. Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի և այլոց հայտնի աշխատություններում:

Հայ իրականության մեջ սահմանադրականության և պետական ու տարածքային կառավարման հիմնախնդիրներին անդրադարձել են պատմաբաններ, իրավաբաններ, կառավարման մասնագետներ: Նշված խնդիրներն առաջինը հանգամանորեն դիտարկել է Մխիթարյան միաբաններից Ղ. Ինձիճյանը<sup>1</sup>: Հին Հայաստանի պետական կառուցվածքը մ.թ.ա. VI-մ.թ. IV դարերում (շուրջ 700 տարի) հետազոտել և բնութագրել է Ս. Մ. Կրկյաշարյանը՝ հիմք ընդունելով հայ պատմիչների, ինչպես նաև հույն հետազոտողների աշխատությունները<sup>2</sup>: Բազրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքի ու վարչական կարգի, երկրի կառավարման առանձնահատկությունների մասին ուսումնասիրություն է հրապարակել Ռ. Ի. Մաթևոսյանը<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Ինձիճեան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ., Վենետիկ, 1835:

<sup>2</sup> Տե՛ս **Կրկյաշարյան Ս. Մ.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.), Ե., «Լուսակն», 2005, 312 էջ:

<sup>3</sup> Տե՛ս **Մաթևոսյան Ռ. Ի.**, Բազրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, 295 էջ:

Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման համակարգը հանգամանորեն լուսաբանվել է Ա. Գ. Սուքիասյանի մենագրությունում<sup>4</sup>:

Վերը թվարկված պատկառելի աշխատություններում պետական ու տարածքային կառավարման հարցերը դիտարկվում են ոչ թե առանձին, այլ պատմաքաղաքական, հաճախ նաև իրավական խնդիրների համատեքստում: Իբրև գուտ հանրային կառավարման հիմնախնդիր՝ պատմական Հայաստանում պետական ու տարածքային կառավարումը՝ համապատասխան կառուցվածքով և լիազորություններով, հետազոտվել է տողերիս հեղինակի աշխատություններում<sup>5</sup>:

Ի դեպ, հանրային կառավարման օրինական հիմքը երկրի հիմնական օրենքն է՝ սահմանադրությունը, որոշ երկրներում կամ հին դարերում՝ օրենքների (կանոնների) համախումբը: Սահմանադրականությունը նշանակում է հիմնական օրենքի (կամ օրենքների ու կանոնների) առկայությունը, դրանց առաջադիմականությունը և պարտադիր ու լիարժեք կիրառությունը երկրի հանրային գործունեության բոլոր մակարդակներում և ոլորտներում:

Հաշվի առնելով հանրային կառավարման կատարելագործման ասպարեզում պատմական փորձի և ազգային ավանդույթների առանձնահատուկ կարևորությունը՝ սույն հետազոտության մեջ հատկապես շեշտադրվում են հիմնահարցի առավել էական մեթոդաբանական յուրահատկությունները, որոնք այսօր էլ խիստ արդիական են:

---

<sup>4</sup> Տե՛ս **Սուքիասյան Ա. Գ.**, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1978, 392 էջ:

<sup>5</sup> Տե՛ս **Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ. Ա.**, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Ե., «Գիտություն», 2013, 368 էջ:

## Պետական և տարածքային կառավարումը հին և միջնադարյան Հայաստանում

Հին Հայաստանում մ.թ.ա. VI դարից սկսած մինչև մ.թ. IV դարը, շուրջ յոթ հարյուրամյակ տևող հայկական պետության կառավարման համակարգի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկություններ ամփոփում է Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»: Ըստ այդ տեղեկությունների՝ պետության գլուխը թագավորն էր, որն ուներ թե՛ օրենսդրական, թե՛ գործադիր գործառույթներ, զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, իրավասու էր նշանակել տարածքային կառավարման մարմինների ղեկավարներ, իրավարարներ արքունի տանը, քաղաքներում և ավաններում: Ըստ Խորենացու՝ թագավորն «իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում (արքունիք) մտնելու և իջնելու, խորհրդի, կերուխումի և զբոսանքների համար: Սահմանում է զինվորական կարգեր, առաջին, երկրորդ, երրորդ և այլն... Սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում»<sup>6</sup>: Ուշագրավ է և ուսանելի, որ թագավորը նշանակում է «երկու մարդ գրով հիշեցնողներ, մեկը բարին հիշեցնող, մյուսը՝ վրեժխնդրությունը: Բարին հիշեցնողին հրաման է տալիս՝ թագավորի բարկանալու կամ անիրավ հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին և մարդասիրությունը»<sup>7</sup>:

Ժամանակակից ընկալմամբ այդ մարդիկ ղեկավարի այսօրվա խորհրդականներն են, օգնականները, որոնց կարևոր գործառույթներից մեկը, ըստ պատմության դասերի,

---

<sup>6</sup> *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Ե., «Հայաստան», 1990, էջ 76:

<sup>7</sup> Նույն տեղում:



արդարացի որոշումների ընդունման ապահովումն է: Բնութագրելով հայոց Վաղարշակ թագավորի գործունեությունը՝ Մ. Խորենացին նշում է. «...քաջ և խոհեմ մարդ լինելով, անվախորեն տիրեց իր սահմաններում և կենցաղային կարգեր հաստատեց մեր աշխարհում՝ որքան կարելի էր, սահմանեց նախարարություններ և այս նախարարությունների համար նահապետներ պիտանի մարդկանցից, որոնք ծագում էին մեր նախնի Հայկի սերունդից և ուրիշներից»<sup>8</sup>: Այդպիսով, ձևավորվել են գործակալությունները՝ իբրև թագավորական իշխանության կառավարման գործառութային մարմիններ, և տարածքային կառավարման կառույցների գլխավորները՝ նախարարները, քաղաքների կառավարիչները, գյուղական համայնքների ղեկավարները: Մ. Կրկյաշարյանի ճշմարիտ դիտարկմամբ Հայաստանում նախարարները բաժանվել են երեք խմբի.

- արքունի տնտեսությամբ զբաղվող պաշտոնյաներ,
- արքունիքում տարբեր պաշտոններ կատարողներ,
- թագավորի հանձնարարությամբ վարչապետական տարբեր պաշտոններ կատարողներ երկրի տարբեր մասերում<sup>9</sup>:

Յուրաքանչյուր գործակալություն թագավորի որոշմամբ կառավարում էր նախարարը, իսկ այնուհետև այդ պաշտոնը դարձավ նախարարական տան ժառանգական պաշտոն: Արքունի տնտեսությունը կառավարում էր հազարապետությունը, որի ոլորտում էին ֆինանսները, այդ թվում՝ հարկահանությունը, սկզբնական շրջանում՝ մինչև մ.թ. II դարը, նաև

---

<sup>8</sup> *Մովսես Խորենացի*, նույն տեղում, էջ 67:

<sup>9</sup> Տե՛ս *Կրկյաշարյան Մ.*, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.), Ե., «Լուսակն», 2005, էջ 294:

ռազմական գործը: Մաղխագությունը արքունի դռան գործակալություններից էր, որը կարգավորում էր արքունի թիկնապահների գործունեությունը: Արքունիքի պաշտոնյաներից էր նաև թագադիր ասպետը, իսկ այդ կոչումը Վաղարշակ թագավորի կամքով առաջինը կրել է Բագարատը: Մարդատությունը նույնպես նույն բնույթի գործակալություն էր, որի գործառույթներից էին արքունիքի վերակացությունը, թագավորական կալվածքների և գանձերի վերահսկողությունը<sup>10</sup>: Մյուս կարևոր գործակալությունը սպարապետությունն էր, որն առաջացել էր երկրորդ դարի վերջերին, իսկ սպարապետը համարվում էր Մեծ Հայքի թագավորական ուժերի գերագույն հրամանատարը<sup>11</sup>: Նախարարն առաջին հերթին խոշոր հողատեր էր, որ իր ծառայությունների դիմաց ստացել էր թագավորից, և այն փոխանցվում էր սերնդեսերունդ, իբրև ժառանգություն: Նախարարներից ոմանք ստանում էին գործակալություններ ղեկավարելու իրավասություններ, իսկ մյուսներն օժտվում էին իրենց հանձնված տարածքները (քաղաքներ, գյուղեր) կառավարելու լայն լիազորություններով (հարկային, դատական, վարչական), իրավասու էին ունենալ զորք, բերդեր:

Ըստ պատմական աղբյուրների՝ երկրի արտաքին քաղաքականությունը, հարաբերություններն արտաքին աշխարհի հետ վարում էր թագավորը, նա էր լուծում պատերազմի, հաշտության, դաշնագրերի կնքման հարցերը: Նրա իրավասության շրջանակներում էին երկրի վարչական շրջանների սահմանների որոշման, քաղաքների հիմնադր-

<sup>10</sup> Տե՛ս *Մովսես Խորենացի*, նույն տեղում, էջ 70-75:

<sup>11</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 834:

ման, նրանց անվանակոչության հարցերը: Ըստ նույն աղբյուրների՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո հայ առաքելական եկեղեցուն վերապահված էր հոգևոր զարգացման, կրթության, մասամբ դատական գործը, իսկ հայկական պետության վերացումից հետո՝ նաև իրավական-քաղաքական հարաբերությունների կարգավորումը:

Պետական կառավարման խորհրդատվական մարմին էր արքունիքը, որը բաղկացած էր թագավորի անմիջական շրջապատի անդամներից, արքունիքում պաշտոններ զբաղեցնողներից, ավագանու բարձր խավի ներկայացուցիչներից: Առանձնահատուկ խորհրդատվական մարմին էր աշխարհաժողովը, որը երկրի համար կարևորություն ունեցող հարցերի քննարկման համար հանդիսավոր պահերին հրավիրում էր թագավորը, որին նախարարների և այլ իշխանների հետ միասին մասնակցում էին ազատանին, գյուղական համայնքների վերնախավը:

Աշխարհաժողովը ըստ էության հայ ավագանու բարձրագույն խորհրդակցական մարմինն էր<sup>12</sup>:

Անդրադառնալով Երվանդունիների սկզբնական շրջանում պետական կառուցվածքին՝ Ս. Մ. Կրկյաշարյանը գրում է, որ թագավորի հետ միասին երկրի կառավարման գործին մասնակցել են նաև քրմերը, իսկ հայոց թագավորի կողքին եղել է նրան շրջապատող և նրա իշխանությունն ինչ-որ չափով սահմանափակող ավագանու խորհուրդը, որը Քսենոֆոնի վկայությամբ գոյություն ուներ դեռևս Աքեմենյանների կողմից Հայաստանի նվաճումից առաջ<sup>13</sup>:

---

<sup>12</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 828:

<sup>13</sup> Տե՛ս *Կրկյաշարյան Ս. Մ.*, նշվ. աշխ., էջ 154:


Հանրային կառավարման համակարգը զարգացել և ճյուղավորվել էր Տիգրան Բ-ի աշխարհակալությունից հետո՝ հատկապես Արշակունիների գահակալության վերջին շրջանում (գծապատկեր 1)<sup>14</sup>:

Հին Հայաստանի հանրային կառավարման կառուցվածքը և առանձին մարմինների գործառույթները հակիրճ և ամփոփ ներկայացնելուց հետո անդրադառնանք երկու կարևոր խնդրի. ի՞նչ կառավարչական հանգամանքներով էին պայմանավորված հայկական թագավորության մերթընդմերթ հզորացումը և այնուհետև պատմության թատերաբեմից հեռանալը: Այս հարցերի պատասխանը կարելի է գտնել Պատմահոր և մյուս նշանավոր պատմիչների հանրահայտ աշխատություններում:

---

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

**Հանրային կառավարման համակարգը պատմական Հայաստանում**



Ըստ Մ. Խորենացու՝ Տիգրան Բ-ն «...մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ... Բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը»<sup>15</sup>... Նրա օրոք, գրում է Խորենացին. «Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն հաջող աղեղնավորներ, կռպալներով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակ-

<sup>15</sup> Տե՛ս *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 46:

ներով, մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով»<sup>16</sup>:

Ժամանակակից ընկալմամբ բանակը վերազինեց, հզորացրեց, զինվորներին դարձրեց պաշտպանված, իսկ հարձակման ուժը՝ բազմապատկված: Իբրև անձնավորություն թագավորը, ըստ Խորենացու, եղել է «մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն»: ...«Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»<sup>17</sup>:

Թագավորը միապետ էր՝ օժտված օրենսդիր և գործադիր բոլոր լիազորություններով, կառավարչական որոշումներն ընդունում էր միանձնյա, ուստի դրանց որակը և նպատակաւաւացությունը պայմանավորվում էին նրա անհատականության՝ իբրև առաջնորդի հատկանիշներով: Նրա որոշումների վրա կարող էին ազդել բարձր պետական ավագանին և կրոնական ավագ կառույցները՝ որպես ժողովրդի աշխարհիկ և հոգևոր պատասխանատուներ: Եթե միապետն ունի արդյունավետ առաջնորդի ակնհայտ հատկանիշներ, և ավագանին ու եկեղեցին գործում են թագավորի հետ փոխհամաձայնեցված, ապա երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը կարող է արձանագրել նվաճումներ, ու այն կունենա վերընթաց զարգացում և հզորացում: Տիգրան Բ-ի ժամանակաշրջանն այդպիսին էր, թագավորը խոհեմ էր ու

---

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 47:

քաջ, արդարադատ, օժտված մարդկային վեհ հատկանիշներով, ուներ նորի, առաջադիմականի զգացում, ինչի արդյունքում երկիրը դարձավ լիարժեք անկախ, «հարկ վճարողից հարկ պահանջող», վերազինեց բանակը, «խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուղով և մեղրով»<sup>18</sup>։ Նման պայմաններում հասարակությունում իշխում են համերաշխությունը, միասնությունը, առողջ սոցիալ-հոգեբանական, հայրենասիրության միջավայրը։ Եթե երկրում խախտվում է վերը նշված եռամիասնությունը, այսինքն՝ միապետի, նախարարների և հոգևոր կենտրոնի միջև առաջանում են խընդիրներ, խախտվում է նրանց փոխհամագործակցությունը, ընդունվում են անարդարացի, չհիմնավորված կառավարչական որոշումներ, ապա խաթարվում է հանրային միջավայրը, դառնում վտանգավոր, անկայուն, ներքին անկայունությանը գումարվում է արտաքին սպառնալիքը, և պետականությունը, երկրի անկախությունը հայտնվում են կասկածելի անվտանգության վիճակում։ Հենց այս իրավիճակն է արտացոլված Մ. Խորենացու նշանավոր երկում՝ Արտաշիրի նկատմամբ նախարարների և Սահակ կաթողիկոսի տարաձայնություններում. «Հայոց Արտաշիր թագավորը սկսեց թաղվել անչափ անառակ ցանկությունների մեջ, այն աստիճան, որ բոլոր նախարարները նրանից զգվեցին։ Նրանք եկան մեծն Սահակի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի (Արտաշիրի) վրա չարախոսեն Պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին դեն գցեն և

---

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 46:

պարսիկ բերեն աշխարհին կառավարող», - նկարագրում է վիճակը Խորենացին<sup>19</sup>:

«Իսկ (մեծն Սահակը) ասաց. «Ձեզ սուտ չեմ հանում, ինքս էլ լսել եմ նրա ցավալի ամոթալի արարմունքները, շատ անգամ հանդիմանել եմ, բայց նա ուրացել է»<sup>20</sup>: Երբ կաթողիկոսը նախարարներին այլ տարբերակ է առաջարկում, նրանք ասում են. «Որովհետև դու չկամեցար մեզ հետ համակերպվել, որ նա չթագավորե, ահա մենք էլ չենք կամենում, որ դու մեզ քահանա լինես»<sup>21</sup>:

Այդ իրադարձություններն առավել մանրամասն նկարագրել է Ղազար Փարպեցին<sup>22</sup>: Պարսից Վռամ թագավորը շատ էր ցանկանում «վերացնել Արշակունյաց տոհմի թագավորությունը» և շատ ուրախացավ, երբ լսեց Հայոց արքա Արտաշեսին մեղադրողներից մեկից. «Բնավ ինչի՞նչ է պետք թագավորը, թող մի պարսիկ իշխան գա ժամանակով և մեզ վրա լինի վերակացու, որպեսզի մեզանից յուրաքանչյուրի հպատակությանն ու անհպատակությանը տեղյակ դառնալով հայտնի ձեզ»<sup>23</sup>:

Արդյունքում վերացավ թագավորությունը, պարսից արքան նշանակեց մարզպետ, փոխվեց քահանայապետը. կաթողիկոս Սահակին փոխարինեց Սուրմակ երեցը, կարճ ժամա-

---

<sup>19</sup> *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 235:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 228:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 229:

<sup>22</sup> Տե՛ս *Ղազար Փարպեցի*, Հայոց պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1982, էջ 45-85:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 57:



նակ անց՝ ասորի Բրքիշոն, այնուհետև՝ նույնպես ասորի Շամուելը<sup>24</sup>:

Տեղի ունեցածի տխուր տրամաբանությունն այն է, որ առաջանում է աղետաբեր բախում թագավորի, նախարարների և եկեղեցու միջև: Սրան գումարվում է ստեղծված շատ աննպաստ հանրային միջավայրը. «...իշխանները ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, ...աշխարհ ավերող», «դատավորները տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը չպահպանող», «կրոնավորները կեղծավոր, ցուցամուլ, սնափառ», «ուսուցիչները տխմար, փողով ընտրված», «գինվորականները անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ», «կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները գորացած», «թագավորները անտանելի հրամաններ են տալիս», «սերն ու ամոթը ամենքից վերացած»<sup>25</sup>:

Առաջացած կոնֆլիկտը, անարդյունավետ կառավարման հետևանքով ստեղծված խիստ անառողջ և վտանգավոր, անմիաբան միջավայրը, արտաքին թշնամիների նվաճողական նկրտումները դարձան այն վճռական գործոնները, որոնք հանգեցրին 700-ամյա թագավորության և երկրի անկախության կորստին:

Երկարատև և համառ պայքարի արդյունքում 885 թ. ստեղծվեց Բագրատունիների հայոց թագավորությունը, որը գոյատևեց 160 տարի՝ մինչև 1045 թ.: Պետության գլխավորը թագավորն էր, որի իշխանությունը, ինչպես Մեծ Հայքում, ժառանգական բնույթ ուներ: Պետական կառավարումը թեև

---

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 59-61:

<sup>25</sup> *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 238, 239:

հիմնականում կրում էր հայոց պետականության նախընթաց շրջանի ավանդույթները, սակայն բնութագրվում էր որոշ առանձնահատկություններով: Նախ՝ պետական կառավարման համակարգը գուտ ունիտար չէր, այն ուներ կիսաֆեդերատիվ բնույթ: Պատմական աղբյուրների տեղեկատվությամբ վարչական համակարգը բաղկացած էր երկու մասից. առաջինը՝ համապետական էր, երկրորդը՝ միայն տվյալ ֆեոդալական տան (վարչական միավորի) սահմաններում գործող վարչական մարմիններ (կենտրոնական գահերեց իշխան, արքունիքին կից և տեղերում նշանակված պաշտոնյաներ)<sup>26</sup>: X դարի կեսերին - XI դ. հայոց թագավորությունն իրենից ներկայացնում էր Բագրատունյաց (կենտրոնական) թագավորությունը + Վասպուրականի + Սյունյաց + Կարսի + Տաշիր-Ձորագետի թագավորությունները + Անձևացյաց + Սասունի իշխանությունները և այլն<sup>27</sup>: Իսկ արքունիքը կազմվում էր դիվանից կամ պետական խորհրդից և արքունի գործակալություններից: Արքունիքներ ունեին Բագրատունի հայոց թագավորները, Վասպուրականի և Սյունիքի թագավորները, ինչպես նաև գահակալ և գահերեց իշխաններ<sup>28</sup>:

Երկրորդ, Բագրատունիները պետական կառավարման համակարգում պահպանեցին ոչ հեռու անցյալի մի շարք պաշտոնների անունները՝ մարզպան, իշխանաց իշխան, նրանց բավական հարազատ էին իրանա-արաբական միջա-

---

<sup>26</sup> Տե՛ս *Մաթևոսյան Ռ. Բ.*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 99, 100:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 199:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 101:

վայրից փոխանցված «շահնշահ» և «ոստիկան» տիտղոսները<sup>29</sup>:

Պատմագիտության մեջ Բագրատունյաց պետության անկման հիմնական պատճառներ են համարվում Բյուզանդիայի ագրեսիան և Անի մայրաքաղաքի կորուստը<sup>30</sup>: Գոյություն ունի նաև մեկ այլ՝ Մ. Ուռհայեցու տեսակետը, ըստ որի՝ պետականության կորուստը որոշակի քաղաքական համակարգի կազմալուծման գործընթացի արդյունք էր<sup>31</sup>: Ենթադրաբար Մ. Ուռհայեցին իրավացի է այն պատճառով, որ կիսաֆեդերատիվ պետությունում, որը չունեի իրավական և գաղափարական ամուր հիմք, այլ, պատմիչների վկայությամբ, կառուցված էր գերազանցապես երկկողմանի անձնական կապերի վրա, այս պարագայում միասնականության և համախմբվածության ապահովումը բաղադրիչ թագավորությունների և իշխանապետությունների միջև դժվարագույն խնդիր է, իսկ քաղաքական համակարգի կազմալուծումը կարելի է դիտել որպես պետականության կորստի նախապես նշված երկու պատճառների հիմք:

Կիլիկյան Հայաստանում (մեծ իշխանապետության՝ 1080-1198 թթ. և թագավորության՝ 1198-1375 թթ.) պետական կառավարման համակարգը ձևավորվել է հայկական պետականությանը բնորոշ սկզբունքներով՝ ներառելով եվրոպական պետությունների փորձը:

Կիլիկյան Հայաստանի պետական կառավարումն իրագործվել է Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքով»

---

<sup>29</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Ե., հ. 3, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 266:

<sup>30</sup> Տե՛ս *Մաթևոսյան Ռ. Բ.*, նշվ., էջ 248-261:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 250:

(1265 թ.), որը հանդիսացել է յուրօրինակ օրենսդրանորմատիվային կարևորագույն փաստաթուղթ:

Առավել մանրամասն Կիլիկիայի հայկական պետության թագավորական իշխանության կառավարման մարմինների լիազորությունները և գործառույթները լուսաբանված են Ա. Գ. Սուքիասյանի ծավալուն և տողերիս հեղինակի աշխատություններում<sup>32</sup>:

Գիտական գրականության մեջ Կիլիկիայի հայկական պետության կործանման երկու պատճառ է կարևորվում<sup>33</sup>.

- արտաքին՝ արևմտեվրոպական պետությունների նենգ քաղաքականությունը, ինչպես նաև կաթոլիկական եկեղեցու թշնամական վերաբերմունքը նրան կատմամբ, որովհետև բնակչությունը դեմ էր հայ եկեղեցու միավորմանը կաթոլիկականին,
- ներքին՝ մշտական պայքարը թագավորական իշխանության և առանձին անհնազանդ իշխանական տոհմերի միջև, ինչպես նաև ֆեոդալների միջև մղվող երկպառակտչական սուր պայքարը, ինչի պատճառով հայ թագավորներին չհաջողվեց վերջնականապես վերացնել կենտրոնախույս ուժերը և ստեղծել կենտրոնացված ուժեղ միապետություն:

Ցավոք, վերջին պատճառը միշտ բնորոշ է հայկական պետականությունների կործանման գործընթացին: Օրինաչափության բնույթ ստացող այդ երևույթն ահագանգ պետք է

---

<sup>32</sup> Տե՛ս *Սուքիասյան Ա. Գ.*, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1978, 392 էջ, *Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ. Ա.*, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Ե., «Գիտություն», 2013, էջ 127-130:

<sup>33</sup> Տե՛ս *Սուքիասյան Ա. Գ.*, նշվ. աշխ., էջ 99:

հանդիսանա հայ քաղաքակրթական, հատկապես քաղաքագիտական մտքի, պետականաշինության գործնական խնդիրներով զբաղվող քաղաքական ուժերի և լայն հանրության համար:

**Հանրային կառավարման սահմանադրականությունը  
և մեթոդաբանական հիմունքները  
ըստ հայ մտածողների**

Պետական և տարածքային կառավարման կայացման ու զարգացման գործընթացը Հայաստանում ուղեկցվել է օրենսդրանորմատիվային հիմունքների ստեղծմամբ: Թե՛ թագավորը՝ իբրև պետության գլուխ, թե՛ եկեղեցին՝ որպես մեծն դատավարության լիազորության կրող և հանրության մտավոր ու քաղաքացիական կյանքի պատասխանատու, ձգտել են իրենց որոշումների և գործողությունների համար ստեղծել իրավական հիմք: Բացի այդ, ապագա պետականության ակնկալիքով նաև ստեղծվել են իրավանորմատիվային կամ սահմանադրական բնույթի աշխատություններ: Այս առումով արժեքավոր են մասնավորապես «Կանոնագիրք Հայոցը», Արցախի և Ուտիքի արքա Վաչագանի «Կանոնական սահմանադրությունը», Դավիթ Ալավկա Որդու «Կանոնական օրինադրությունը», Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքերը», ավելի ուշ ստեղծված Հ. ու Շ. Շահամիրյանների «Որոգայթ փառաց» աշխատությունը և այլն:

Քանի որ նշված աշխատությունների բովանդակության քննական վերլուծությունը տեղ է գտել գիտական գրականության մեջ, ուստի ստորև կկարևորվեն այն առանցքային

դրույթները, որոնք հանրային կառավարման համակարգի համար ունեն էական մեթոդաբանական նշանակություն:

Հայ մտածողներին առաջին հերթին մտահոգել է ***պետության կառավարման բնույթի, պետական համակարգի կառուցվածքի խնդիրը***: Այն Մեծ Հայքի և միջնադարյան հայկական պետությունների համար լուսաբանվել է հայ պատմիչների աշխատություններում, ինչի մասին վերևում նշվեց ու տեսականորեն խորությամբ դիտարկվել է Մ. Գոշի, Ս. Սպարապետի դատաստանագրքերում, Հ. և Շ. Շահամիրյանների «Որոգայթ փառացում»:

Մ. Գոշը և Ս. Սպարապետը պետության աստվածաբանական մեկնաբանության կողմնակից էին, նրանց կարծիքով թագավորները կարգվում են աստծո կողմից, նրա տեղապահներն են երկրում<sup>34</sup>: Ըստ նրանց՝ թագավորության նպատակահարմար կառուցվածքը կենտրոնացված իշխանությունն է միապետի գլխավորությամբ: Ընդ որում Ս. Սպարապետը կենտրոնացված ուժեղ իշխանությունը համարել է անհրաժեշտություն, ինչը բացատրվում է երկրի անվտանգությունն ապահովելու հրամայականով:

Մ. Գոշի տեսության առանձնահատկություններից է այն, որ պետությունն ու եկեղեցին դիտվում են որպես երկու հիմնասյուներ, որոնք պահում են հասարակության ամբողջ շենքը՝ որպես քաղաքական իրողություն<sup>35</sup>: Այս դրույթը որոշակի քայլ էր դեպի հանրային կառավարման գաղափարը, երբ բացի պետական մարմնից, հասարակության կառավարման համակարգում կարևորվում էր մեկ այլ կառույցի՝ եկե-

---

<sup>34</sup> Տե՛ս ***Մխիթար Գոշ***, նշվ. աշխ., էջ 301-305, 404, 405, Спарамет С.

Судебник, Е., Айпетрат, 1958, с. 5, 81.

<sup>35</sup> Տե՛ս ***Մխիթար Գոշ***, նշվ. աշխ., էջ ԺԵ:

դեցու էական դերը: Հին Հայաստանում տարածքային կառավարման կառույցները՝ նախարարները, քաղաքապետները, գյուղական համայնքների ղեկավարները, կենտրոնական իշխանության հետ մեկտեղ պետական մարմիններ էին:


Հ. և Շ. Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ում հիմնավորվում է խորհրդարանական հանրապետության գաղափարը՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության թնեքով,<sup>36</sup> և թեև լիազորությունների պատվիրակումը դրանց միջև հստակ չէր, սակայն ժողովրդավարական հիմունքներով՝ ուղղակի ընտրությամբ իշխանության մարմինների ձևավորման կարգը և պետական կառավարման բնույթն էական առաջընթաց էին ժամանակի պետական կառավարման պարադիգմայի համեմատ (գծանկար 2)<sup>37</sup>:

---

<sup>36</sup> Տե՛ս «Որոգայթ փառաց», Ե., «Հայաստան», 2002, 298 էջ:

<sup>37</sup> Տե՛ս *Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ. Ա.*, նշվ. աշխ., էջ 165:

## Հանրային կառավարումը ըստ «Որոգայթ փառացի»



Հաջորդ առանցքային խնդիրը, որ դիտարկվել է հայ մտավոր մշակույթում, վերաբերում է **օրենքի գերակայությանը, մարդու իրավունքների հարգմանը և օրենքների ու կառավարչական որոշումների արդարությանը**, որոնք սահմանադրականության կարևորագույն բաղադրիչներից են:

Իրավակարգավորման բնույթ ունեցող համապարփակ փաստաթուղթը հայ իրականության մեջ «Կանոնագիրք Հայոցն» է, որը բովանդակում է եկեղեցական հայտնի ժողովների (Աշտիշատի (IV դար), Շահապիվանի (V դար), Դվինի (VI և VIII դարեր և այլն) որոշումները և կրոնական խոշոր գոր-



ծիչների գրությունները, որոնք վերաբերում են կրոնական ծիսակատարությունների սկզբունքներին, եկեղեցու սպասավորների վարքագծին, ամուսնության, ընտանիքի, մարդկանց բարոյական կերպարի ընդունելի նորմերին, համակեցության կանոններին, իսկ դրանք խախտելու համար սահմանվում են զանազան պատիժներ: Ուշագրավ է, որ կանոնագրքում հոդվածներ կան կաշառակերության, տուրքեր ու հարկեր սահմանելու և դրանց բաշխման մասին: Կանոնագրքի գլխավոր փիլիսոփայությունն այն է, որ գոյություն ունեն կամ սահմանված են համակեցության որոշակի կանոններ, որոնք պարտադիր են հանրության բոլոր անդամների համար: Այդ կանոնների համախումբը Վաչագան արքայի պարագայում անվանվել է «Կանոնական սահմանադրություն»՝ բաղկացած 21 հոդվածից, Դավիթ Ալավկա Որդին այն կոչել է «Կանոնական օրինադրություն» (97 հոդված):

Օրենքի գերակայության, արդարության, ղեկավար կադրերի ճիշտ ընտրության դրույթներով հատկապես առանձնանում է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական» (1166 թ.)<sup>38</sup>: Օրենքի գերակայության առումով խիստ ուշագրավ է նրա հետևյալ դրույթը. «Իսկ մեծատունը, որ իշխանաբար կարող էր իր ուզածը անել, ավելի հանցավոր է լինում, երբ արհամարհում է իրավունքը»<sup>39</sup>:

Դիտարկվող աշխատություններում առանձնահատուկ կարևորվում է տուրքերի և հարկերի սահմանման, դրանց բաշխման արդարության սկզբունքը: Այդ իմաստով բնութագրական է Ն. Շնորհալու հարցադրումը. «Անիրավությամբ մի՛

---

<sup>38</sup> Տե՛ս *Ներսես Շնորհալի*, Թուղթ ընդհանրական, Ե., «Իրավունք», 2009:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 85:

վարվեք հպատակների հետ՝ ծանր ու դժվարին հարկեր դնելով, որոնք չեն կարող կրել, այլ յուրաքանչյուրին օրենքով և ըստ իր կարողության չափի դատեք»<sup>40</sup>։ Նման բնույթի դրույթներ կան Ադվանքի «Կանոնական սահմանադրությունում» (գլուխ «Դ»), «Կանոնագիրք Հայոց»-ում, Ս. Սպարապետի «Դատաստանագրքում» և այլն։

Պատմական Հայաստանում հանրային կյանքի իրավակարգավորման կանոններում կարևորվել է նաև *կրթության, գիտության և մշակույթի զարգացման* անհրաժեշտությունը։ Մասնավորապես «Կանոնագիրք Հայոց»-ում տեղ գտած Սահակ Պարթևի մշակած կանոններում անհրաժեշտ է համարվում դպրոցների կազմակերպումը<sup>41</sup>։ Աշտիշատի ժողովի որոշման «Զ» գլխում պահանջվում է «երկրում լուսավորություն տարածելու նպատակով ողջ Հայաստանում բաց անել հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ»<sup>42</sup>։

«Որոգայթ փառաց»-ում առանձնահատուկ նշանակություն է տրվել գիտության և մշակույթի զարգացման անհրաժեշտությանը. «Հայոց տնից օժանդակություն պետք է լինի մասնագետների, հատկապես փիլիսոփայության, աստղագիտության, բժշկության, երաժշտության, ճարտասանության և այլ բնագավառների ներկայացուցիչների նկատմամբ»<sup>43</sup>։

Գիտությանն ու մշակույթին աջակցելուն զուգընթաց «Որոգայթ փառաց»-ում առանձին տեղ է հատկացվել նաև նորամուծությունների խթանմանը (գլուխ 502), ըստ որի՝ ապ-

---

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 80, 81։

<sup>41</sup> Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», գիրք Ա, էջ 372, 373։

<sup>42</sup> Տե՛ս *Ավագյան Ռ.*, Հայ իրավական մտքի գանձարան, (մ.թ.ա. IX-մ.թ. XIX դդ), Ե., 2001, էջ 109, 110։

<sup>43</sup> Տե՛ս «Որոգայթ փառաց», էջ 134։

բանքների նոր տեսակների ստեղծման կամ բարձր որակի («Եվրոպական կերպի») արտադրանքի թողարկման համար Հայոց տունը պետք է հեղինակներին նյութապես խթանի: Մա մի խնդիր է, որ տեխնոլոգիական զարգացման առումով ներկայումս գերադասելի է:

Ընդհանրացնելով հարկ է նկատել, որ հին և միջնադարյան Հայաստանում պետական ու տարածքային կառավարումն իրագործվել է ժամանակին համահունչ օրենսդրանորմատիվային հիմքով, բավարար մակարդակի սահմանադրականությամբ, հայ մտավոր մշակույթում կարևորվել և մշակվել են հանրային կառավարման մեթոդաբանական որոշակի հիմքեր, իսկ անցյալի փորձը և մշակութային ժառանգությունը, մանավանդ պատմության դասերը, մշտապես արժանի են ուշադրության՝ քաղաքացիական հասարակության ճիշտ կողմնորոշման, քաղաքագիտական մտքի զարգացման և հանրային կառավարման արդյունավետության բարձրացման համար:

### 3.2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԸ Ն. ՇՆՈՐՀԱԼՈՒ «ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆՈՒՄ»\*

#### 1. ԻԲՐԵՎ ՄԿԻԶԲ

Հայ մեծ մտածող, բանաստեղծ, երաժիշտ-երգահան, մատենագիր, քաղաքական ու եկեղեցական գործիչ Ներսես Շնորհալու (1100-1173 թթ.) աստվածաբանական, գրական, եկեղեցական-երաժշտական հարուստ ժառանգությունը բարձր է գնահատվել գրականագետների, երաժշտագետների և մտավոր մշակույթի այլ բնագավառների երևելի ներկայացուցիչների կողմից<sup>44</sup>: Ի դեպ, ավելի հաճախ հետազոտվել և արժևորվել են նրա չափածո գործերը, շարականները, հանելուկները, համեմատաբար պակաս՝ արձակ աշխատությունները, այդ թվում՝ «Թուղթ ընդհանրականը»<sup>45</sup>: Մինչդեռ այն Ն. Շնորհալու բացառիկ արժեքավոր արձակ ստեղծագործու-

---

\* Առաջին անգամ հրապարակվել է «Պատմաբանասիրական հանդեսի» 2016 թ. 1 համարում:

<sup>44</sup> Մասնավորապես տե՛ս *Աբեղյան Մ.*, Հայոց հին գրականության պատմություն, հ. 4, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 96-170, *Հակոբյան Գ.*, Ներսես Շնորհալի, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964, էջ 300, *Ներսես Շնորհալի* (հոդվածների ժողովածու), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 236 էջ, *Է. Մ. Բաղդասարյան*, Ներածություն. – *Ն. Շնորհալի*, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Մ. Բաղդասարյանի, Ե., «Գիտություն», 1995, էջ 8-50:

<sup>45</sup> *Ս. Ներսես Շնորհալի*, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991, 124 էջ:

յուններից է, որն ունի աստվածաբանական, պատմական, հրապարակախոսական, հասարակական-քաղաքական ուղղվածություն: Մ. Աբեղյանի գնահատմամբ. «Ներսես կաթողիկոսի այս մեծ գրությունը որքան իր բովանդակությամբ շատ կարևոր պատմական փաստաթուղթ է, նույնքան և արժեքավոր մի գրական երկ է»<sup>46</sup>: Անդրադառնալով աշխատության նպատակին՝ Մ. Աբեղյանը նկատում է. «...ինքը գրում է ոչ միայն խրատելու, այլև ուսուցանելու համար»<sup>47</sup>: Մ. Աբեղյանի այս դիտարկումը շատ էական է՝ «Թուղթ ընդհանրականի» բովանդակությունը և ուղղվածությունը ճշգրիտ մեկնաբանելու համար: 1995 թ. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը հրատարակել է «Թուղթ ընդհանրականի» բնագիրը Է. Մ. Բաղդասարյանի ընդարձակ ներածականով, որում նա հասարակական, կրոնական ու քաղաքական զարգացումների համատեքստում վերլուծում և արժևորում է Ն. Շնորհալու հորդոր-խրատները՝ իբրև աստվածային պատվիրաններ՝ ուղղված հոգևոր և աշխարհիկ գործիչներին, հասարակության բոլոր մյուս դասերին, ընդգծում դրանց կարևոր նշանակությունն իր ժամանակին և հետագայում: Է. Մ. Բաղդասարյանի կարծիքով «Թուղթ ընդհանրականը» բարոյակրթիչ նշանակություն է ունեցել բազմաթիվ սերունդների համար, միաժամանակ այն «ժամանակի բազմաթիվ կնճռոտ հարցերի լուսաբանման համար խիստ կարևոր պատմական սկզբնաղբյուր է, հայագիտության մեջ բարձր գնահատված լեզվական հուշարձան»<sup>48</sup>:

---

<sup>46</sup> Տե՛ս **Աբեղյան Մ.**, նույն տեղում, էջ 153:

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 154:

<sup>48</sup> Տե՛ս **Բաղդասարյան Է.** Մ., նշվ. աշխ., էջ 3-50:

Հարկ է նկատել, որ որոշ դեպքերում դիտարկվող աշխատությունը գերազանցապես արժևորվել է որպես XII դարի պատմական վիճակը և հասարակական-կրոնական իրողություններն արտացոլող աշխատություն, որում հասարակական տարբեր խավերի (հոգևոր գործիչներ, իշխաններ, առևտրականներ, արհեստավորներ, շինականներ) «կյանքին, վիճակին ու զբաղմունքին վերաբերող արատներն ու թերությունները «Թղթում» խիստ քննադատության են ենթարկվել, որով մերկացվել են փաստորեն ֆեոդալական հասարակարգի արատավոր կողմերը»<sup>49</sup>: Մինչդեռ այդ արժեքավոր աշխատությունում առավելապես առանձնանում են հավիտենական արժեք բովանդակող օրենքի գերակայության, արդարության, դեկավար կադրերի ճիշտ ընտրության՝ հանրային կառավարման ժամանակակից տեսությունը բնորոշ դրույթները<sup>50</sup>: Այն շարադրվել է 1166 թվականին, երբ դեռևս չէր ստեղծվել Կիլիկյան հայկական թագավորությունը (1198-1375 թթ.), ըստ այդմ, դրանում նաև կարևորվում է եկեղեցու դերը հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի կանոնակարգման ասպարեզում հայկական կենտրոնացված իշխանության (թագավորության) բացակայության պայմաններում: Միաժամանակ, մեր համոզմամբ, «Թուղթ ընդհանրականում» քրիստոնեական հավատքի ճշմարտությունների լույսի ներքո արտահայտվում են մարդու և առաջնորդի վարքագծին ներկայացվող, իրենց բնույթով համամարդկային չափանիշները:

<sup>49</sup> Տե՛ս, օրինակ, *Հակոբյան Գ.*, նշվ. աշխ., էջ 74:

<sup>50</sup> Մանրամասն տե՛ս *Սուվարյան Յու. Մ.*, Հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր, Ե., ԱՌՏ, 2004, էջ 24, 25:

Այս առումով ուշագրավ է, որ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, ԵՊՀ հայտնի գիտաշխատողների հեղինակությամբ 1977 թ. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության հրատարակած հոդվածների ժողովածուում, որը նվիրված է Ն. Շնորհալու մահվան 800-ամյակին, ակադեմիկոս Վ. Համբարձումյանն ընդգծել է. «...կյանքի կոնկրետ իրադարձությունների գեղարվեստական վերարտադրության ուժով Ներսես Շնորհալին հասնում էր համամարդկային այնպիսի մեծ ընդհանրացումների, ինչպիսիք էին մարդ հասկացության նոր ըմբռնումը և բնության նկատմամբ նոր վերաբերմունքի մշակումը...»<sup>50</sup>: Նույն ժողովածուում մեծավաստակ գրականագետ Վ. Ս. Նալբանդյանի կարծիքով. «Ազգի քաղաքական ճակատագրով խորապես ապրող գործչին և բանաստեղծին զբաղեցրել են նաև հասարակության և մարդու մտավոր ու բարոյական դաստիարակության հարցերը»<sup>51</sup>:

Իհարկե, դիտարկվող աշխատանքում մատնանշվում են նաև հոգևոր և աշխարհիկ գործունեության մեջ հնարավոր բացասական երևույթները, որոնք մշտապես ուղեկցում են մարդկանց գրեթե բոլոր պատմական ժամանակներում՝ ունենալով տարբեր դրսևորումներ, ինչի նպատակը դրանցից զերծ մնալու Ն. Շնորհալու հորդորն է: Ուշադրություն դարձնենք նրա հորդորներից մեկին՝ «Ուստի աղաչում եմ, որ զգուշանաք և մաքուր պահեք ձեր ձեռքերը անձին վտանգավոր և անիծաբեր այս ախտերից»<sup>52</sup>: Այդպիսով, նա ներկայացրել է մարդու և առաջնորդի, առանց վերը նշված բացերի,

---

<sup>50</sup> *Ներսես Շնորհալի* (հոդվածների ժողովածու), էջ 7:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>52</sup> *Ն. Շնորհալի*, Թուրթ ընդհանրական, էջ 54:

իր տեսլականը՝ ըստ հասարակական տարբեր դասերի և կրոնական ու աշխարհիկ իշխանավորների, որը գլխավորն է «Թուղթ ընդհանրականի» բովանդակության մեջ: Թերևս պատմաաստվածաբանական արժեքից բացի, նաև դա է պատճառը, որ այն իր ստեղծման պահից ունեցել է բազում հրատարակություններ՝ 1788 թվականին՝ Սանկտ Պետերբուրգում, 1825-ին՝ Կ. Պոլսում, 1830-ին և 1873-ին՝ Վենետիկում, 1865-ին՝ Էջմիածնում, 1871-ին՝ Երուսաղեմում, 1977-ին՝ Անթիլիասում, 1991-ին («Գանձասար» հանդես) և 1995-ին՝ Երևանում<sup>53</sup>:

Սույն հոդվածում փորձ է արվում դիտարկելու «Թուղթ ընդհանրականում» ստեղծված մարդու և առաջնորդի կերպարի առանձնահատկությունները, մանավանդ որ վիթխարի է մարդու՝ իբրև ստեղծագործ, արարող էակի և առաջնորդի (ղեկավարի) դերակատարությունը յուրաքանչյուր երկրի հասարակական-տնտեսական, հոգևոր, գիտատեխնիկական և քաղաքական զարգացման գործում:

Կերպարը գեղարվեստական գրականության մեջ սովորաբար ստեղծվում է հոգեբանական վերլուծության, երկխոսությունների, գրական հերոսի գործողությունների, նրա վարքի և արտաքինի նկարագրության և այլ մեթոդների ու միջոցների գործադրմամբ: Հաճախ հերոսը դիտարկվում է իբրև հավաքական կերպար, ինչ-որ չափով արստրակտ և գեղարվեստական երկի հեղինակի մտապատկերում իդեալականացված անհատականություն: Ն. Շնորհալու՝ հայ ժողովրդին ուղղված անդրանիկ կոնդակում յուրովի է գծված նախ մարդու՝ որպես հասարակական էակի, ինչպես նաև հավա-

---

<sup>53</sup> Տե՛ս **Ն. Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Բաղդասարյանի, Ե., «Գիտություն», 1995, էջ 6, 7:



տացյալի, աշխատողի, ենթակայի, ապա՝ իբրև առաջնորդի՝ թե՛ կրոնական, թե՛ աշխարհիկ կերպարը: Ի տարբերություն կերպարաստեղծման ավանդական մեթոդաբանության և գործիքակազմի՝ Ն. Շնորհալու երկում մարդու և առաջնորդի կերպարը ձևավորվում է երկու հիմնարար առանձնահատկություններով:

Նախ, այն իրական է, որոշակի սկզբունքների և պահանջների համապատասխան, զերծ հասարակական ու հոգևոր կյանքին անհարիր արատներից, որպես այդպիսին կերպարը ոչ այնքան փաստի արձանագրում է, որքան ցանկալի, ուստի և ներուժային անհատականության դրսևորում,

Երկրորդ, կերպարի կառուցման եղանակը կրոնափիլիսոփայական հիմնարար դրույթներով քարոզչությունն է, ինչն ավելի առարկայական ու ազդեցիկ է, քան գրական կերպարի զգայական նկարագրությունը:

Ի դեպ, մինչ անցնելը Ն. Շնորհալու՝ մարդու և առաջնորդի կերտած կերպարի քննական վերլուծությանը, հարկ է ընդգծել նրա հավերժական կարևորությունը ոչ միայն քրիստոնեական հավատքին նվիրվածության, մարդկային հարաբերությունների ճիշտ կառուցման, այլև հոգևոր և աշխարհիկ կյանքի արդյունավետ կառավարման, ազգային պետականության կայացման ու ամրապնդման ասպարեզներում: Այդ առումով այսօր էլ, ապագայում էլ Ն. Շնորհալու ստեղծած և իրականում ակնկալած մարդու և առաջնորդի կերպարն արդիական է ու պահանջված: Իբրև մարդ նա դիտարկում է բոլորին՝ վանքերի ճգնավորներին, վանական սուրբ ուխտերի առաջնորդներին, եպիսկոպոսներին, քահանաներին, աշխարհիկ իշխաններին, զինվորականներին, քաղաքացիներին, երկրագործներին, կանանց: Այդ բոլորի մեջ նա առանձ-

նացնում է առաջնորդներին, քանի որ մարդը և՛ ենթակա է, և՛ հաճախ դեկավար, Ն. Շնորհալու արտահայտությամբ՝ «առաջնորդող և առաջնորդվող»<sup>54</sup>:

## 2. ՄԱՐԴԸ Ն. ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄՏԱՀԱՅԵՑՄԱՍԲ

Ընդհանուր առմամբ Ն. Շնորհալու կրոնափիլիսոփայական մեկնությամբ մարդուն իբրև աստվածային պատվիրաններ բնորոշ պետք է լինեն.

- անսահման հավատարմությունը քրիստոնեական հավատքին, հետևաբար նաև՝ ի վերուստ դավանած ճշմարիտ գաղափարին,
- արդարությունը, արդարացի վերաբերմունքը ամենատարբեր և բարդ իրավիճակներում իր ողջ գործունեության ընթացքում,
- պարկեշտությունը և ազնվությունը մարդկային ու աշխատանքային հարաբերություններում,
- բարոյականությունը կենցաղավարության և աշխատանքային գործունեության մեջ,
- բարությունը շրջապատող աշխարհի և մարդկանց հանդեպ,
- հայրենասիրությունը և նվիրվածությունը վստահված աշխատանքին,
- բարձր պատասխանատվությունն իր պարտականությունների կատարման համար:

Ավելացնենք նաև, որ ինչպես վկայում են նրա չափածո երկերի հետազոտողները. «Շնորհալին մարդկային մեծա-

---

<sup>54</sup> Տե՛ս **Ս. Ն. Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, էջ 64:

գույն առաքինությունների շարքն է դասում ուժը, քաջությունն ու արիությունը՝ ներբողելով դրանք ամենատարբեր ժանրերով ու բովանդակությամբ գրված երկերում»<sup>55</sup>:

Ստանձնած պարտականությունների նկատմամբ բարձր պատասխանատվությունը և քրիստոնեական հավատքին նվիրվածությունը Ն. Շնորհալին հավաստում է իր անձնական օրինակով: Ձեռնադրվելով կաթողիկոս մի ժամանակաշրջանում, երբ մեր ազգը, իր իսկ խոսքերով, չունի «թագավորանիստ քաղաք և հանրաժողով», «աստվածային օրենքների դատաստանին չի ենթարկվում և չի հնազանդվում, այլ անհրաժեղ դատավոր է դառնում եկեղեցու դատավորների վրա և սեփական աչքում գերան ունենալով հանդերձ չարաչար բամբասանքներով ու անդուռ բերանով անդադար դատում է նրանց վարքի հանցանքների շերտերը», «մեր ժամանակների չարության ու բազմիշխանության պատճառով անկարելի է շրջել ամենուրեք՝ աշխարհի բոլոր կողմերը և սուրբ առաքյալների նման Աստծո խոսքը քարոզել», նա առարկայորեն զգում էր այն խոչընդոտները, որոնք կարող էին խանգարել իր առաքելության իրագործմանը: Սակայն ստեղծված դժվարին իրականության պատճառով նորից, իր իսկ խոսքով, «թողնել-լքելը Հովվապետի հոտը հովվության խնամքից և գառնուկների՝ գայլերի կողմից հափշտակելը տեսնելը և անտեսելը անհավատության նշան է»: Եվ ահա նրա որոշումը. «...սակայն որպեսզի բոլորովին անպտուղ չլինենք ձեր առջև, Սուրբ Հոգուց մեզ վստահված հավատացյալ ժողովուրդ, մենք և մեզ հետ եղած եպիսկոպոսներն ու վարդապետերը արդար դատեցինք՝ գրով հիշեցնելու ձեզ Հին և Նոր Կտակարանների

---

<sup>55</sup> Տե՛ս, օրինակ, *Ներսես Շնորհալի* (հոգվածների ժողովածու), էջ 17:

աստվածային պատվիրանները՝ այս բանում նմանվելով մեծ առաքյալ Պողոսին»<sup>56</sup>:

Ուշագրավ է, որ Ն. Շնորհալու հորդորները մարդկանց վարքագծի վերաբերյալ զանազանվում են ըստ հասարակական դասերի՝ այդպիսով նրանց համար տարբերակելով և որոշակիացնելով խրատների բովանդակությունը: Քաղաքացիների, առևտրականների ու արհեստավորների համար կարևորվում են «ուղիղ և անարատ կենցաղավարությունը», առևտրում «նենգության և խաբեության» բացառումը և «արդարության ու շիտակության» անհրաժեշտությունը: Այդ դասին կոչ է անում՝ «մի արհամարհեք շինականներին իբրև սոգետ իրենց պարզամտության համար»: Երկրագործներին և համայն ժողովրդին հորդորում է. «պոռնկությամբ և շնությանմբ մի ապականեք Աստծո տաճարը՝ ձեր հոգիները», «մի արբեք գինով, որ մայր է ամեն տեսակ պղծությունների, անիրավության, վեճի, անարգալից աղտոտ խոսքերի, որից լինում են նաև սպանություններ»<sup>57</sup>: Կրոնական գործիչների՝ վանքերի կրոնավորների, վանական սուրբ ուխտերի առաջնորդների, եպիսկոպոսների և քահանաների համար առանձնակի մատնանշվում է, որ նրանք պետք է «պարկեշտ և աստվածավայել լինեն», տարբերվեն աշխարհականներից իրենց վարքով և խոսքով, ավելին՝ նրանց համար լինեն ուսանելի օրինակ, հավատարիմ լինեն քրիստոնեական հավատքին («մի աղոտացրեք ձեր հավատքի լապտերների լույսը»), չգերադասեն նյութականը հոգևորի նկատմամբ («նյութական սիրո պատճառով մի սառեցրեք ձեր հոգիները Քրիստոսի սիրո հրից»): Թևավոր խոսքի ուժ ունի Ն. Շնորհալու հետևյալ դի-

<sup>56</sup> Տե՛ս **Ս. Ն. Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, էջ 24-26:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 117-119:

տարկումը. «...հիմա չկա մեկը, որ տգետ լինի բարու և չարի ընտրության մեջ, մարդը կամովին է տգիտանում»<sup>58</sup>: Դիմելով քահանաներին՝ Ն. Շնորհալին զգուշացնում է. «Ձեզանից ոչ ոք թող տգիտության կարևորությունը չնախընտրի քահանայական ուսումից ծուլության կամ աշխարհիկ զբաղմունքների պատճառով»<sup>59</sup>:

Կարևորելով բարությունը և աշխատասիրությամբ անգիտությունը հաղթահարելու ձգտումը՝ միաժամանակ Ն. Շնորհալին ընդգծում է արդարամիտ լինելու անհրաժեշտությունը. «...չլինի թե կողմնակալ բարությամբ սիրեք ոմանց՝ մյուսներից առանձնացնելով և ոմանց անտեսեք, ոմանց պետք եղածից ավելին տաք և մյուսներին՝ անհրաժեշտ բաներով իսկ չբավարարեք»: Նա այնուհետև շարունակում է. «Կերակուրների բաշխումը ևս պետք է լինի յուրաքանչյուրին ըստ աշխատանքի՝ շատ կամ քիչ: Ծերերին և տկարներին մի անտեսեք որպես ներկայիս անօգտակար տարրերի... քանզի նրանք իրենց երիտասարդության ժամանակն ու կորովը եկեղեցու ծառայությանն են նվիրաբերել»<sup>60</sup>:

Այս դրույթներն արդեն վերաճում են արդի սոցիալական փիլիսոփայության, որոնք չափազանց էական են ժամանակակից հանրային կառավարման համար: Մասնավորապես իրավացիորեն կարևորվում են աշխատանքի արդարացի վարձատրությունը, դրա կապակցումը կատարված աշխատանքի քանակական արդյունքներին: Բացի այդ, մատնանշվում է ծերերի և անաշխատունակների ոչ միայն սոցիալական պաշտպանության, այլև նրանց վաստակի շարունակա-

---

<sup>58</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 26:

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 90:

<sup>60</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 62:

կան գնահատման անհրաժեշտությունը: Այս խնդիրն այսօր էլ արդիական է, չի կարելի հակադրել տարբեր սերունդներին՝ հատկապես աշխատատեղեր ազատելու համար, այլ վարել փորձի և երիտասարդության զուգակցման արդյունավետ քաղաքականություն:

Եպիսկոպոսների դասի համար առանձնահատուկ պետք է լինեն անարատ կերպարը, պարկեշտությունը, հյուրասիրությունը, բարեսեր և արդար վարքագիծը, ժուժկալությունը, «ոչ արծաթասեր» պահվածքը<sup>61</sup>:

Ն. Շնորհալու ընդգծած մարդկային առաքինությունները և վարքի կանոններն անվիճելիորեն բնութագրական պետք է լինեն բոլոր խավերի քաղաքակիրթ մարդկանց համար՝ անկախ նրանց ազգությունից, գրաված դիրքից, կենսամակարդակից, ուստի մեկ անգամ ևս նշենք դրանց համամարդկային բնույթը՝ իբրև մարդու կերպարի կարևորագույն չափանիշներ:

### 3. ԱՌԱՋՆՈՐԴՆ ԸՍՏ Ն. ՇՆՈՐՀԱԼՈՒ

Առաջնորդը, ըստ կառավարման ժամանակակից տեսության, այն անհատն է, որն իր ներուժային կարողություններով ի վիճակի է ներագդելու մարդկանց, նրանց խմբերի վարքագծի վրա: Առաջնորդից տարբերվում է իշխանավորը. նա օրենքի ուժով՝ իրեն վերապահված լիազորություններով հնարավորություն ունի ներագդելու մարդկանց, նրանց խմբերի վարքագծի վրա: Իհարկե, երջանիկ է այն կազմակերպությունը կամ խումբը, որի ղեկավարը նաև առաջնորդ է:

---

<sup>61</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 67-73:

Ստորև դիտարկվելու է առաջնորդի այն ընկալումը, որը գու-  
գակցում է իշխանավորն ու առաջնորդը մեկ անհատի մեջ:

Բոլոր ժամանակների անհազ պաշտոնամուլների մասին  
է խոսում, երբ Ն. Շնորհալին «Աստծո օրենքների դեմ» մեղան-  
չել է համարում անագնիվ ճանապարհով առաջնորդ դառնա-  
լը. «Թող ոչ ոք ինքնասիրության ախտով շարժված, ավագնե-  
րին կաշառելով, չհափշտակի վանքի առաջնորդությունը,  
առանց տվյալ ժամանակի առաջնորդի քննության և հրամա-  
նի»<sup>62</sup>:

Ամենատարբեր մակարդակների առաջնորդների, իշ-  
խանավորների վարքագծի շատ կարևոր մի հատկանիշի՝  
ստանձնած դիրքի և պատասխանատվության բարձր աստի-  
ճանի գիտակցմանն է ուղղված Շնորհալու հետևյալ հորդորը.  
«Ամեն ինչից առաջ աղաչում եմ ձեզ, որ սթափվեք և իմաս-  
տությամբ ճանաչեք ձեր աստիճանի բարձրությունը և դերը,  
թե՛ որտեղի՞ց սկսվեց, ինչի՞ համար հաստատվեց և ի՞նչ հրա-  
մայեցին անել նրանք, ովքեր այն հաստատեցին»<sup>63</sup> (խոսքը  
պաշտոնի նշանակողների և առաջադրված խնդիրների մա-  
սին է): Ուստի՝ ղեկավարը, ագնիվ ճանապարհով ստանձ-  
նելով առաջնորդի դերը, բարձր պատասխանատվությամբ  
պետք է նվիրվի իր պարտականությունների կատարմանը,  
քանի որ նրա գործելակերպը բախտորոշ կարող է լինել կազ-  
մակերպության, առանձին անհատների, անգամ երկրի ճա-  
կատագրի համար: Մեծածավալ լիազորություններ, բարձր  
պատասխանատվություն՝ ժամանակակից տերմինաբանությ-  
յամբ սա է առաջնորդի վարքագծին ներկայացվող Շնորհալու  
առաջին չափանիշը:

---

<sup>62</sup> Տե՛ս **Ս. Ն. Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, էջ 63:

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 65:

Հաջորդ չափանիշը վերաբերում է կադրերի ընտրությանը. «Ձեր երկրի վրա չար և անիրավ գործավարներ և գավառապետեր մի նշանակեք, որպեսզի նրանց գործած անիրավությունների պատճառով դուք էլ նրանց հետ չդատվեք Աստծուց, այլ մարդկանց վրա գործավարություն անելու համար արդարամիտ ու արդարադատ մարդկանց ընտրեցեք, որպեսզի արքունիքի սահմանած իրավունքները չթողնեն վաստակավորներին՝ մի փոքր կաշառքի փոխարեն զիջելով բազումը կամ իրենք գողանան և նրանց չնեղեն և հրամայվածից ավելի գանձեն, քանզի երկուսն էլ անիրավություն են Աստծո համար»<sup>64</sup>: Հետևաբար՝ կադրային քաղաքականության մեջ հարկ է կարևորել պաշտոնի նշանակվող անձանց հետևյալ հատկանիշները՝ բարությունը, արդարամիտ և արդարադատ լինելը, կոռուպցիոն ռիսկերից զերծ վարքագիծը: Անվիճելիորեն կադրերի ընտրության Շնորհալու այս սկզբունքները ճշմարիտ են բոլոր ժամանակների համար:

Ենթականների աշխատանքի կազմակերպման և նյութական խթանման ամբողջական համակարգ է առաջարկում Ն. Շնորհալու հետևյալ խորհմաստ հորդորը. «Ձեր իշխանության ենթակա մարդկանց մի ծառայեցրեք անբան կենդանիների նման, որոնք բնությամբ ծառա են մարդկանց և խիստ ու անտանելի գործեր մի տվեք նրանց... ոչ էլ առանց կերակրի թողեք նրանց...: Աշխատաժամերը պակասեցրեք, առատ կերակուրներով գոհացրեք նրանց աշխատանքի ընթացքում և չափից ավելի մի ծանրաբեռներ, որպեսզի կարենան իրենց վաստակով իրենց աղքատ տների և զավակների կյանքն ապահովել և արքունական հարկերը վճարել»<sup>65</sup>:

---

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 104:

<sup>65</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 105:



Ուշագրավ է հարկահավաքությանն առնչվող Ն. Շնորհալու պատվիրանը. «...անհրավությամբ մի վարվեք հպատակների հետ՝ ծանր և դժվարակյիռ հարկեր դնելով, որոնք չեն կարող կրել, այլ յուրաքանչյուրին օրենքով և ըստ իր կարողության չափի...»<sup>66</sup>: Նշված վերջին երկու պատվիրանները նույնպես ընդգծում են առաջնորդի բարյացակամության, արդարամտության և նաև գործիմացության կարևորությունն իր պարտականությունների կատարման ընթացքում:

Ենթականների աշխատանքի գնահատման, ըստ անհրաժեշտության նրանց արդարացի պատժելու համար ղեկավարի վարքագծի էական բաղադրիչներ է բովանդակում Ն. Շնորհալու հաջորդ պատվիրանը. «Անհրավությամբ մի դատեք որևէ մեկին, այլ ուղիղ դատաստան արեք, որպեսզի Աստված էլ ձեզ քաղցրությամբ դատի և ոչ խստությամբ: Կաշառքը, կողմերից մեկին սիրելը, ատելությունն ու ռիսակալությունը կամ որևէ մեկից սպասվելիք պատիվը թող պատճառ չլինեն, որ դատի ժամանակ անհրավին արդարացնեք և արդարի իրավունքները խեղաթյուրեք...»<sup>67</sup>:

Բնակավայրի և շրջապատող հանրության հանդեպ ժամանակակից ընկալմամբ սոցիալական պատասխանատվության հարցը նույնպես կարևորվել է «Թուղթ ընդհանրականում»: Դրան են միտված իշխաններին հասցեագրված Շնորհալու հետևյալ հորդորները. «Ոչ ոքի մի զրկեք և մի նեղեք աղքատներին ու տնանկներին...», «Մի անտեսեք այրու և աղքատի իրավունքները, երբ ձեր առջև բողոքեն իրենց զրկողներից, այլ որբի դատը տեսեք և այրու իրավունքը

---

<sup>66</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 103:

<sup>67</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 104:

տվեք...»<sup>68</sup>: Նա աստվածային պատվիրաններին անհարիր է համարում այն ունևորների վարքագիծը, որոնք «իրենց արդար ունեցվածքից չեն կերակրում քաղցածներին, չեն հագցնում մերկերին և չեն հյուրասիրում օտարներին...»<sup>69</sup>:

Հարկ է ընդգծել, որ հատկապես առաջնորդի վարքագծի համար Ն. Շնորհալին բազմիցս է կարևորում արդարության և ազնվության անհրաժեշտությունը. «Դարձյալ ասենք նաև այս, որ ստորությունն ու խաբեությունը, որոնք ըստ Քրիստոսի, չարից՝ սատանայից են, թեև բոլորին են վնասում, բայց առավելապես՝ մեծամեծերին և իշխաններին, քանզի փոքրը ջանում է ստությամբ իր խոսքը հաստատել և հավատացնել, որովհետև անգոր է, իսկ մեծը, որ իշխանաբար կարող է ուզածը անել, ավելի հանցավոր է լինում, երբ արհամարհում է իրավունքը»<sup>70</sup>:

Հավանաբար ինչպես XII դարում, այնպես էլ հիմա հաճախ տրտնջում են, թե դժվար է արդարամտորեն, առանց սովորոտ գործելակերպի կառավարել, ըստ Շնորհալու ձևակերպման՝ «առանց զրկելու իշխել»։ Այդպիսի մտայնություններին տրված նրա պատասխանն արդիական է այսօր և այդպիսին կլինի նաև ապագայում. «Մակայն անհնարին չէ առանց անիրավության իշխանությունը վարել, այլ դյուրին և հեշտ՝ սիրողի և կամեցողի համար և մենք վկայում ենք Աստծո առջև և երաշխավորում բոլորին, որ եթե մեկն իր տունը մաքուր պահի զրկանքներից և արդար վաստակածը միայն հավաքի այնտեղ, թեև թվա թե՛ սակավ է, ավելի շահեկան կլինի և պատճառ՝ հարստության, քան անիրավաբար ձեռք

---

<sup>68</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 103, 104:

<sup>69</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 107:

<sup>70</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 109:

բերված շատը», «...Քանզի անիրավությամբ ձեռք բերված քիչը կրակի նման այրում և ապականում է իրավունքով ձեռք բերված շատը, քանզի զրկվածներից անիրավ հավաքածը անեծքով և դառնությամբ է և աղքատների անեծքի հետ Աստծո անեծքն էլ է մտնում զրկողի տունը»<sup>71</sup>:

Ն. Շնորհալու խորհմաստ հորդոր-խրատներից մեկն առնչվում է կոլեկտիվում բարյացակամ և առողջ սոցիալ-հոգեբանական միջավայրի ստեղծմանը. «...Եթե համամիտ լինեք մեր խորհրդին, հետևյալ կարգը հաստատեք բոլոր ձեր ծառայողների համար. այնքան ժամանակ, որքան մեկը ցանկանում է ձեզ ծառայել, հավատարմությամբ և առանց նենգության թող ծառայի, երբ ցանկանա դուրս գալ ձեր ծառայությունից, առանց վախի հայտնապես հրաման թող խնդրի ձեզանից և դուք խստությամբ ու բռնությամբ արգելք մի եղեք, այլ եթե չեք ուզում իր մեկնելը, ջանացեք սիրով և իր կամքով պահել, իսկ ուրիշներին քաղցրությամբ արտոնեք և եթե որևէ բան պարտական եք, հատուցեք նրանց: Երբ նման արդարություն տեսնեն ձեզանից, կամ երբեք չեն գնա և կամ էլ թե գնան, շուտով դարձյալ ձեզ մոտ կվերադառնան»<sup>72</sup>: Աշխարհի իշխաններին ուղղված կաթողիկոսի վերջին հորդորը նույնպես չափազանց ուսանելի է. «Այս պատվերը ևս ավանդում ենք ձեզ. վրիժառու և քենախնդիր մի եղեք, ...այլ ըստ Քրիստոսի պատվիրանի, եղեք ներող և համբերող բոլոր նրանց հանդեպ, ովքեր ձեր դեմ մեղանշել են...»<sup>73</sup>:

Վերածննդի դարաշրջանի նշանավոր դիվանագետ և գրող Նիկոլո Մաքիավելլին (1469-1527) հեղինակել է «Իշխա-

---

<sup>71</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 108:

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 110, 111:

<sup>73</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 113:

նը» խորագրով հանճարեղ աշխատությունը պետական կառավարման հիմունքների վերաբերյալ<sup>74</sup>։ Այդ հանրահայտ աշխատությունում դիտարկվում են պետության և իշխանության տիպերը, խորհուրդներ են տրվում իշխանավորներին ինչպես կառավարել պետությունը, գրավել նոր երկրներ ու քաղաքներ, կառուցել հարաբերությունները ենթակաների հետ, վարել ռազմական գործը և այլն։ Ավելի քան երեք դար մեծ իտալացուց առաջ Ն. Շնորհալին իր հորդոր-խրատներով առաջարկել է տարբեր մակարդակների համար կառավարման հիմնադրույթներ, որոնք առավել ամբողջական են, հումանիստական և համամարդկային։ XX դարում ստեղծված առաջնորդման զանազան տեսություններում<sup>75</sup> առաջնորդների վարքագծում կարևորում են նույն այն չափանիշները, որոնք իբրև աստվածային պատվիրաններ սերունդներին ավանդել է Ներսես Շնորհալին։

---

<sup>74</sup> Տե՛ս Մաкиавелли Н. Государь, история Флоренции. М., ЭКСМО, 2010, с. 7-87:

<sup>75</sup> Տե՛ս Մենեջմենթ, Յու. Մ. Սուվարյանի ընդ. խմբ., Ե., «Տնտեսագետ», 2016, էջ 380-386:

### 3.3. ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ\*

Հայ հասարակական-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչների շարքում առանձնահատուկ տեղ ունի Բանաստեղծ, արձակագիր, գրաքննադատ, հրապարակախոս, հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Նրա հարուստ գրական, հրապարակախոսական ժառանգությունը բազմիցս ուսումնասիրվել, քննական վերլուծության է ենթարկվել և ըստ արժանվոյն գնահատվել գրականագիտական, պատմական, փիլիսոփայական, տնտեսագիտական և այլ բնույթի հետազոտություններում: Մասնավորապես ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր, ծավալուն, հիմնարար պատմաբանասիրական ուղղվածության մենագրությունը նվիրված է նրա «ռնոլյուցիոն-դեմոկրատական հայացքների լինելության պատմահասարակական աղբյուրների» բնութագրությանը՝ «լծորդված նրա ժամանակաշրջանի մտավոր և սոցիալ-քաղաքական հոսանքամարտերի հետ»<sup>77</sup>:

Մ. Նալբանդյանի գրական, հրապարակախոսական ժառանգությունը բարձր են գնահատել նշանավոր գրաքննադատներ Ա. Տերտերյանը, Խ. Սարգսյանը, Ս. Դարոնյանը, Ա. Ինճիկյանը, Կ. Դանիելյանը՝ համարելով նրան հայ գրակա-նության մեջ ռեալիզմի հիմնադիրներից մեկը և միաժամա-

---

\* Առաջին անգամ հրատարակվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» (2012, թ. 4) հանդեսում:

<sup>77</sup> **Հովհաննիսյան Ա.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Ե., 1955, էջ 10:

նակ՝ հայ ռեալիստական գեղագիտության և քննադատության հիմնադիր<sup>78</sup>:

Գրականագիտական հետազոտություններում միաժամանակ նշվում է, որ Մ. Նալբանդյանն իր աշխատությունը շարադրելիս Լոնդոնում խորհրդակցել է Օգարյովի, Գերցենի, Բակունինի հետ, օգտվել «Կոլոկոլ»-ում տպագրված նյութերից և լոնդոնյան այլ հրատարակություններից<sup>79</sup>: Կ. Դանիելյանի կարծիքով նրա ուսմունքի էությունը հիմնվում է ֆիզիոկրատներից առած հետևյալ գաղափարի վրա. երկրագործությունը ազգի հարստության իրական աղբյուրն է<sup>80</sup>, իսկ տնտեսական զարգացման ծրագիրը սոցիալական ուտոպիա է<sup>81</sup>:

Լինելով լայնախոհ մտածող, հայ ազգային հիմնախնդիրների լուծման ջատագով՝ Մ. Նալբանդյանը դրա ուղիներից թերևս կարևորագույնը համարում էր տնտեսական խնդիրը: Ահա թե ինչու իր աշխատություններում խիստ կարևորել է տնտեսական զարգացման հարցերը և ըստ այդմ ներկայացրել իր ժամանակի համար առաջադիմական գաղափարներ, որոնք հետագայում դարձել են տնտեսագետների հետազոտության առարկա:

Ս. Զուրաբյանը հանգամանորեն քննարկել ու գնահատել է Մ. Նալբանդյանի տնտեսագիտական հայացքները և

---

<sup>78</sup> Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հ. 8, Ե., 1982, էջ 150, 151:

<sup>79</sup> **Դարոնյան Մ.**, Միքայել Նալբանդյան (Կյանքը և գործունեությունը), Ե., 1979, էջ 382:

<sup>80</sup> **Դանիելյան Կ.**, Հայ գյուղագրությունը XIX դարում (1860-1890), Ե., 1973, էջ 23:

<sup>81</sup> Նույն տեղում, էջ 56:

տնտեսական ծրագիրը՝ համարելով, որ նա «ռուս ռնոյու-ցիոն դեմոկրատների հետ միասին գաղափարական հող պատրաստեց մարքսիզմի տարածման համար հայ իրակա-նության մեջ»<sup>82</sup>: Մ. Նալբանդյանի տնտեսագիտական հա-յացքները նույն ոգով դիտարկել և գնահատել է Խ. Գուլան-յանը<sup>83</sup>:

Վ. Ադուգումցյանը «Միքայել Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները» աշխատության մեջ փորձել է ներկայացնել նրա փիլիսոփայական, հեղափոխական, լու-սավորչական և տնտեսագիտական հայացքները, գնահատել դրանք հայ հասարակական մտքի պատմության մեջ<sup>84</sup>: Հեղի-նակի կարծիքով Մ. Նալբանդյանը կրել է ֆիզիոկրատների որոշ ազդեցությունը, «սխալ կերպով հիմնական տնտեսա-կան հարցը նույնացնում է հողային հարցի հետ և գրում է, որ ամեն ինչ կախված է հողային հարցի լուծումից»: Տնտեսական հարցի լուծման նալբանդյանական մոտեցումը հիմք է հան-դիսացել նրան ներկայացնելու որպես ուտոպիական սոցիա-լիզմի ներկայացուցիչ<sup>85</sup>:

Առանձին հետազոտողներ Մ. Նալբանդյանին վերագրել են գաղափարներ, որոնք նա չի հեղինակել: Օրինակ, ըստ որոշ հեղինակների՝ Մ. Նալբանդյանը «պաշտպանել է արժե-քի աշխատանքային տեսության սկզբունքը, նյութական ար-

---

<sup>82</sup> **Զորաբյան Ս. Շ.**, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվա-գծեր (XVIII դարի վերջին քառորդ – XIX դարի 90-ական թվականներ), Ե., 1959, էջ 229:

<sup>83</sup> **Гуланян Х.**, Микаел Налбандян. М., 1955.

<sup>84</sup> **Ադուգումցյան Վ.**, Միքայել Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները, Ե., 1955, էջ 134:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 135:

տաղրության գլխավոր տարրեր համարել աշխատանքն ու արտադրության միջոցները»<sup>86</sup>, կամ՝ «տնտեսության գլխավոր ճյուղը շահագործումից ազատ երկրագործությունն է», մինչդեռ, ինչպես հետագայում կմատնանշվի, նա նաև կարևորել է մշակող արդյունաբերության և առևտրի զարգացումը: Հավանաբար հասարակական-քաղաքական իրադրության թելադրանքով ձգտել են Նալբանդյանին ավելի շատ հեղափոխական ու անգամ Կ. Մարքսի տեսության համակիր ներկայացնել, մինչդեռ գիտական կոմունիզմի գլխավոր երկը՝ «Կապիտալի» առաջին հատորը, լույս է տեսել 1867 թվականին (ռուսերեն՝ 1872 թ.):

Տնտեսագիտական հայացքների առումով այս դիտարկումները, անշուշտ, կատարվել են մարքս-լենինյան գաղափարախոսության դիրքերից, որ տիրապետող էր նախկին ԽՍՀՄ-ում, և հասարակական առաջընթացի միակ ուղին համարվում էր դասակարգային պայքարի ու հեղափոխության միջոցով համայնավարական կարգերի հաստատումը, սակայն դրանք հիմնականում բնավ չեն բխում Մ. Նալբանդյանի աշխատությունների տրամաբանությունից:

Մ. Նալբանդյանի փիլիսոփայական հայացքներն արդեն առանց գաղափարական սահմանափակումների դիտարկվել են Ս. Սարգսյանի մենագրությունում<sup>87</sup>: «Նալբանդյանը իրատես էր, – ընդգծում է հեղինակը, – և որպես ազգային գաղափարախոս, ազգային առաջադիմության ջատագով՝ համոզված էր, որ ազգի ինքնահաստատման ու զարգացման համար նախ պետք է ապահովել նրա հիմքը՝ ազգի մեծամասնություն-

---

<sup>86</sup> ՀՄՀ, հ. 8, էջ 151:

<sup>87</sup> *Մարգարյան Ս.*, Մարդու հիմնախնդիրը XIX դարի հայ փիլիսոփայական և հասարակական մտքում, Ե., 2001:



նը կազմող հասարակ ժողովրդի գոյության սոցիալական, տնտեսական, իրավական պայմանները, նրա հնարավոր ազատությունը»<sup>88</sup>:

Մ. Նալբանդյանի ուսմունքի այս մեկնաբանությունը և գնահատումը համահունչ են նրա աշխատություններում քննարկված խնդիրների և առաջարկվող լուծումների բովանդակությանն ու ուղղվածությանը: Իր՝ վերը նշված մեկնաբանության վերջաբանում Ա. Հովհաննիսյանը գրել է. «Ժամանակի փոշին ծածկել է նրա գրական ժառանգությունն ու նրա դարաշրջանի բազմաթիվ չհայտաբերված հիշատակները: Բայց թոթափեցեք ժամանակի հետքը նրա մարած կյանքի և խունացած ժառանգության վրայից, և դուք կտեսնեք դրանց տակ կենդանի ու վառ, բոցաշունչ ու խռովահույզ էջեր, որոնք գրվել են կարծես երեկ՝ այսօրվա մարտերում ոգեպնդիչ հրահանգներ դառնալու համար: Սրանով է, որ մեր օրերին իսկ դրսևորվում է հաճախ նրա մտքի կայուն ուժը»<sup>89</sup>: Ուսումնասիրելով Մ. Նալբանդյանի հատկապես հասարակական-տնտեսագիտական բնույթի հարուստ ժառանգությունը՝ համոզվում ենք Ա. Հովհաննիսյանի արտահայտած մտքի ճշմարտացիության մեջ:

Ստորև փորձենք լուսաբանել, մեկնաբանել և արժևորել Մ. Նալբանդյանի հայացքները հանրային կառավարման հիմնախնդիրների վերաբերյալ, իսկ դրանք, ինչպես ցույց կտրվի հետագա շարադրանքում, իրոք, «ոգեպնդիչ հրահանգներ» են հայոց վերականգնված պետականության ամրապնդման ու զարգացման համար:

---

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 260:

<sup>89</sup> *Հովհաննիսյան Ա.*, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Ե., 1956, «Հայպետհրատ», էջ 605:

1. *Ազատությունը և քաղաքացիական հասարակությունը*: Հայտնի է, որ հանրային կառավարումը՝ իբրև երևույթ, հայեցակարգ, կառավարման ամբողջական համակարգ, ձևավորվել է հասարակական կյանքի ժողովրդավարացմանը, քաղաքացիական հասարակության կազմավորմանը գուզընթաց և դրանց արդյունքում: Իսկ քաղաքացիական հասարակության բնորոշ գծերից է անհատների ազատ մտածելու, գործելու և ապրելու հնարավորությունը: Մ. Նալբանդյանի՝ 1859 թ. լույս տեսած հանրահայտ «Ազատություն» բանաստեղծությունը կարևորում է մարդ-քաղաքացուն բնորոշ ազատության անհրաժեշտությունը, ինչը հասարակական կյանքի ժողովրդավարացման, իսկ այնուհետև հանրային կառավարման սկզբունքների արմատավորման կարևորագույն նախադրյալ է: Հարկ է նկատել, որ Մ. Նալբանդյանի ազատության գաղափարն ունի մեկ այլ ընկալում ևս՝ հայրենիքի ազատությունը.

«Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ մեռնե.  
Բայց երանի՛, որ յուր ազգի  
Ազատության կըզոհվի»<sup>90</sup>:

Մ. Նալբանդյանը ազատության գաղափարը զարգացնում է իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատության մեջ: Քննելով բռնակալության էությունը՝ նա գրում է. «...բռնակալությունը, եթե նորա երևեցուցիչը մի անհատ է, թո՛ղ լինի այն անհատը Ներոն, Կալիգուլա կամ նորա աշակերտ մի պոլիտիկական ավագակ,

---

<sup>90</sup> *Նալբանդյան Մ.*, Երկեր, Ե., 1985, էջ 34:

բնավ սարսափելի չէ, քանզի այն անհատի հետ գերեզման կիջնե»<sup>91</sup>:

Բայց «բռնությունը աննկարագրելի և անթարգմանելի կերպով կատաղի է, կամակոր և երկարատև, եթե աղբերանում է հասարակ ժողովրդի ընդունած սկզբունքից: Մի հարատև բռնակալ կառավարություն, մի ազգի մեջ, ուրիշ բան չէ, եթե ոչ այդ ազգի հոգու երևեցուցիչը»<sup>92</sup>: Ըստ հեղինակի՝ շատ անգամ ազգը, զգալով բռնության ծանրությունը, առանց արմատը քննելու, այսինքն՝ առանց յուր անձը քննելու, ապարեզ է դուրս գալիս չարչարող բռնությանն ընդդեմ, չքացնում է բռնության երևեցուցիչը, չգիտակցելով, որ «յուր մեջ է այն բռնության և անօրենության տարրը»:

Մ. Նալբանդյանի տրամաբանությամբ մարդու համար վերևից եկած ազատությունը ոչինչ է, «եթե մարդը նախ ինքը յուր մեջ ազատ չէ, և երկրորդ, եթե ինքը այնուհետև պիտի բռնանա յուր ընկերի վերա»: Հեղինակը իրական ազատությունը պայմանավորում է տնտեսական համակարգով, սեփականության բնույթով: «Եվ քանի որ տնտեսական խնդիրը – այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծված չէ, հասարակությունը յուր ընկերական և ընտանեական հարաբերությանց մեջ ազատ չէ, թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը»<sup>93</sup>:

Այսպիսով, Մ. Նալբանդյանի ազատության ըմբռնումը բազմաշերտ է, տարրդունակ: Նախ՝ այն ենթադրում է անհա-

---

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 472:

<sup>92</sup> Նույն տեղում:

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 474:

տի ազատություն, ինչը համահունչ է ներկայումս ընդունված մարդու իրավունքներին և ազատություններին, որոնք ամրագրված են ժողովրդավար պետությունների սահմանադրություններում և քաղաքացիական հասարակության կարևոր բաղադրիչներն են: Ազատության մյուս դրսևորումը հայրենիքի ազատությունն է, անկախ պետականության գոյությունը, որը էական նախադրյալ է ազգային պետության, տնտեսության, մշակույթի կայացման ու զարգացման համար:

Ազատության հաջորդ դրսևորումը տնտեսական ազատությունն է: «Ազատությունը ըստ ինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն: Ոչ մի ազատ կառավարություն, ոչ մի ազատ օրենսդրություն չէ կարող փրկել մարդը ստրկութենից մինչև որ այդ մարդը հողի վերա իրավունք ունեցող չխոստովանվի: Եվ մինչև այս, ընդհանրական աղքատությունը երթալով պիտի գորանա և հասնի հսկայական աստիճանների»<sup>94</sup>:

Ազատության նալբանդյանական մեկնաբանության մեկ այլ արտահայտությունն այն է, որ միայն ներքին ազատությամբ օժտված քաղաքացիները կարող են ձևավորել ազատական, ժողովրդավարական, այսինքն՝ բոնությունից գերծ իշխանություն: Այս խնդիրը խիստ արդիական է ժողովրդավարական պետության կառուցման ուղին ընտրած հետխորհրդային երկրների, այդ թվում՝ մեր երկրի համար: Ժողովրդավարական ինստիտուտները, քաղաքացիական հասարակությունը կարող են կայանալ, եթե մարդիկ իբրև անհատներ ազատ են մտածելակերպով, հասարակական վարքագծով,

---

<sup>94</sup> Նույն տեղում, էջ 479:

եթե Մ. Նալբանդյանի արտահայտությամբ՝ յուր մեջ չկա «բռնության և անօրենության տարրը»:

2. *Տնտեսական քաղաքականության հարցեր*: Մ. Նալբանդյանը կարևորում է հանրային կառավարման առանցքային գործառնություններից մեկը՝ տնտեսական քաղաքականությունը: Ըստ նրա՝ ընդհանուր առմամբ և մասնավորապես հայ ժողովրդի համար որոշիչ է տնտեսական խնդրի լուծումը: «Տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է, կրկնում ենք դարձյալ: Եվ անկարելի է հայոց ազգի հիմքը նորոգել, ուժ և գործություն դնել նորա մեջ, քանի որ ազգը, հասարակ ժողովուրդը, կարոտ է օրական հացի, քանի որ նորա տնտեսական խնդիրը կարգի չէ դրվում»<sup>95</sup>: Նա նաև առաջարկում է խնդրի լուծման ուղին: «Ի՞նչ աղբյուրներից կարող է հանել հասարակ ժողովուրդը յուր, չասենք հարստությունը, այլ ապրուստը, և ապրուստ հավատի, մշտնջենական և ոչ առօրյա – հարցնում է Մ. Նալբանդյանը և պատասխանում: – Հասարակ ժողովրդի համար, ուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպես անհրաժեշտ, ինչպես ջուրը ձուկի համար, միակ աղբյուր ապրուստի և հարստության է երկրագործությունը»<sup>96</sup>:

Այսպիսով, նա անընդունելի է համարում իր ժամանակ արտահայտվող այն տեսակետները, թե հայ ազգի փրկության համար հարկ է լուսավորություն տարածել կամ զարգացնել վաճառականությունը: Մ. Նալբանդյանը գտնում է, որ «ազգ կազմող անհատների մեծագույն մասը պարապի երկրագործությամբ», «փոքրագույն մասը, որ չէ պարապում երկրագործ-

---

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 493:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 462:

ծությամբ, ...պիտի կարողանա մշակել, շինել, գործել և վաճառել այն, ինչ որ դուրս է բերում գետնից նորա մեծագույն մասը»: Ուշագրավ է, որ Մ. Նալբանդյանը կարևորում է գյուղատնտեսական հումքի մշակման անհրաժեշտությունը. «Եվ միայն հում բերքերը չեն, որ կարող են գրավել հայ վաճառականի գործունեությունը, այդ բերքերի մշակությունը մի լավ յն հանդես, մի բնական ասպարեզ այն ժրաջան և գործունյա մարդերի համար, որ ստուգապես կամին պարապել վաճառականության»<sup>97</sup>: Խոսքը վերաբերում է գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունների ստեղծմանը, որոնք կարող են արտադրել սննդի և թեթև արդյունաբերության արտադրանք: Ուրեմն՝ ըստ հեղինակի «այդ ազգի ընդհանրությունը հարուստ է և ապահովյալ, որովհետև նորա հիմքը դրված է բնականապես և բնության վրա»: Մ. Նալբանդյանն այս տողերը գրել է XIX դարի երկրորդ կեսի սկզբին («Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», լույս է տեսել 1862 թվականին), երբ Եվրոպայում, մասնավորապես Անգլիայում (XVIII դարի 60-ական թվականներից), Ֆրանսիայում (1789–1794 թթ. հետո), Գերմանիայում (1848–1849 թթ. հետո) ծավալվում էր արդյունաբերական հեղաշրջումը, ձեռքի աշխատանքը փոխարինվում էր մեքենայակաճով, լայն թափով զարգանում էին թեթև արդյունաբերությունը, տեխնոլոգիական սարքավորումների արտադրությունը: Սակայն հայ ժողովուրդը ապրում էր Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ, որոնք իրենց զարգացման մակարդակով զիջում էին եվրոպական քաղաքակրթությանը, և այդ առումով Մ. Նալբանդյանի մատնանշած ուղին իր

---

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 500:

Ժամանակի համար հիմնավորված էր: Ժամանակակից տեր-մինաբանությամբ նա կարևորում էր իրական արտադրության զարգացումը, հիմնավորում, որ սոսկ առևտուրը, մանավանդ այն ապրանքների, որոնք հայրենիքում չեն արտադրվում, չի նպաստում ազգային տնտեսության զարգացմանը:

Եվրոպական քաղաքների հետ առևտուր ունենալը, ըստ Մ. Նալբանդյանի, կարելի է անվանել ազգային վաճառականություն միմիայն այն պատճառով, որ «ինքյանք հայ էին»: «Նոցա վաճառականությունը ազգային չէ և ազգի ընդհանուրի շահի հետ չունի որևիցե վերաբերություն: Այն ժամանակ միայն կարող է երևել ազգային վաճառականությունը, երբ նա, գլխավորապես, հայի առաջ բերած նյութը և արդյունքը վաճառե, այն ժամանակ միայն ազգը օգուտ կքաղե մեր վաճառականների գործառնությունից, երբ սոքա միջնորդ լինին հայոց ընդհանրության և Եվրոպիո մեջ, այն ժամանակ ազգային է վաճառականությունը, երբ նորա խարխախը դրված է ազգի հիմքի վերա»<sup>98</sup>: XIX դարի կեսին արտահայտված այս գաղափարը լայն առումով ռազմավարական նշանակություն ունի: Այսօր այն իրական արտադրության և ծառայությունների ոլորտի զարգացման, տնտեսության մրցունակության բարձրացման հենքի վրա երկրի առևտրական և վճարային հաշվեկշիռների դրական տարբերություն ապահովելու խնդիրն է: Համընդհանրացման մեր դարաշրջանում երկրները ներմուծում են ապրանքներ և արտահանում, կարևոր է, որ վերջինս գերազանցի նախորդին, դրանից «միայն ազգը օգուտ կքաղե»:

---

<sup>98</sup> Նույն տեղում, էջ 491, 492:

Երկրագործության զարգացման անհրաժեշտության հիմնավորման համատեքստում Մ. Նալբանդյանը դիտարկում է գնաճի, փողի արժեզրկման խնդիրները: «Դրամի արժեքը պայմանական մի բան է, նորա գործությունը, կամ անգործությունը, նորա բարձրանալը կամ ցածնալը կապված է այն նյութերի շատության կամ սակավության, որոնց հետ կենթադրվեր փոխանակել դրամը»<sup>99</sup>: Ըստ հեղինակի՝ «...եթե երկրագործությունը ծաղկի, դրամի հետ փոխվելու նյութերը առատանան, ....դրամի արժեքը ևս կբարձրանա նյութերի շատության չափով»<sup>100</sup>:

Ակնհայտ է, որ գների փոփոխության և դրամաշրջանառության խնդիրների լուծումը Մ. Նալբանդյանն իրավացիորեն տեսնում էր, մակրոտնտեսագիտական տերմինաբանությամբ՝ ապրանքների առաջարկի և պահանջարկի փոփոխության տիրույթում, իսկ ազգային արժույթի փոխարժեքի փոփոխությունը պայմանավորում էր իրական տնտեսության զարգացմամբ:

Քննարկելով գյուղատնտեսական հումքի մշակության խնդիրը՝ Մ. Նալբանդյանը նկատում է. «Շատ մեքենայք, որ Եվրոպայի մեջ ներգործում են կրակի և շոգու գործությամբ, Ասիո պարզության մեջ կարո՞ղ են ներգործել սարերից կատաղաբար վազած ջրերով, որի համար հարկավոր չէ վատնել այն դրամը, ինչոր եվրոպացին վատնում է ածուխի կամ փայտի համար»<sup>101</sup>:

Ակներև է, որ հեղինակն ավելի քան 150 տարի առաջ կանխատեսել է ջրաէներգետիկայի զարգացման անհրաժեշ-

---

<sup>99</sup> Նույն տեղում, էջ 483:

<sup>100</sup> Նույն տեղում:

<sup>101</sup> Նույն տեղում, էջ 500:



տությունը և առավելությունները էներգիայի այլընտրանքային աղբյուրների նկատմամբ:

**3. Ազգություն և կառավարություն:** «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ ուշագրավ դատողություններ կան «ազգություն», «կառավարություն» հասկացությունների, նրանց փոխհարաբերությունների, ինչպես նաև ազգերի իրավունքների մասին:

Ըստ Մ. Նալբանդյանի՝ «Ազգությունը իբրև պատմական իրողություն, իբրև հավաստի երևույթ, ընդհանուր մարդկության կյանքի մեջ, չէ կարելի մերժել»: Իսկ ինչ է ազգությունը հարցին նա պատասխանում է. «Ազգությունը է ազգի անձնավորությունը, ազգի դեմքը: Միլիոնավոր մարդիկ կորուսանում են յուրյանց անհատական ինքնությունությունը, այդ անձնավորության օգտի համար, նոքա չեն երևում որպես մարդ, այլ որպես անդամ այս կամ այն հավաքական անձնավորության: Եվ այդ անձնավորությունը բարոյապես ապրում է և ինքնությունաբար. ունի յուր սեփական կյանքը, յուր լեզուն, յուր սովորությունքը, յուր ավանդությունքը...»<sup>102</sup>: Այնուհետև շարունակում է. «Նորա ամեն մի սեփականը սուրբ է նորան և վա՛յ մյուսին, որ ձեռք բարձրացնե նորա, այս կամ այն, սեփական սրբության վրա»: Քննադատելով այն իրողությունը, երբ «մի ազգ ճնշում է, հարստահարում է մյուս ազգը, և յուր զենքով սահման է դնում նորա հողի վերա», ընդգծում է, որ «կամք չունինք ազգությունը կույր ֆանատիկություն դարձնել: Հերի՛ք է, որչափ կույր և ֆանատիկական ազգությունը ունի յուր եսական կողմերը, հերի՛ք է, ասում ենք,

---

<sup>102</sup> Նույն տեղում, էջ 504:

որ մի ազգություն յուր մի շամփուր խորովածի համար մորթում է մյուս ազգության եզր ...»<sup>103</sup>:

«Վնասակար և անիրավ է այնպիսի ազգությունը, որ ամեն ուրիշ գոհում է յուր կյանքին, – շարունակում է Նալբանդյանը և կանխատեսում, – ... Այդպիսի ազգությունը որչափ ևս կատաղի լինի, որչափ ևս մոլեգնի, ի վերա այսր ամենայնի ժամանակը կմաշե նորան»<sup>104</sup>: Այս կանխատեսումը մասամբ իրողություն է դարձել, նրա ժամանակ գոյություն ունեցող որոշ կայսրություններ (Օսմանյան, Ավստրո-Հունգարական, Ռուսական) կործանվել են, թեև տիրակալության ձևերը նույնպես փոխվել են, դարձել ավելի նուրբ և կատարյալ, օրինակ՝ ֆիզիկական տիրապետությունը փոխարինվել է տնտեսականով և այլն:

Ի դեպ, Մ. Նալբանդյանն ընդհուպ մոտեցել է նաև ազգերի ինքնորոշման իրավունքի գաղափարին. «Ազգությունը օգտակար է և հարկավոր այն ժամանակ, երբ զգալի է ոչ որպես մի բարոյական շոայլություն, այլ որպես կարիք, որպես իրավունք, որպես բողոք երկրագնդի վերա մի կտոր հող ձեռք բերելու համար, որպեսզի այդ ազգության անդամքը ապահովեն յուրյանց ապրուստը, որպեսզի գերի և ստրուկ չլինին ուրիշին: Ազգությունը անմեղադրելի է և ամենայն ընդունելության արժանի, եթե նա խոստովանի մյուս ուրիշ ազգությունքը անխտիր, նույնպիսի իրավանց ժառանգ, որպիսի ստացել է ինքը»<sup>105</sup>:

Հասկապես ուշագրավ է, որ ազգերի ինքնորոշումը նա համարում է իրագործված, եթե իրացվում է «հավաքական

---

<sup>103</sup> Նույն տեղում, էջ 502:

<sup>104</sup> Նույն տեղում, էջ 512:

<sup>105</sup> Նույն տեղում, էջ 513:

անձնավորության անունով իրավունք ձեռք բերելով և նույն իրավունքը և արտոնությունքը, հավասարապես, յուր անդամներին բաշխելով»<sup>106</sup>: Այսպիսով, Մ. Նալբանդյանն ընդգծում է ազգերի ինքնորոշման իրավունքի և ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության գործընթացների սերտ կապը, ինչը հաստատվել է մարդկային քաղաքակրթության զարգացման բազմադարյան հարուստ փորձով: Միայն XX դարի ընթացքում հասարակական կյանքի ժողովրդավարացմանը զուգընթաց շատ ազգություններ ինքնորոշվել են, ստեղծվել են նոր պետություններ, թեև հին ավանդույթով առանձին դեպքերում դեռևս արգելակվում է ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումը՝ գլխավորապես բռնապետական երկրներում և ոչ միայն: Արդյոք լիիրավ ժողովրդավարական կարող է համարվել այն երկիրը, որի կազմում կա ինքնորոշման ձգտող ազգություն: Անշուշտ, ո՛չ, իսկ պատասխանը Մ. Նալբանդյանինն է: «Եթե հավասարակշիռ և իրավունք կա տերությանց մեջ, ուրեմն նույն կշիռը և նույն իրավունքը պիտի լինի տերությանց և նոցա ստրկացած ազգերի մեջ: ...Ուրիշ տերությանց հետ խոսում ես իրավունքի անունով, իսկ իմ վերաբերությամբ [տերության կազմում եղած ազգի՝ հեղ.] ինչի՞ համար ոտքի տակ ես կոխում նորան և անիրավում ես չարաչար»<sup>107</sup>:

Մ. Նալբանդյանի համոզմամբ կառավարությունը և ազգը տարբեր երևույթներ են, կառավարությունը «որևէ աշխարհի պաշտոնյայքը կամ նոցա գահերեցն է», որի սեփականությունն են «տերության հողը, գանձը և այլն», «կառա-

---

<sup>106</sup> Նույն տեղում:

<sup>107</sup> Նույն տեղում, էջ 512:

վարությունքը տիրում են զանազան աշխարհների, զանազան ազգերի»<sup>108</sup>: Նա, քննելով Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, Պրուսիայի, Ռուսաստանի, Թուրքիայի՝ իբրև կայսրությունների ծավալապաշտական գործելակերպը, ձաղկում է գաղութատիրությունն արդարացնող այն դրույթը, թե իբր «մարդկության սերն է, որ ստիպում է նորանց ստրկացնել զանազան ազգեր, որովհետև այդ ազգերը հետ են մնում և չեն քաղաքակրթվում»<sup>109</sup>:

Մ. Նալբանդյանի քարոզչության և աշխատության նպատակը, ըստ հեղինակի, «այն է միայն, որ ազգը մտածե յուր ապագան», ահա թե ինչու հարկ է նրա իսկ խոսքով՝ «քարոզել տնտեսական խնդիրը, քարոզել *մարդը*, քարոզել *ազգությունը*...»<sup>110</sup>՝ իբրև պետականության կայացման և զարգացման հիմնասյուներ:

---

<sup>108</sup> Նույն տեղում, էջ 509:

<sup>109</sup> Նույն տեղում:

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 510, 522:

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից տնտեսագիտության մեջ գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ արդի աշխարհի որոշ երկրների սոցիալ-տնտեսական անբարենպաստ զարգացման մակարդակը հաղթահարելու դեղատոմսը համարում են գերակտիվ քաղաքական ինստիտուտների վերափոխումը ներառականի, որոնց բնորոշ են բազմակարծությունը և կենտրոնացվածությունը, և որոնք իշխանությունը վերապահում են անձանց լայն շրջանակի ու կանխում գերակտիվ տնտեսական ինստիտուտների ստեղծումը՝ իրենց բնորոշ բացասական դրսևորումներով: Մինչդեռ պատմական փորձը և տնտեսական զարգացման միտումների տրամաբանական վերլուծությունը ապացուցում են, որ քաղաքական ինստիտուտները, թեև կարևոր, սակայն միակ գործոնը չեն՝ տնտեսական զարգացում ապահովելու համար: Ժողովրդավարությունը հաղթում է առավել քաղաքակիրթ երկրներում, քանի որ քաղաքական ինստիտուտները հասարակական գիտակցության զարգացման արդյունք են: Գիտատեխնիկական առաջադիմության, կրթության զարգացման շնորհիվ բարձրանում է բնակչության քաղաքակրթական մակարդակը, աճում են քաղաքական ինստիտուտները, դառնում ինկլյուզիվ, տիրապետող է դառնում մասնակցային կառավարումը: Ուստի երկրի աղքատության հաղթահարման ելակետը գիտակրթական համակարգի և տեխնոլոգիական անընդհատ առաջընթացն է: Այս տրամաբանությամբ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման

ռազմավարության առանցքը կարող է լինել գիտության, կրթության և տեխնոլոգիական վերելքի ապահովումը, ինչի շնորհիվ կգարգանան հեռանկարային ոլորտներով մշակող արդյունաբերությունը, ինտենսիվ զարգացող գիտատար գյուղատնտեսությունը, հանքահումքային էկոլոգիապես անվտանգ և ավարտուն ցիկլով արդյունաբերությունը, ծառայությունների մրցունակ և ժամանակակից ճյուղերը:

Առհասարակ տնտեսական շարժընթացի գնահատման համար էական են տնտեսական զարգացման որակական բնութագրիչները՝ աճի բնույթը և կառուցվածքը, թողարկվող արտադրանքի որակը և մրցունակությունը, ՀՆԱ-ի և մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, տնտեսական համակարգի առաջադիմականությունն ու կառավարման սկզբունքները, տնտեսական աճի շնորհիվ ստեղծված բարիքների՝ հասարակության անդամների միջև բաշխման հավասարաչափության աստիճանը:

Դիտարկելով տնտեսություն–գիտություն–կրթություն փոխառնչությունները պարզվում է, որ ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում 2018 թ. մշակող արդյունաբերության բաժինը 11 տոկոս էր, իսկ մշակող արդյունաբերության արտադրության ծավալում գիտատար արտադրանքի տեսակարար կշիռը՝ 4.2 տոկոս, ինչի հետևանքով դեֆորմացված է նաև կրթության կառուցվածքը. բուհերում սովորողների ընդհանուր թվում գերակշռում են հումանիտար մասնագիտություններով սովորողները (64.5 %), նվազել է պահանջարկը գիտակոնստրուկտորական մշակումների նկատմամբ: Առաջարկվում է որոշակի ռազմավարությամբ նպաստել գիտատար և աշխատատար, քիչ նյութատար ճշգրիտ մեքենաշինության արտադրությունների զարգացմանը, որոնք ժամանակի ընթացքում

տնտեսության կառուցվածքը կդարձնեն առաջադիմական, կխթանեն գիտության և տեխնոլոգիական կրթության զարգացումը:

Զափագանց կարևոր են նաև գյուղատնտեսության տեխնոլոգիական զարգացման, ինչպես նաև ազգային նորամուծական արդյունավետ համակարգ ստեղծելու և գործարկելու հիմնախնդիրները:

Այդ առումով էական է ՀՀ-ում նորամուծական ներուժի գնահատումը: Ներկայացված են նորամուծական ներուժի գնահատման առկա մոտեցումները, ինչպես նաև խոչընդոտները: Վեր են լուծված ՀՀ-ում այդ ներուժի գնահատման իրական հնարավորությունները, որոնք հենվում են առկա պաշտոնական վիճակագրության վրա: Հաշվարկվել և ներկայացվել են 2010-2015 թթ. համար նորամուծական ներուժի հաշվարկման համար անհրաժեշտ բացարձակ և հարաբերական ցուցանիշները: Առաջարկվել է նորամուծական ներուժի գնահատման մոդել, որի միջոցով կատարվել են համապատասխան հաշվարկներ: Բնութագրվել է նաև ՀՀ-ում նորամուծական ներուժի շարժընթացը վերջին տարիների ընթացքում:

Այդ հիմնախնդրի համատեքստում գիտագործնական նշանակություն ունի ՀՆԱ-ի ծավալի և աճի տեմպի վրա գիտակրթական համակարգի ազդեցության գնահատման մեթոդաբանությունը:

ՀՀ ՀՆԱ-ի շարժընթացի վրա գիտության և կրթության ազդեցության գնահատումը կատարվել է հետևյալ երկու մեթոդաբանական եղանակներով.

- որոշվել է գիտակրթական համակարգի փաստացի իրականացված ծառայությունների մարդկային կապիտալում ներդրումների և ֆինանսավորման բոլոր

աղբյուրների (պետական բյուջե, մասնավոր ֆինանսավորում, դրամաշնորհներ և այլն) հաշվին գիտատեխնիկական մշակումների անմիջական ներագդեցությունը ՀՆԱ-ի աճի տեմպի վրա: Կատարված հաշվարկների արդյունքներով գիտակրթական համակարգի ուղղակի ազդեցությունը ՀՆԱ-ի դինամիկայի վրա 1995-2013 թթ. միջին հաշվով կազմել է 0.23 տոկոս՝ վերջինիս 7% միջին տարեկան աճի պարագայում,

- Կորբ-Դուգլասի ֆունկցիայի մեթոդաբանությամբ և մոդելում ընդգրկելով կրթական ու գիտատեխնիկական ծառայությունների ցուցանիշները՝ ստացվել են կապիտալից, զբաղվածների թվից, կրթական ու գիտատեխնիկական ծառայությունների ծավալից ՀՆԱ-ի դինամիկայի կախվածության ռեգրեսիոն մոդելներ: Գիտակրթական համակարգի էլաստիկության գործակիցը տարբեր հաշվարկներով տատանվում է 0.2-0.3-ի սահմաններում:

Մշակվել են նաև երաշխավորություններ հանրապետության տնտեսության նորամուծական զարգացման և սոցիալ-տնտեսական դինամիկայի այդ կարևոր գործոնի հաշվին ՀՆԱ-ի աճի տեմպի արագացման վերաբերյալ:

Տնտեսական զարգացման արդյունքները մեծապես պայմանավորված են հանրային կառավարման արդյունավետությամբ: Դրա գնահատման շրջանակներում արդյունքները և ծախսերը հաշվարկելու մեթոդական հարցերի շուրջ ծագում են խնդիրներ: Այս համակարգում ծախսերը միատարր չեն (ընթացիկ և երկարաժամկետ ծախսեր, կենդանի աշխատանք և նյութական ծախսեր), իսկ արդյունքները ևս բազմաբնույթ են (այդ թվում՝ սոցիալական ուղղվածության) և



հաճախ դժվար չափելի: Հանրային կառավարման գործունեության արդյունքները բազմաչափ են: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը գնահատվում է երկու տիպի ցուցանիշով՝ քանակական, որն առավել կիրառելի է տնտեսական արդյունավետության չափման նպատակով, և որակական, որը բնութագրում է ռազմավարական կառավարման գործունեության գիտական հիմնավորվածությունը և կառավարման մարմիններից ակնկալվող սոցիալական պահանջների բավարարվածության աստիճանը:

Կարևորվում է հանրային կառավարման ինչպես քանակական, այնպես էլ որակական արդյունավետության չափման մեթոդաբանության հիմնավորումը: Քանակական գնահատման հիմքում դրված է տնտեսական արդյունքների համեմատության սկզբունքը (մակրոմակարդակի համար՝ ՀՆԱ-ի ցուցանիշը, իսկ միկրոմակարդակի համար՝ առևտրային կամ այլ ծառայությունների ծավալը): Որակական արդյունավետության գնահատումը հիմնված է երկու գործոնի վրա: Առաջին՝ հանրային կառավարման օրենսդրական հիմքերը և կարգավորման մեխանիզմները: Այստեղ գնահատումը կարող է իրականացվել «այո» կամ «ոչ» բինար սկզբունքով կամ փորձագիտական գնահատականներով: Երկրորդ՝ կառավարման ռազմավարության իրականացումը և կառավարչական որոշումների հիմնավորվածությունը, որտեղ գնահատումը կատարվում է նպատակների և իրական արդյունքների շեղման հիման վրա:

Տեսական և գործնական նշանակության կարևոր խնդիր է բացահայտել, թե հանրային կառավարումն ինչպես է ներազդում հասարակական-տնտեսական զարգացման վրա,

քանակապես գնահատել այդ ազդեցությունը, այն պայմանավորող գործոնները, այսինքն՝ մոդելավորել հանրային կառավարում-արդյունքներ համակարգը, գտնել օպտիմալ լուծումների տարբերակներ: Նշված հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է հստակեցնել հանրային կառավարման արդյունքային բնութագրիչները և կառավարչական գործոնները: Թեմայի վերաբերյալ գրականության քննական վերլուծության, հանրային կառավարման մարմիններին վերապահված սահմանադրական գործառույթների և կառավարչական լծակների, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության դիտարկման հիման վրա առանձնացվել են պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման չորս արդյունքային բնութագրիչներ՝ ՀՆԱ, բնակչության մեկ շնչի հաշվով ապրանքների և ծառայությունների սպառման իրական ծավալ՝ ճշտված Զինի գործակցով, երկրի ներքին ու արտաքին, բնապահպանական և կիրենաձևվտանգության փաստացի ծախսեր և հարաբերական կայունություն, ժողովրդավարական ազատությունների աստիճան՝ փորձագիտական գնահատականներով: Իբրև կառավարչական գործոններ ընտրվել են աշխատողների թիվը կառավարման ոլորտում, բնագավառում կատարվող բյուջետային ծախսերը, կառավարչական որոշումների որակը, դրանց կատարման ապահովման կառուցակարգերի հուսալիությունը, հարկային բեռը, կառավարման մարմինների կողմից ապահովվող գրնաճը, ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքը կամ բանկային վարկի միջին տոկոսադրույքը, նորամուծական ծախսերը, պետական բյուջեից ծախսերը արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման համար, ներգրավված ներդրումները՝ ներդրումային միջավայրի բարելավման

շնորհիվ: Առաջարկվել է վեց քայլից բաղկացած ալգորիթմ երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման վրա հանրային կառավարման քանակական ազդեցության գնահատման և օպտիմալ կառավարչական որոշումների ընդունման տարբերակների ընտրության համար:

Հայ մտավոր մշակույթում հայ մտածողները մշտապես անդրադարձել են սահմանադրականության և պետական ու տարածքային կառավարման խնդիրներին: Արտահայտված գաղափարները և պատմական փորձը կամ պատմության դասերը հաճախ այսօր էլ արդիական են ու հարկ է պետականաշինության ասպարեզում դրանք հաշվի առնել: Այս առումով անդրադարձ է կատարվել հին և միջնադարյան Հայաստանում սահմանադրականության և հանրային կառավարման այլ խնդիրների լուծման պատմական փորձին, որոշ հայ մտածողների առավել արդիական գաղափարներին:

Հին և միջնադարյան Հայաստանում հայկական պետականությանը բնորոշ էր ժառանգական միապետությունը, թագավորն իբրև միապետ պետության գլուխն էր, ուներ օրենսդիր և գործադիր լիազորություններ, արքունիքը և աշխարհաժողովը կառավարման շտաբային մարմիններ էին, ոլորտային կառավարման համար ստեղծվել էին գործակալություններ, իսկ տարածքային կառավարումն իրագործվում էր նախարարների, քաղաքապետների և գյուղական համայնքների ղեկավարների միջոցով: Եկեղեցին իրագործում էր մեծն դատավարության և հոգևոր զարգացման գործառույթները: Պատմական Հայաստանում պետական ու տարածքային կառավարումն իրականացվել է ժամանակին համահունչ և պատշաճ մակարդակի սահմանադրականությամբ, հայ մտավոր մշակույթում կարևորվել և մշակվել են հանրային

կառավարման մեթոդաբանական սկզբունքներ, որոնք արտացոլվել են Արցախի և Ուտիքի թագավոր Վաչագանի «Կանոնական սահմանադրության» մեջ, «Կանոնագիրք Հայոց»-ում, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքերում», ավելի ուշ Հ. և Շ. Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ում և այլն:

Հանրային կառավարման հիմնախնդիրները դիտարկվել են նաև Ն. Շնորհալու և Մ. Նալբանդյանի աշխատություններում, որոնց խորհուրդները և երաշխավորությունները, մեր կարծիքով, հավիտենապես արդիական են:

Հայ մեծ մտածող, բանաստեղծ, հոգևոր երգերի հեղինակ, աստվածաբան, քաղաքական և կրոնական գործիչ Ներսես Շնորհալու արձակ ստեղծագործությունը՝ «Թուղթ ընդհանրականը», ստեղծվել է 1166 թվականին և 18-20-րդ դարերում վերահրատարակվել Սանկտ Պետերբուրգում, Վենետիկում, Կ. Պոլսում, Էջմիածնում, Երուսաղեմում, Անթիլիասում, Երևանում: Այն ուղղված է հայ ժողովրդին, հասարակության տարբեր խավերին (կրոնական գործիչներին, գյուղացիներին, արհեստավորներին, առևտրականներին, զինծառայողներին, կանանց), հոգևոր և աշխարհիկ իշխանավորներին (առաջնորդներին): Նշված ստեղծագործությունն ունի ոչ միայն պատմական, բանասիրական, աստվածաբանական, հասարակական-քաղաքական ուղղվածություն, այլև, ինչը շատ կարևոր է, բարոյակրթական նշանակություն մարդկանց և առաջնորդների բազմաթիվ սերունդների համար: Աստվածային պատվիրանների և ուղերձների միջոցով հեղինակն ստեղծում է հանրության համար նախընտրելի մարդու և ղեկավարի կերպարներ: Նրանց համար բնութագրական գծերից են.

- մարդու համար՝ քրիստոնեական հավատքին նվիրվածությունը, հետևաբար և նախապես ընտրված ճշգրիտ գաղափարին, արդարություն սեփական գործունեության մեջ, ազնվություն և նվիրվածություն, բարոյականություն, հայրենասիրություն, պարտականությունների կատարման նկատմամբ բարձր պատասխանատվություն,
- առաջնորդի համար՝ ծավալուն լիազորություններ, բարձր պատասխանատվություն, կադրային ճիշտ քաղաքականություն վարելու կարողություն (պաշտոնի նշանակել բարի, արդարամիտ, չկոռումպացված մարդկանց), օբյեկտիվ գնահատել ենթակաների գործունեության արդյունքները, կոլեկտիվներում աշխատողների համար ստեղծել բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ և այլն:

Մ. Նալբանդյանը հետազոտել է քաղաքացիական հասարակության կայացման, տնտեսական քաղաքականության սկզբունքների, կառավարության գործառնությունների և ազգերի ինքնորոշման իրավունքի փոխառնչությունները:

Իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հրապարակախոսական աշխատանքում Մ. Նալբանդյանը տվել է ազատության գաղափարի մեկնաբանությունը: Ազատության գաղափարը, ըստ նրա, ներառում է անձի, հայրենիքի, տնտեսական ազատությունը, և միայն ներքին ազատությամբ օժտված քաղաքացիները կարող են ձևավորել հարկադրանքից ազատ իշխանություն ու ստեղծել ժողովրդավարական պետություն:

Տնտեսական քաղաքականության հարցերում Մ. Նալբանդյանը կարևորել է գյուղատնտեսության, մշակող արդյու-

նաբերության, առևտրի փոխկապակցված զարգացումը, իսկ գնագոյացման և դրամաշրջանառության հարցերի լուծումը հարկ է որոնել առաջարկի և պահանջարկի փոփոխությունների կարգավորման ոլորտում:

Ավելի քան 150 տարի առաջ Մ. Նալբանդյանը հիմնավորել է, որ սերտորեն շաղկապված են ազգերի ինքնորոշման իրավունքը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Նա գտնում էր՝ ազգի ապագան, մասնավորապես պետականության կայացումը և զարգացումը պայմանավորված են ազգի, մարդու և տնտեսական խնդիրների լուծման նկատմամբ հոգատարությամբ:

# МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

## РЕЗЮМЕ

В современной экономической науке существует точка зрения, согласно которой рецептом преодоления неблагоприятного уровня социально- экономического развития некоторых стран современного мира – это трансформация экстрактивных политических институтов в инклюзивные, которые являются достаточно плюралистическими и централизованными. Они, распределяя власть среди широкого круга лиц, предотвращают создание сверхактивных экономических институтов с характерными для них отрицательными проявлениями.

Однако исторический опыт и логический анализ тенденций экономического развития доказывают, что политические институты, хотя и очень важные по своему назначению, не являются единственным фактором для обеспечения экономического развития. Демократия побеждает в более цивилизованных странах, так как политические институты являются результатом развития общественного сознания. В результате научно-технического прогресса, развития образования повышается цивилизационный уровень населения, возрастают политические институты, становятся инклюзивными, господствует партисипативное управление. Таким образом исходным пунктом преодоления бедности страны является непрерывный прогресс научно-образовательной системы и технологий. По этой логике стержнем стратегии социально- экономического развития РА должно быть обеспечение роста науки, образования и технологий и на этой базе будут возрастать перспективные отрасли обрабатывающей промышленности, интенсивно развивающий наукоемкое сельс-

кое хозяйство, экологически безопасный и завершающим циклом горнодобывающая промышленность, современные и конкурентные сферы услуг.

Для оценки экономической динамики важное значение имеют качественные характеристики экономического развития, в частности – характер роста и его структура, качество произведенной продукции и ее конкурентоспособность, отраслевая структура ВВП и обрабатывающей промышленности, прогрессивность экономической системы и принципы ее управления, степень равномерности распределения созданных в результате экономического роста благ между членами общества.

Рассматривая взаимосвязи между экономикой, наукой и образованием, выясняется, что доля обрабатывающей промышленности в 2018 г. в ВВП РА составила 11%, а в объеме ее продукции удельный вес наукоемких производств снизился до 4.2 %, вследствие чего деформировалась структура высшего образования – в общем числе студентов вузов стали преобладать учащиеся по гуманитарным специальностям (64.5%), снизился спрос на научно-конструкторские разработки.

Предлагается определенной стратегией способствовать развитию наукоемкой и трудоемкой, маломатериалоемкой производств точного машиностроения, что позволит со временем сделать прогрессивным структуру экономики, стимулировать развитие науки и технологического образования.

Чрезвычайно актуальны проблемы обеспечения технологического развития сельского хозяйства, а также создания и пуска национальной эффективной инновационной системы.

С этой точки зрения существенное значение имеет оценка инновационного потенциала РА. Представлены подходы и проблемы оценки инновационного потенциала. Анализируются реальные возможности оценки этого потенциала, которые основаны на существующей официальной статистике. Подсчитаны и представлены абсолютные и относительные показатели за 2010-



2015 гг., которые необходимы для расчета инновационного потенциала. Предложена модель оценки инновационного потенциала с помощью которой сделаны соответствующие расчеты. Также описана динамика инновационного потенциала РА за последние годы.

В контексте этой проблемы важное научно-практическое значение имеет методология оценки влияния научно-образовательной системы на объем и динамику ВВП. Оценка влияния науки и образования на динамику ВВП в РА произведена двумя следующими методологическими подходами:

- определено непосредственное влияние фактических реализованных услуг научнообразовательной системы через инвестиции в человеческий капитал, развитие научно-технических разработок за счет финансирования из всех источников (госбюджет, частное финансирование, гранты и т.д.) на темпы роста ВВП. По результатам проделанных расчетов прямое воздействие научнообразовательной системы на динамику ВВП за 1995-2013 годы в среднем составило 0,23% при среднегодовом росте ВВП на 7%;

- на основе методологии производственной функции Кобба-Дугласа и включением в модель показателей объемов образовательных и научно-технических услуг получены регрессионные модели зависимости динамики ВВП от капитала, численности занятых, объемов образовательных и научно-технических услуг. Коэффициент эластичности научнообразовательной системы по различным расчётам варьируется в пределах 0,2-0,3.

Предложены также рекомендации для инновационного развития экономики республики и ускорения темпов роста ВВП за счёт этого важного фактора социально-экономической динамики.

Результаты экономического развития во многом обусловлены эффективностью общественного управления. При оценке

эффективности общественного управления обычно возникают проблемы как по измерению результатов управленческой деятельности, так и по исчислению затрат. Последние разнородны (затраты живого труда, материалы, энергетические ресурсы, амортизационные отчисления, инвестиции), и не сопоставимы, а результаты очень разнородные, в том числе-социальные и трудно измеримые. В силу многогранности результатов управленческой деятельности для макро- и микро уровней многими авторами предлагается использовать два показателя эффективности: количественное – для оценки экономической (количественной) эффективности и качественный - для оценки научной обоснованности стратегического управления принятия и реализации управленческих решений. Рассмотрение различных моделей оценки эффективности общественного управления, позволяет обосновать своеобразную методологию измерения экономической (количественной) и качественной эффективности. Показатель количественной эффективности определяется сопоставлением экономических результатов (для макроуровни –ВВП, для организаций- объем продаж товаров или услуг) и совокупных затрат. Качественная эффективность определяется двумя показателями: 1 законодательные основы общественного управления и механизмы регулирования с помощью бинарного переменного (да, нет) и экспертными оценками, 2 обоснованность и реализация стратегии и управленческих решений-методом оценки отклонений от намеченных целей и задач.

С теоретической и практической точек зрения задача важного значения выяснить как влияет на общественно–экономическое развитие публичное управление, количественно оценить это влияние, выявить его обуславливающие факторы, смоделировать систему общественное управление – результаты, найти варианты оптимального управления. Для решения отмеченной проблемы прежде всего необходимо научно обоснованно уточнить результативные характеристики общест-

венного управления и управленческие факторы. На основе критического рассмотрения литературы по данной теме, а также с учетом конституционных функций и управленческих рычагов органов общественного управления и результатов анализа статистической информации были выделены четыре результативные характеристики государственного управления и местного самоуправления: ВВП, реальный объем потребления на душу населения товаров и услуг, уточненный коэффициент Джини, фактические затраты для обеспечения внутренней и внешней, а также экологической кибербезопасности страны и ее относительная устойчивость, степень демократических свобод на основе экспертных оценок, в качестве управленческих факторов отобраны: численность работников в сфере общественного управления, бюджетные затраты в этой области, качество управленческих решений, надежность механизмов обеспечения их выполнения, налоговое бремя, инфляция, регулируемая органами управления, средняя процентная ставка банковского кредита, инновационные затраты, расходы из госбюджета на создание производственных и социальных инфраструктур, привлеченные инвестиции в результате совершенствования инвестиционной среды. Предложен шестишаговый алгоритм для количественной оценки влияния общественного управления на экономическое и социальное развитие и выбора оптимальных вариантов управленческих решений.

В армянской духовной культуре армяне-мыслители очень часто рассматривали проблемы конституционности, а также государственного и территориального управления. Разработанные идеи и исторический опыт или уроки истории очень часто актуальны и сегодня, поэтому необходимо, по возможности, их учесть в государственном строительстве. С этой точки зрения рассмотрены исторический опыт обеспечения конституционности и общественного управления в древней и средневековой

Армении, а также наиболее актуальные идеи некоторых армянских мыслителей.

В древней и средневековой Армении для армянской государственности характерна была наследственная монархия, главой государства был король, который имел законодательные и исполнительные полномочия, а функции штабных (совещательных) органов исполняли царский дворец и народное вече, также были созданы функциональные органы (агентства) для управления отдельными сферами общественно-государственной жизни, а функции территориального управления выполняли нахарары (крупные феодалы), градоначальники и руководители сельских общин. Церковь исполняла функции духовного развития и судопроизводства.

В исторической Армении государственное и территориальное управление осуществлялось в духе времени и достойного уровня конституционностью. В древней армянской духовной культуре придали особое значение методологическим принципам общественного управления, поэтому существенные из них были разработаны и отражены в „Канонической конституции” царя Арцаха Вачагана, „Армянской книге канонов”, „Судебниках” М. Гоша и С. Спарапета, „Западне славы” А. и Ш. Шаамирянов и т.д.

Проблемы общественного управления были рассмотрены также в трудах Н. Шнорали и М. Налбандяна, наставления и рекомендации которых, на наш взгляд, являются вечно актуальными.

Прозаическое произведение великого армянского мыслителя, поэта, сочинителя духовных песен, теолога, политического и церковного деятеля Нерсеса Шнорали "Соборное послание" было создано 1166 году и многократно было переиздано в

XVIII-XX веках в Санкт-Петербурге, Венеции, Константинополе, Эчмиадзине, Иерусалиме, Антилииасе, Ереване. Оно обращено к армянскому народу, разным слоям общественности (священнослужителям, крестьянам, ремесленникам, коммерсантам, военнослужащим, женщинам), духовным и светским властителям (лидерам). Данное произведение имеет не только историческую, филологическую, теологическую, общественно-политическую направленность, но и, что очень важно, нравственно-образовательное значение для многих поколений людей и лидеров. Посредством божественных заповедей и наставлений автор создает потенциально предпочитаемые для общества образы человека и руководителя. Для них характерными чертами являются:

- для человека-преданность христианской вере, следовательно и изначально принятой верной идее, справедливость в своей деятельности, честность и приличность, нравственность, патриотизм, высокая ответственность при выполнении своих обязанностей;

- для лидеров – объемные полномочия, высокая ответственность, умение вести верную кадровую политику (назначать на должности людей добрых, справедливых, некоррумпированных), объективно оценивать результаты деятельности подчиненных, в коллективах создавать благоприятную социально-психологическую атмосферу для сотрудников и т.д.

М. Налбандян занимался исследованием вопросов взаимосвязи становления гражданского общества, принципов экономической политики, функций правительства и права наций на самоопределение.

В своем публицистическом труде "Земледелие как верный путь" М. Налбандян дал толкование понятия свободы.

В понятие свободы он включал свободу личности, свободу родины, экономическую свободу, и лишь обладающие внутренней свободой' граждане могли, на его взгляд, сформировать

власть, свободную от насилия и создать демократическое государство.

В вопросах экономической политики М. Налбандян придавал важное значение взаимосвязанному развитию сельского хозяйства, обрабатывающей промышленности, торговли, а решение задач ценообразования и денежного обращения, на его взгляд, следует искать в сфере регулирования изменений предложения и спроса.

Еще 150 лет назад М. Налбандян усмотрел тесную взаимосвязь между правом наций на самоопределение, демократией и защитой прав человека. Он считал, что будущее нации, в частности, становление и развитие государственности, обусловлено заботой о нации, человеке и решением экономических задач.

# METHODOLOGICAL PROBLEMS OF PUBLIC MANAGEMENT

## SUMMARY

In modern economics, there is an approach, used in some countries, that as prescription for overcoming unfavorable socio-economic development is considered the transformation of hyperactive political institutions into inclusive ones, characterized by pluralism and centralization where the power belongs to the wide range of individuals, which prevents the creation of hyperactive economic institutions with typical negative manifestations. However, historical experience and a logical analysis of economic development trends, prove that political institutions are important, but not the only factor for ensuring economic development. Democracy wins in the most civilized countries, as political institutions are the result of the development of public consciousness. Due to scientific and technical progress and development of education, the civil level of the population is rising, political institutions are developing and becoming inclusive, participatory governance becomes possessive. Therefore, the starting point for overcoming poverty is the continuous advancement of the scientific and educational system and technology. Based on this, the axis of socio-economic development strategy could be the provision of scientific, educational and technological development, which will lead to the development of prospective industries, intensely developing science-based agriculture, ecologically safe mining industry with complete cycle, competitive and modern service.

In general, for assessing economic development qualitative characteristics are essential, the nature and structure of growth,

the quality and competitiveness of production, the structure of the GDP and the processing industry, economic system's performance and government principles, the degree of distribution equality among society's members.

Observing «economic-science-education» relationship, is mentioned, that for 2018 in the structure of GDP in Armenia, the share of the processing industry was 11 percent, while the share of scientific oriented output in the processing industry was 4.2 percent, as a result of which the structure of education was deformed. Students in the higher educational institutions were predominantly in the humanities (64.5 percent) and the demand for scientific and engineering specialties was decreased. Is suggested, to build a certain strategy for supporting knowledgeable and labor-intensive, low-cost precision machine-building production, that will make the structure of the economy more progressive and will stimulate the development of science and technology oriented education.

The main issues of technological development in agriculture, as well as the problems of creation and operation of an effective national innovation system are important.

In this regard, it is essential to assess the innovation potential in the Republic of Armenia. Current approaches of estimating innovation potential are presented as well as the obstacles. The real opportunities of estimating that potential are analyzed which are based on existing official statistics. The absolute and relative indicators for 2000-2015 that are necessary for calculation of innovation potential are presented. Estimation model is suggested based on which respective calculations are



done. In addition, the dynamics of innovation potential in RA was described for the last years.

In the context of this problem, the methodology of estimating the impact of the scientific and educational system on GDP growth and growth rate is of practical importance.

Assessing the impact of science and education on the dynamics of GDP in Armenia was done with two following methodological approaches:

The direct impact of educational and scientific services through investments in human capital and development of scientific-technical product, on the basis of funding from all sources (state budget, private financing, grants etc...) was determined. According to the results of calculations, the direct impact of scientific and educational system on the dynamics GDP for 1995-2013 was 0.23% with 7% average annual GDP growth.

Based on the methodology of Cobb-Douglas production function and inclusion of indices of educational and scientific-technical services in the model, regression dependences of GDP dynamics from the capital, number of employees, the volume of educational and scientific-technical services were obtained. The coefficient of elasticity for scientific and educational system on various estimates varies between 0.2-0.3.

In the paper are offered recommendations for innovative development of the republic's economy and acceleration of GDP growth rate due to this important factor of socio-economic dynamics.

The results of economic development are largely conditioned by the efficiency of public management. For the evaluation of effectiveness of public administration, usually arise

methodological problems in measuring the results of management activities and calculating costs. The costs are not homogeneous (labor and material costs, energy resources, depreciation deductions, investments), and the results are heterogeneous, including social and often difficult to measure. Because of multidimensional results of managerial activities, many authors suggest using two performance indicators: quantitative - to assess economic (quantitative) efficiency and qualitative - to assess the scientific validity of strategic management, and the degree of satisfaction of the social demands expected from the governing bodies.

Considering the different models for evaluating the effectiveness of public administration, we justify a peculiar methodology for measuring quantitative and qualitative efficiency. The indicator of quantitative efficiency is determined by comparing economic results (for macro levels - GDP, for organizations - the volume of sales or services) and total costs. Qualitative efficiency is determined by two indicators. First, legislative foundations of public management and mechanisms for regulating by using binary type variable (yes, no) and expert assessments. The second is the implementation of the management strategy and the soundness of management decisions, where the assessment is based on the deviation of the actual results from the objectives.

Identification and assessment of public management factors and impact on socio-economic development, the factors of influence it, i.e. modeling “public management-outputs” system and development of solutions is an issue of theoretical and practical importance. In order to solve the noted problem clarification of public administration and managerial factors is important. On the basis of a literature review around the topic, as well as taking

into account the constitutional functions and managerial levers of public administration bodies and the results of statistical analysis, 4 effective characteristics of public administration and local self-government were identified. GDP, per capita consumption of goods and services adjusted by Gini coefficient, actual costs for ensuring internal and external, as well as environmental and cyber security and relative stability, the degree of democratic freedom. Based on expert estimations, the following was selected as managerial factors: the number of employees in the field of public administration, budget expenditures in public administration, the quality of managerial decisions, the reliability of mechanisms to ensure decision implementation, the tax burden, and inflation of estimated by the authorities, the average interest rate of bank credit, innovation spending, expenditures from the state budget for the creation of industrial and social infrastructure, attracted resources by improving investment environment. A six-step algorithm is proposed for quantitative assessment of the impact of public administration on economic and social development and for the selection of optimal options for management decisions.

In the Armenian intellectual culture, Armenian thinkers have always referred to the issues of constitution and state and territorial governance. Articulated ideas and historical experience or lessons of history are still relevant today and need to be taken into account for state building. In this respect, a reference has been made to the historical experience of constitutional and other issues of public administration in ancient and medieval Armenia and to the ideas of some Armenian thinkers.

In ancient and medieval Armenia, Armenian statehood was characterized by hereditary monarchy, the king was the head of a

monarchic state, had legislative and executive powers, the royal court and the conference were governing bodies, agencies for sectorial governance were established, and territorial governance was exercised by ministers through mayors and heads of rural communities. The Church fulfilled the functions of great trial and spiritual development. In historical Armenia, state and territorial governance has been constituted in a timely and proper manner. In the Armenian mental culture, the principles of public administration have been highlighted and elaborated in the Canonical Constitution of Artsakh by king Vachagan from Utick, in the “Code of Armenia” («Կանոնական սահմանադրության») by Mkhitar Gosh and Smbat Sparapet's "Judgment book" («Դատաստանագրքերում»), Sh. Shahamiryans' “Glorified ambush” («Որոգայթ փառաց»), etc.

The problems of public administration have also been considered by N. Shnorhali In the works of M. Nalbandyan, whose advice and recommendations are, in our opinion, timeless.

The “General paper” («Թուղթ ընդհանրականը») of great Armenian thinker, poet, theologian, author of spiritual songs, political and religious figure Nerses Shnorhali, was written in 1166 and during 18th and 20th centuries was republished in St. Petersburg, Venice,. Constantinople, Echmiadzin, Jerusalem, Antelias, Yerevan. It is aimed to the Armenian people, different parts of society (religious servers, peasants, craftsmen, merchants, soldiers, women), spiritual and secular authorities (leaders). Mentioned work has not only a historical, philological, theological, social-political orientation, but also a very important moral character for leaders and many generations. Through divine commandments and messages, the author creates the images of a

person and a leader of the community. The following are characteristic lines for them:

- for the human being: the devotion to the Christian faith, and therefore to the pre-selected correct idea, justice in own activities, honesty and devotion, morality, patriotism, high responsibility for the performance of duties,

- for the leader: extensive authority, high responsibility, ability to conduct sound human resources (appointing good, fair, non-corrupt people), objectively assessing the performance of subordinates, creating a favorable social-psychological environment for staff members, and so on.

M. Nalbandian explored the interplay between the principles of civil society, economic policy principles, government functions, and the right of nations to self-determination.

In his publicity work "Agriculture as a Straight Path" M. Nalbandian gave a comment on the idea of freedom. According to him, the idea of freedom encompasses the individual freedom, the homeland, economic freedom and only free citizens can form a coercive free government and create a democratic state.

Concerning economic policy, Nalbandyan attached importance to the interdependent development of agriculture, processing industry, trade, while solving the issues of pricing and money circulation is based on supply and demand regulations.

More than 150 years ago M. Nalbandian considered, that the right of nations to self-determination, democracy and protection of human rights are closely intertwined. He believed that the future of the nation, in particular the establishment and development of statehood, was conditioned by the concern for the solution of national, human and economic problems.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 4, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 634 էջ:
2. Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, ՀՀ ԳԱԱ ակադ. Յու. Մ. Սուվարյանի խմբ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 192 էջ:
3. Աղուզումցյան Վ., Միքայել Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները, Ե., 1955, 134 էջ:
4. Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, (մ.թ.ա. IX-մ.թ. XIX դդ), Ե., 2001, 672 էջ:
5. Բաղդասարյան Է. Մ., Ներածություն. – Ն. Շնորհալի, Թուրթ ընդհանրական, աշխատասիրությամբ Է. Մ. Բաղդասարյանի, Ե., «Գիտություն», 1995, էջ 8-50:
6. Դանիելյան Կ., Հայ գյուղագրությունը XIX դարում (1860-1890), Ե., 1973, 570 էջ:
7. Դարոնյան Ս., Միքայել Նալբանդյան (Կյանքը և գործունեությունը), Ե., 1979, 382 էջ:
8. Զուրաբյան Ս. Շ., Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր (XVIII դարի վերջին քառորդ – XIX դարի 90-ական թվականներ), Ե., 1959, 229 էջ:
9. Ինճիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ. Վենետիկ, 1835:
10. Կրկյաշարյան Ս. Մ., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.), Ե., «Լուսակն», 2005, 312 էջ:
11. Կանոնագիրք Հայոց, գիրք Ա, էջ 372, 373:

12. Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հ. 8, Ե., 1982, 720 էջ:
13. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1976, 1023 էջ:
14. Հակոբյան Գ., Ներսես Շնորհալի, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964, 300 էջ:
15. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Ե., «Հայպետհրատ», 1955, 598 էջ:
16. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Ե., «Հայպետհրատ», 1956, 616 էջ :
17. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1982, 540 էջ:
18. Մաթևոսյան Ռ. Ի., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, 295 էջ:
19. Մենեջմենթ, Յու. Մ. Սուվարյանի ընդ. խմբ., Ե., «Տնտեսագետ», 2016, 672 էջ:
20. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., «Հայաստան», 1990, 321 էջ:
21. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, 2001, 242 էջ:
22. Յու. Լի Կուան, Երրորդից առաջին աշխարհ: Մինգապուրի 1965-2000 թթ. պատմությունը, Ե., 2016, 1276 էջ:
23. Նալբանդյան Մ., Երկեր, Ե., 1985, 632 էջ:
24. Ներսես Շնորհալի (հոգվածների ժողովածու), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 236 էջ:
25. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991, 124 էջ:
26. «Որոգայթ փառաց», Ե., «Հայաստան», 2002, 298 էջ:

27. Սարգսյան Ս., Մարդու հիմնախնդիրը XIX դարի հայ փիլիսոփայական և հասարակական մտքում, Ե., 2001, 352 էջ:
28. Սուվարյան Յու. Ս., Հարությունյան Վ. Լ., Խաչատրյան Վ. Վ., Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը, Ե., «Գիտություն», 2011, 150 էջ:
29. Սուվարյան Յու. Ս., Հարությունյան Վ. Լ., Խաչատրյան Վ. Վ., Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Ե., «Գիտություն», 2013, 232 էջ:
30. Սուվարյան Յու. Ս., Տնտեսություն, գիտություն, կրթություն, Ե., «Գիտություն», 2014, 370 էջ:
31. Սուվարյան Յու. Ս., Սարգսյան Վ. Ա., Հանրային կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, թ. 1:
32. Սուվարյան Յու. Ս., Հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր, Ե., ԱՌՏ, 2004, 64 էջ:
33. Սուքիասյան Ա. Գ., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1978, 392 էջ:
34. Аджемоглу Д., Робинсон Дм. А. Почему одни страны богатые, а другие бедные.
35. Алексеев С. Г., Экономические проблемы регионов и отраслевых комплексов, Проблемы современной экономики, М., N 2 (30), 2009
36. Бахтизин А. Р., Акинфеева Е. В. Сравнительные оценки инновационного потенциала регионов Российской Федерации , Проблемы прогнозирования. М., 2010. № 3. С. 73–81.
37. Глазьев С. Ю. Становление шестого технологического уклада. – В кн.: Яковец Ю. В. , Фарах С. Н. Диалог и



- партнерство цивилизаций, Москва-Казань, 2018, էջ 200-213
38. Государство в меняющемся мире. Отчет о мировом развитии, М., Прайм-ТАСС, 1997, 322 стр.
  39. Гулунян Х., Микаел Налбандян, М., изд. Знание, 1955, 40 стр.
  40. Кокурин Д.И. Инновационная деятельность. М.: Экзамен, 2001.
  41. Кравченко С.И., Кладченко И.С. Исследование сущности инновационного потенциала // Науч. труды Донецкого национального технического университета. Сер.: экономическая. Вып. 68. Донецк: ДонНТУ, 2003.
  42. Кунц Г., О’Доннел С. Управление: Системный и ситуационный анализ управленческих функций, т. 1, М., Прогресс, 1981, 406 стр.
  43. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента, М., Дело, 2000, 704 стр.
  44. Дафт Р. Л. Менеджмент, СПб, Питер, 2006, 864 стр.
  45. Макиавелли Н., Государь, история Флоренции, М., ЭКСМО, 2010, 432 стр.:
  46. Мэнкью Н. Г. Принципы экономики, СПб, Питер-Ком, 1999, 784 стр.:
  47. Политология, М., изд-во Проспект, 2005, 235 стр:
  48. Спарамет С. Судебник, Е., Айпетрат, 1958, 208 стр.
  49. Стиглиц Дж. Нечестная экономика, в ж. “В мире науки”, №1-2, 2019, էջ 35-91:
  50. “100 великих научных открытий”, Харьков, 2018, 188 էջ:
  51. Суварян Ю. М. Управление ростом производительности труда в промышленности, Е., Айастан, 1987, 228 стр.:
  52. Теория государства и права, М. Зерцало-М, 2001, 304 стр.

53. Чиркин В. Е., Государственное управление М. Юрист, 2001, 320 стр.:
54. Узяков М.Н., Сапова Н.Н., Херсонский А.А. Инструментарий макроструктурного регионального прогнозирования: методические подходы и результаты расчетов // Проблемы прогнозирования. М., 2010. № 2.
55. Чекулина Т. А., Тамахина Е. А. Инновационный потенциал региона: содержательные особенности и теоретические аспекты исследования. Вестник ТГУ. 2011. № 2 (94).
56. Шляхто И.В. Оценка инновационного потенциала региона // Управление общественными и экономическими системами. М., 2007. № 1.
57. Шумпетер Й. Теория экономического развития. Капитализм, социализм и демократия, М., ЭКСМО, 2007, 864 стр.
58. Andersen K. N., H.Z. Henriksen, R. Medaglia, J.N. Danzinger, M.K. Sannarnes and M. Enemærke (2010), “Fads and Facts of E-Government: A review of Impacts of E-government (2003-2009)”, *International Journal of Public Administration* 33 (11): 549-576.
59. Acemoglu, D. and Robinson, J. (2006) “Overview” in Weingast, Barry R. and Wittman, D. (Ed.) *The Oxford Handbook of Political Economy*, Oxford: Oxford University Press
60. Aschhoff, B. and W. Sofka (2009), “Innovation on demand – Can public procurement drive market success of innovations?”, *Research Policy* (38): 1235-1247.
61. Afonso A., Schuknecht L., Tanzi V., (2003), “Public sector efficiency: an international comparison”, European Central Bank, Working Paper No. 242/July 2003, pp.10-12.

62. Aschhoff, B. and W. Sofka (2009), “Innovation on demand – Can public procurement drive market success of innovations?”, *Research Policy* (38): 1235-1247
63. Bianca Buligescu UNU-MERIT Maastricht University Hugo  
Hollanders UNU-MERIT Maastricht University
64. Can Democracy be measured? By Odd R. Hunnes,  
<https://bravo.hivolda.no/hivolda-xmlui/bitstream/handle/11250/2467236/Chapter%2013%3A%20Can%20Democracy%20be%20measured%20/%20Odd%20R%20Hunnes?sequence=17&isAllowed=y>
65. Claire Nauwelaers, A. Reid Methodologies for the evaluation of regional innovation potential / Claire Nauwelaers, A. Reid// *Scientometrics*. 2005. Volume 34. Number 3. p. 497–511.
66. Crespi, G., A. Maffioli, P. Mohnen and G. Vásquez (2011), “Evaluating the Impact of Science, Technology and Innovation Programs: A Methodological Toolkit”, Inter-American Development Bank Technical Notes, IDB-TN-333: 1-88
67. Dani Rodrick, *One Economics, Many Recipes: Globalization, Institutions and Economic Growth*, Princeton / Oxford 2007 Princeton University Press, 278 p.,  
<http://assets.press.princeton.edu/chapters/i8494.pdf>
68. Daniel J. Mitchell, *The Impact of Government Spending on Economic Growth*, Backgrounder. executive summary, No1831, p. 1-18.
69. Drucker, P. (2001), *Eficienya factorului decizional* (“The efficiency of the decision makers”), Bucuresti: Editura Destin.
70. Evaluation of public administrations added value to the Lisbon strategy goals (UPDATE 2010)<sup>1</sup>
71. Government’s Role in Managing the Economy,  
[https://saylordotorg.github.io/text\\_exploring-business-v2.0/s05-07-government-s-role-in-managing-.html](https://saylordotorg.github.io/text_exploring-business-v2.0/s05-07-government-s-role-in-managing-.html)
72. GREILING, D. Performance measurement in the public sector: the German experience. *International Journal of Productivity*

- and Performance Management. Vol. 54, No. 7, 2005, pp. 551-567. ISSN 1741-0401.
73. Hall D., Lobina E. (2005), “The relative efficiency of public and private sector water”, PSIRU, Business School, University of Greenwich, September 2005, p. 3.
  74. Julia Lane Jason Owen-Smith Rebecca Rosen Bruce Weinberg, (2014)New Linked Data on Research Investments: Scientific Workforce, Productivity, and Public Value No. 8556 October 2014
  75. Kalcsú Zoltán, Magyar Dániel. Regional Situation Analysis on the Innovative potential of the West — Transdanubian Region. / South East Europe Transnational Cooperation Programme «Jointly for our common future» Project FIDIBE — «Development of Innovative Business Parks to Foster Innovation and Entrepreneurship in the SEE Area». Written by Pannon Novum Nonprofit Ltd. on behalf of West Pannon Regional Development Company. November 2009.
  76. Kalinina, Alla; Petrova, Elena; Buyanova, Marina Efficiency of public administration and economic growth in Russia : empirical analysis, 2015, <https://www.um.edu.mt/library/oar/handle/123456789/2980>, Vol 18 No 3. pp 77-90.
  77. [Kuotsai Tom Liou](#)The role of government in economic development: the chinese experience, [International Journal of Public Administration](#) , Volume 21, 1998 - [Issue 9](#), p. 1005-1022.
  78. [Kurt Zorn](#), The economic perspective on public administration, [International Journal of Public Administration](#) , Volume 21, - [Issue 6-8](#), p. 1119-1136
  79. Lennart Elg, Innovations and new technology - *what is the role of research? Implications for public policy*, VINNOVA Analysis VA 2014:05, Swedish Governmental Agency for Innovation Systems April 2014

80. Mandl U., Dierx A., Ilzkovitz F., (2008), "The effectiveness and efficiency of public spending", European Commission, Directorate General for Economic and Financial Affairs, pp. 3-4.
81. Liou, Kuotsai Tom GOVERNANCE AND ECONOMIC DEVELOPMENT: CHANGES AND CHALLENGES, International Journal of Public Administration Volume 24, 2001 - [Issue 10](#), p. p. 1005-1022
82. Michael Keating, Public Management Reform and Economic and Social Development *OECD 2001*, *42* 141-212:
83. [Murat Onder](#), [Fatih Ulasan](#), The Impact of Public Administration on Economic Growth: The Case of South Korea, International journal of leadership education and mahagement studies, No1, p.23-43.
84. Neely Y, A.D., Mills, J.F., Gregory, M.J., Platts, K.W. Performance measurement system design – literature review and research agenda. International Journal of Operations and Production Management, Vol. 15, No. 4, 1995, pp. 80-116. ISSN 0144-3577.
85. Paraskevopoulou, E. (2012), "Non-technological regulatory effects: Implications for innovation and innovation policy", *Research Policy* 41 (6): 1058-1071.
86. Profiroiu, M., Profiroiu, A.: "Cadrul de analiza a performantelor sectorului public" ("The analysis of public sector performances"), In *Economie teoretica si aplicata*, pp. 44-47.
87. Przeworski, A. (1999) "Minimalist Conception of Democracy: A Defense." In *Democracy's Value* edited by Shapiro, I. and Hacker-Cordon, C. Cambridge: Cambridge University Press, p.12-17
88. Przeworski, A.; Alvarez, M.; Cheibub, J. A.; and Limongi, F. (2000) *Democracy and Development: Political Institutions and*

- Well-Being in the World, 1950-1990*. New York: Cambridge University Press, 340 p. pp.142-179
89. Robert K. Cunningham, Why Measuring Security Is Hard, Massachusetts Institute of Technology, IEEE Security and Privacy Magazine · July 2010, 8(4) pp.46-54
  90. *Ruby Sandhu-Rojon* Selecting Indicators for impact evaluation, *UNDP*
  91. The Economic and Social Impact of Public Administration Europeanization, [https://mpa.ub.uni-muenchen.de/24267/1/MPRA\\_paper\\_24267.pdf](https://mpa.ub.uni-muenchen.de/24267/1/MPRA_paper_24267.pdf)
  92. Vladimir K Teles, Carlos Pereira, Are Political Institutions Substitutes for Democracy? A Political Economy Analysis of Economic Growth, Brazilian review of econometrics, vol 3 No1, p.3-25
  93. World Bank (2004): *World Development Indicators* 2004. World Bank, Washington DC.
  94. Windrum, P. (2008), “Innovation and entrepreneurship in public services”, in: Windrum P. and P. Koch P (ed.), *Innovation in Public Sector Services*, Edward Elgar, Cheltenham
  95. Wren, C. and D.J. Storey (2002), “Evaluating the effect of soft business support upon small firm performance”, *Oxford Economic Papers* 54(2):334-365.
  96. Wright, G., Nemec, J.: *Management veřejné správy: teorie a praxe*. Prague: Ekopress, 2003. ISBN 80-86119-70-X.
  97. [www.armstat.am](http://www.armstat.am)
  98. <https://www.fraunhofer.de>
  99. <http://bibliotecadigital.fgv.br/ojs/index.php/bre/article/view/26290/25354>
  100. <https://studfiles.net/preview/3847102/page:7/>

**ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒ. Մ., ՍԱՐԳՍՅԱՆ Վ. Ա.,  
ՍՈՒՎԱՐՅԱՆ Ա. Ս.**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

**МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ  
ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ**

**METHODOLOGICAL PROBLEMS OF  
PUBLIC MANAGMENT**

Հրատ. խմբագիր՝ Ազատուհի Սահակյան  
Համակարգչային շարվածքը և էջադրումը՝  
Ալինա Մելքումյանի

Հրատ. պատվեր № 976  
Հանձնված է արտադրություն՝ 22.11.19  
Չափսը՝ 60 x 84<sup>1/16</sup>, 15 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24: